

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИМСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LINGUISTICS


ԼԵԶՈՒ
ԵՎ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

1 (1 3)

2 0 1 5



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր՝ Համբարձումյան Վ. Գ.

Խմբագրական խորհուրդ՝

Ավետիսյան Յու. Ս., Բարդակչյան Գ. (ԱՄՆ), Բարլեզիզյան Ա. Կ.,
Բրուտյան Լ. Գ., Եզեկյան Լ. Ե., Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Ա.
Հ. (Շվեդիա), Խաչիկյան Մ. Լ., Կատվալյան Վ. Լ., Կորտլանդտ Ֆ.
(Նիդերլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ., Հովհաննիսյան Ն. Գ. (գլխավոր
խմբագրի տեղակալ), Հովսեփյան Լ. Ս., Մոհամմադի Մ. Ս. (Իրան),
Սարգսյան Ա. Ե., Սարգսյան Մ. Ա. (պատ. քարտուղար), Սաքայան Դ. Գ.,
(Կանադա), Սիմոնյան Ն. Մ. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-
Մերկերյան Ռ. (Ֆրանսիա), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия:

Аветисян Ю. С., Бардакчян Г. (США), Барлезизян А. К., Брутян Л. Г., Езекиан
Л. К., Катвалян В. Л., Мохаммади М. М. (ИРИ), Кортландт Ф. (Нидерланды),
Оганесян Л. Ш., Оганесян Н. Г. (заместитель главного редактора), Сакаян
Д. Г. (Канада), Саргсян А. Е., Саргсян М. А. (ответственный секретарь),
Симонян Н. М. (заместитель главного редактора), Тер-Меркерыан Р.
(Франция), Тонапетян-Демопулос А. (Франция), Трагут Я. (Австрия),
Хачатрян А. А. (Швеция), Хачикийан М. Л.

Chief Editor Vaszgen Hambardzumyan

Editorial Board:

Avetisyan Yu. S., Bardakchyan G. (USA), Barlezizyan A. K.,
Brutyan L. G., Ezekyan L. E., Khachatryan A. H. (Sweden),
Khachikyan M. L., Hovhannisyan L. Sh., Hovhannisyan N. G.
(deputy chief editor), Katvalyan V. L., Kortland F.
(Nidherlands), Mohammadi M. M. (Iran), Sargsyan A. E.,
Sargsyan M. A. (editorial secretary), Sakayan D. G. (Canada),
Simonyan N. M. (deputy chief editor), Ter-Merkeryan R.
(France), Donabédian-Demopoulos A. (France), Tragut J.
(Austria).

ISBN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը տասնամյակներ շարունակ գիտական իր ներդրումն է ունեցել հայերենի ուսումնասիրման և ճանաչելիության բնագավառում: Այդ գործում իր ավանդն է բերել լեզվաբանների առնվազն երեք սերունդ:

Բավական է հիշել Գ.Ղափանցյանի և Ա. Ղարիբյանի, առանձնապես Գ. Ջահուկյանի ներդրումը, որ իրենց գիտական խոր իմացությամբ և կազմակերպական անսպառ եռանդով ինստիտուտը բարձրացրին ոչ միայն նախկին միութենական, այլև առհասարակ միջազգային ճանաչման մակարդակի:

Այսօր ինստիտուտն ունի իր խնդիրները՝ ըստ ամենայնի շարունակել ավանդույթը և նախկինի պես առաջ տանել հայերենը՝ որպես ակադեմիական գիտություն:

Լեզվի պետական կարգավիճակը բարձրագույն արժեք է ամեն մի ժողովրդի համար: Հայերենի նման ձեռքբերումը հնարավորություն է նրանով ստեղծված մշակույթը (գրավոր աղբյուրները՝ մատենագրություն, վիմագրություն և այլն), նոր ստեղծվելիքը հոգածաբար պահպանելու և ըստ ամենայնի ուսումնասիրելու, այսինքն՝ գիտական նոր մոտեցումներով և խորությամբ քննելու, այլ մշակույթներին հավասար պատվանդանի բարձրացնելու համար:

Մեկ տասնամյակ է անցել, ինչ իր երկրային կյանքն ավարտել է ինստիտուտը չորս տասնամյակից ավելի անընդմեջ ղեկավարած ակադ. Գ. Ջահուկյանը: Նա գիտական ղեկավար էր զգալի թվով ասպիրանտների, որոնք այսօր ճանաչված լեզվաբաններ են, գրեց բազմաթիվ աշխատություններ, որոնց հիմնական մասը սեղանի գիրք է հայագիտությամբ զբաղվողներիս համար, առանձնացրեց հայերենի ուսումնասիրման նոր բնագավառներ, որոնք ներկայումս ունեն առանցքային նշանակություն: Նա մշակել է հայերենի և այլ հին լեզուների համեմատական քննության իր տեսությունը, ունեցել է ուրույն հայացքներ հայերենի և հնդեվրոպական, այլև մյուս լեզուների առնչությունների վերաբերյալ, հայոց գրական լեզվի պատմության, հայերենի և նրա բարբառների մասին, որոնք մեր օրերում ևս բավականին կենսունակ են, ուստի հիմք են հանդիսանում նորագույն ուսումնասիրությունների համար:

Այս տարի հոբելյանական է մեծ ուսուցչի կյանքի և գիտական գործունեության առումով: 1945 թ., երբ գիտական ասպարեզ մտավ մեծ լեզվաբանը, անցել է 70 տարի, որի ընթացքում հայերենագիտությունը հասել է աննախադեպ բարձունքի: Դրանում մեծ է Գ. Ջահուկյանի ներդրումը, և պատահական չէ, որ Լեզվի ինստիտուտը վերջին 10 տարիներին անընդմեջ կազմակերպում է գիտական հավաքներ՝ «Ջահուկյանական ընթերցումներ» անվանումով, որոնք մի տեսակ վերածվում են գիտական հաշվետվության, այլև դառնում են ծրագիր հետագա անելիքների՝ անկախության այս նպաստավոր պայմաններում պետական լեզու հայերենի՝ ըստ ամենայնի քննության և նրանում դեռևս չբացահայտված արժեքների վերհանման առումով:

Լեզվի ինստիտուտում այսօր ավանդական են դարձել նաև հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպումը, հայերենագիտության բնագավառում մեծ վաստակ ունեցած լեզվաբանների հոբելյանական տարիների նշումը: Հատկանշական է, որ տարեկան գիտաժողովներ են տեղի ունենում նաև երիտասարդ լեզվաբանների շրջանում՝ «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական կոնֆերանս» անվանումով, որն, ինչ խոսք, դառնում է լավագույն մասնագետի պատրաստման փորձատեղի:

Գիտական նկատելի գործունեության վկայություն են ինստիտուտի հրապարակումները՝ մենագրություններ, ժողովածուներ, հոդվածներ, զեկուցումների թեզիսներ, որոնց մատենագիտական ցանկը ամեն տարի, կարելի է ասել, մի քանի տասնյակից անցնում է:

Վերջապես, գիտական հանդես («Լեզու և լեզվաբանություն») ունենալու գաղափարն առաջ քաշել, հետամուտ լինել և իրականացման նախաձեռնություն հանդես բերել (նաև Գ. Ջահուկյանի հետ). այս ամենը նոր ժամանակների ձեռքբերում է, հայերենի նկատմամբ լավագույն և մշտական հոգածության դրսևորման հավաստիք: Լեզվի ինստիտուտն այս քայլը նախկինում երազային կհամարեր կամ «ձեռք թափ տալուն» կարժանացներ, իսկ այսօր ազգային և պետական լեզու հայերենի նոր մասնագետներին համար հանդեսը կարևոր երևույթ է և հերթական այս համարով շարունակում է իր ճանապարհը:

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր. C T A T Ы N. A R T I C L E S

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՅՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ»- Ի ԼԵԶՎԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ (Բնագիրը և թարգմանությունը)

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկը առանձնահատուկ տեղ ունի V դարի հայ ինքնություն գրականության շարքում¹: Բովանդակային առումով այն նորություն էր: Աստվածաբանական-փիլիսոփայական հարցերի քննությունը, բնականաբար, ենթադրում են նաև լեզվական յուրահատկություններ:

Հայերենը դեռ չունեի փոքր ի շատե մշակված համապատասխան տերմիններ: Եզնիկը կարողացել է մի շարք գիտական հասկացություններ արտահայտել սովորական բառերով՝ վերջիններիս տալով նոր իմաստներ, միաժամանակ շրջանառության մեջ դնելով բոլորովին նոր գիտաբառեր:

Առաջին հերթին սա է Եզնիկի լեզվին բնորոշ հիմնական հատկանիշը, որով այն տարբերվում է V դ. այլ հեղինակների գործերից:

Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, Եզնիկի գրքի հիմնահարցը *գոյի, էության, է-ի* պարզաբանումն է. «Չկան դեռ գիտական որոշ տերմիններ, բայց Եզնիկը կարողանում է գտնել հարկավոր բառերը, երբեմն նույն նշանակության համար երկու-երեքը, օրինակ *բաղադրյալ* բառի համար գործածում է *յօղել, յօղուածոյ*»²:

Եզնիկ Կողբացու գրքի բովանդակության և լեզվական առանձնահատկություններին անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ³:

¹ *Եզնիկայ վարդապետի «Եղծ աղանդոց»*. Թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Ա. Աբրահամյանի, Ե., 1994:

² Մ. Աբեղյան, *Երկեր*, Գ, Ե., 1968, էջ 149, 152:

³ Նորագույն ուսումնասիրություններից հարկ է նշել Վ.Առաքելյանի «Եզնիկի լեզուն և ոճը» (Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Ե., 1981, էջ 117-136), Մ.Մինասյանը Եզնիկագիտությանը վերաբերող բազմաբնույթ դիտարկումներից զատ հրատարակել է Եղծ աղանդոցի քննական բնագիրը (Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1987, էջ 367-469: 1988,

Տերմիններ են դիտվում *մտաւոր, բանաւոր, պատճառ, պատճառաւոր* և այլ կարգի մի շարք բառեր:

Եզնիկի գրքում կան նաև մի շարք ժողովրդախոսակցական բառեր, որոնք մեր մատենագրության մեջ առաջին վկայություններն են⁴: «Եւ նշանս անտի տան, զի է երբէք՝ յորժամ յաճմունսն իցէ և լնլոյն, շուրջ զանօթովն ծանրանայ...» (III, Ը): *Նշանս տալ* բառակապակցությունը Նոր հայկազյան բառարանը (այսուհետև՝ ՆՀԲ) չունի: Ընդգծված նախադասության աշխարհաբար թարգմանությունն է «Եւ (իբրև) փաստարկ *մատնացույց* են անում այն...»:

Հայերենի որոշ բարբառներում էլ գործածական է այդ հարադրությունը, Ղարաբաղի բարբառում՝ մի շարք տարբերակներով՝ *նշանց, նըհաշ, նըհանչ, նըշանս (տալ)*⁵:

Եզնիկի վկայած օրինակը հուշում է, որ նախնականը *նշանս տալ*-ն է:

Պարսկերենում էլ կա *nišan dōdan* «ցույց տալ» հարադրությունը: *Նշան* բառը իրանական փոխառություն է: Գրաբարում և պարսկերենում նույնաձև և նույնիմաստ բառակապակցության առկայությունը կարելի է համարել կա՛մ որպես լեզվամտածողական ընդհանրություն, կա՛մ էլ նկատի առնելով *նշան*-ի իրանական ծագումը՝ *նշանս տալ*-ը դիտել որպես պատճենում. այս դեպքում Եզնիկի վկայությունը կարևորվում է միջին իրանական լեզուներում (պարթևերենում կամ միջին պարսկերենում) նշված լեզվական միավորի վերականգման և բառարանագրման առումով:

Բայոց-ը նույնպես եզակի վկայություն է (ՆՀԲ-ում միակ օրինակն է): «...զդուրս մեղուանոցացն յառաջ քան զցուրտն ականամոմով խնլոյ, և արջոյ՝ յառաջագոյն քան զձմեռն ի *բայոց* մտանելոյ» (II, ԺԸ): ՆՀԲ-ն բառը մեկնում է՝ «որջ կենդանեաց՝ մանաւանդ արջոց յաւուրս ձմերայնոյ»:

Վ.Առաքելյանը *բայոց*-ի մեջ տեսնում է *բայ* «քնել» իմաստը, «որը պահպանվել է օրորոցային դիմումի մեջ, բա յ-բա յ քնիր»⁶:

Էջ 10-45: 1990, էջ 79-126: 1991, էջ 127-193: 1992, էջ 139-187): Ա.Աբրահամյանի անգերագանցելի թարգմանության թվով 405 ծանոթագրությունները պարզաբանում են երկի բովանդակային և լեզվին առնչող էական հարցեր:

⁴ Մանրամասն տե՛ս Վ.Առաքելյան, նշվ. աշխ. էջ 121-124:

⁵ Տե՛ս Ա.Մարգարյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013, էջ 556:

⁶ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 122:

Այս բացատրությունը այնքան էլ համոզիչ չի թվում. Արմատական բառարանում բառը ստուգաբանված չէ: Ըստ Է. Աղայանի՝ բնիկ հնդեվրոպական բառ է՝ *bheu- արմատի *bheā->*bha- ձևից. «բնակարան, տուն» իմաստով... նույն արմատից կան բազմաթիվ բառեր ցեղակից լեզուներում»⁷: *Ի բայոց մտանելոյ*-ն թարգմանված է «քուն մտնել»:

Եզնիկի աշխատության երկրորդ գիրքը՝ «Եղծ Քեշին պարսից», վերաբերում է զրադաշտական կրոնի սկզբունքներին, որոնք, բնականաբար, հերքում, քննադատում է Եզնիկը՝ ելնելով քրիստոնեական ուսմունքի դիրքերից: «Եզնիկը պարսից կրոնի համար հավանորեն օգտվել է ն՝ բերանացի ավանդություններից, ն՝ մի գրավոր աղբյուրից, որ դեռ չի բացահայտված: Ուստի նրա հակաճառությունը մի թանկագին աղբյուր է Ջրադաշտական կրոնի համար»⁸: Անկախ աղբյուրների գրավոր թե՛ բանավոր լինելու հանգամանքից..., հայ իրականության մեջ Եզնիկը առաջինն էր, որ հայերենով իրազակեց հարևան ժողովրդի կրոնի մի շարք ելակետերի, աստվածությունների և կրոնական-հավատալիքային յուրահատկությունների մասին:

Ուշադրության արժանի է *Ջրուան* բառի մեկնությունը. «Մինչ չև բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարածք՝ որ յերկինս կամ յերկրի, Ջրուան ոմն անուն էր, որ *թարգմանի բախտ կամ փառք*» (II, Ա) (ընդգծումը մերն է- Լ.Հ.): Ընդգծված նախադասությունը Ա. Աբրահամյանը թարգմանել է «որ թարգմանվում է բախտ կամ փառք» (էջ 93)՝ ծանոթագրելով. «հայտնի չէ, թե Եզնիկն ի՞նչ աղբյուրի հիման վրա է նշում «բախտ կամ փառք» իմաստները: Եզնիկի երկի Չմյուռնիայի հրատարակության մեջ «անուն էր» արտահայտությունից հետո ավելացված է «այսինքն Արամազդ»: Դրանով հրատարակիչները հավասարության նշան են դրել Ջրվանի և Արամազդի միջև» (տե՛ս էջ 314, ծան. 233):

⁷ Է. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 36: Է. Աղայանի ստուգաբանությունը ընդունում է նաև Գ.Ջահուկյանը՝ հավելելով բառի բառակազմական-ձայնդարձային առանձնահատկությունների տարածքային բաշխման մասին նոր տվյալներ (Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 116, 160: Նույնի Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 116):

⁸ Մ.Աբեղյան, նշվ. աշխ., էջ 154:

Նույն ծանոթագրության մեջ Ա. Աբրահամյանը անդրադառնում է Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի ստուգաբանությանը, որոնց կարծիքով «զենդերենում *zrvan* նշանակել է ժամանակ, աստուծոյ վերագրվելով դարձել է հատուկ անուն»:

Ջրվան-ժամանակ կապը թերևս անուղղակի կերպով արտահայտված է Եզնիկի մեկ այլ վկայությամբ: Ժամանակը անսկիզբ է և անվերջ, հավիտենական է. բնականաբար, ըստ զրադաշտական կրոնի, Ջրվանն էլ այդպիսին է, բայց Եզնիկը հերքում է այդ թեզը. «Ջրուանն չէր մշտնջենաւոր, այլ յումեքէ եղեալ» (II, Դ): Այս կարգի դատողությունների դեպքում էլ դարձյալ չի բացահայտվում *Ջրվան-բախտ* աղերսը: Եզնիկն այդ կապին անդրադառնում է մի քանի անգամ. «Այլ թէ և բախտ ևս էր՝ որպէս ասենն՝ Ջրուանն, ապաքէն ուրուրք բախտ էր և ո՞վ էր արդեւք՝ ոյր բախտն էր: Ջի բախտ անձնաւոր ինչ չէ, այլ դէպք աջողութեան» (II, Զ): Վերոհիշյալ մեջբերման *որ ասենն* կապակցությունը հուշում է, որ Ջրվան-բախտ նույնությունը Եզնիկը գիտի իրանական սկզբնաղբյուրից: Շարունակելով այդ դատողությունների շարքը՝ Եզնիկը գտնում է, որ «Արդ եթէ բախտ էր Ջրուանն՝ չէր ինչ անձնաւոր, ուստի յայտ է՝ թէ բնաւ և էր իսկ ոչ Ջրուանն» (II, Զ): Այս համատեքստում էլ Կողբացին արտահայտում է իր նշանավոր փիլիսոփայական եզրահանգումը. «Մեծի ծաղու արժանի է. *զի չէրն չէին վասն չէին յաշտ առնէր*»: «Եւ մեծ ծաղրի է արժանի (այն), որ չեղածը չեղածին չեղածի համար զոհ էր մատուցում» (II, Ե):

Ջրադաշտական կրոնի կարևորագույն ելակետերից մեկը ճակատագրի (բախտի) յուրօրինակ աստվածացումն է, այն առաջնային է, մի փիլիսոփայություն, որը քրիստոնեությունը մերժում է: Ըստ Եզնիկի՝ «Մահվան համար սահմանված ճակատագիր Աստվածատուր գրքերում ոչ մի տեղ չենք գտնում, որովհետև մահվան ու կյանքի տերը կարող է և՛ կրճատել, և՛ երկարացնել իր հրամանը... ինչպես որ ջրհեղեղի ժամանակ ասաց՝ «Այս մարդկանց կյանքի օրերը թող լինեն հարյուր քսան տարի...» (II, ԺԳ):

Իրանական դիցաբանության մեջ այդ *տեղը* հենց Ջրվանն էր՝ ճակատագիր-աստվածը: «Երկրային բոլոր գործերը առաջանում են

ճակատագրի կանխորոշմամբ... որը Ջրվանն է՝ հզոր և մշտնջենական կառավարիչը»⁹:

Ավելորդ չենք համարում նշել, որ baxt բառի արմատն է իրանական bag/baθ-ը «բաժանել, բաշխել», որի դերբայն է գնդ. baxta=սանս. bhakta՝ բախտն ըմբռնելով իբրև ի վերուստ բաշխուած, բաժանուած վիճակ» (Տե՛ս Արմ, *բախտ* բառահոգովածը):

Ամփոփենք: «Ջրուան... որ թարգմանի բախտ կամ փառք» նախադասության մեջ *բախտ*-ը ոչ թե Ջրուան անվան ստուգաբանությունն է կամ թարգմանությունը, այլ Ջրվանի դերի, գործունեության, պաշտոնի մատնանշումը, պարզաբանումը:

Փառք-ը նույնպես *Ջրվան* բառի թարգմանություն չպետք է դիտել, այլ նրա «աստվածային» լինելու բնութագրիչներից մեկը:

Եզնիկը մերժում է Ջրվանի կատարյալ (ի՛մա «աստված» լինելը) նաև հետևյալ փաստարկով, որ եթե նա կատարյալ լիներ, ինքը կստեղծեր երկինքն ու երկիրը և կատարյալը ումի՞ց կարիք ուներ խնդրելու որդի, ինչի համար հազար տարի զոհ էր մատուցել: Եզնիկը բերում է (բնականաբար և քննադատում) զրադաշտականների պատասխանը՝ «փառաց առնէր զյաշտն», այսինքն՝ փառքի համար է զոհ մատուցում:

Փառքը, փառավորվելը խորթ չեն աստվածներին և ոչ միայն զրադաշտական: Եզնիկի երկի առաջին գրքում՝ «Եղծ աղանդոց հեթանոսացն», որը իրանական կրոնին չի վերաբերում, անդրադարձ կա Հիսուսի՝ հիվանդներին բուժելու մասին, որտեղ ասվում է «Իբրև տեսին ժողովուրդքն զարմացան եւ փառաւոր առնէին զԱստուած»: (Մատթ., Թ. 8, Եզն., I, Ի):

Ջրադաշտական կրոնի *բախտ* (ճակատագիր) հասկացությամբ անդրադարձել է նաև Եղիշեն՝ անշուշտ ծանոթ լինելով Եզնիկի գրվածքին: Միհրներսեսի Վզուրկ հրամանատարը Հայոց մեծերին ուղղված նամակում մերժում է քրիստոնեության որոշ դրույթներ, նաև վիրավորված է, որ հայերը «ծաղր առնեն զանուն բախտի և զփառաւորութիւնն յոյժ այպանեն»¹⁰:

⁹ Зороастрийские тексты. Суждения духа разума издание подготовлено О.М.Чунаквой, М., 1997, стр. 99.

¹⁰ Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1989, էջ 52:

Ձանուն բախտի ասելով՝ Միհրներսեհը նկատի ունի Ջրվանին. Ե. Տեր-Մինասյանը վերոհիշյալ նախադասությունը թարգմանել է «ծաղրում են բախտի անունը և խիստ պախարակում են փառավորությունը»:

Կարծում ենք՝ թարգմանության մեջ մի փոքր անճշտություն կա: Գրաբարում *անուն* բառը ունի նաև «փառք, հռչակ» իմաստները: Ուրեմն՝ պետք է թարգմանել «ծաղրում են բախտի (իմա՝ Ջրվանի) համբավը, հռչակը, փառքը»:

Եզնիկը «բախտ, ճակատագիր» իմաստով գործածում է և *հրաման* բառը. «Հրամանա՞ւ, ասեն, մեռանիցին մարդիկ, թէ առանց հրամանաց» նախադասությունը թարգմանված է. «Հարցնում են՝ «Մարդիկ ճակատագրո՞վ են մեռնում, թե՞ առանց ճակատագրի» (II, ԺԳ):

Հրաման-ը իրանական փոխառություն է՝ միջին պրս. *frōman* «հրաման, կարգադրություն»: Գրաբարում *հրաման*-ը հիմնականում գործածվում է նշված իմաստով: Բառը ունի հաճախական կիրառություն, և այդ արմատով կազմած բազմաթիվ բառեր կան. *Հրամանաբար*, *հրամանաբեր*, *հրամանադրութիւն*, *հրամանագանց* (լինել), *հրամանակատար*, *հրամանապետ*, *հրամանատար* և այլն:

Հրամանի «ճակատագիր» իմաստով գործածությունը հաճախական չէ: ՆՀԲ-ն *հրամանք* կամ *հրաման* մեկնում է «ճակատագիր կամ օրհաս հեթանոսական»՝ նշելով հունարեն *εἰμαρμῆν* համապատասխանակը: Բնագրային օրինակը Ոսկեբերանից է, իսկ հայ թարգմանիչը տալիս է հունարեն բառի բացատրությունը. «Զծնունդսն ասեմ և զիմարմենն, զոր հայերեն ճակատագիր և բախտ ասեն»¹¹:

5-րդ դարի ոչ թարգմանական գործերից ՆՀԲ-ն հղում է միայն Մանդակունուն և Եզնիկին՝ վերջինիս դեպքում *ստէպ* նշումով:

Մանդակունուն վկայության մեջ *բախտ*, *ճակատագիր*, *հրաման* հոմանիշներ են. «... մի մոլորեացուք իբրեւ զհեթանոսսն ի բախտ և ճակատագիր և ի հրաման»¹²:

¹¹ Տե՛ս *Հ. Աճառյան*, Հայերեն արմատական բառարան, հ. II, Ե., 1973, էջ 242:

¹² *Մանդակունի*, *ճառք*, ԻԶ (տե՛ս Մատենագիրք հայոց, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1271):

Հավանական է, որ *հրաման* «բախտ» և *ճակատագիր* բառերը հայ մատենագրության մեջ առաջինը շրջանառության մեջ է դրել Եզնիկը:

Ուշ շրջանի գործերում *հրաման*-ի՝ նշված իմաստով գործածություն կա Գր. Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում. «Նոքա որք զբախտ և զճակատագիր և զհրաման համբաւեն, ոչ ինչ ասեն ի կամաց մեր գործիչ, այլ զամենայն ի հարկէ ասեն. զի զեղխաբար զկենցաղս վճարեսցեն»¹³:

Որոշ դիտարկումներով անդրադառնանք երկի աշխարհաբար թարգմանության մի քանի օրինակների, որոնք ավելի հասկանալի են դարձնում Եզնիկի մտքերը:

«Նոյնպէս և նոցա՝ որ մօտ առ ծովուն կայցեն, *քանզի ոչ կարէ ակնբաց ի ցամաք գործել*» (II, ԻԵ): Ընդգծված նախադասությունը Ա. Աբրահամյանը թարգմանել է. «... քանի որ չեն կարող տեսադաշտը ցամաքին հասցնել»:

Գրաբարի բառարանները չունեն *ակնբաց* բառը. *ակնբաց*-ի «տեսադաշտ» թարգմանությամբ նախադասության միտքը դառնում է ընկալելի:

«Եւ զչարիսն ոչ պարտիմք անձինս անուանել, այլ արգասիս անձանց» (I, Է): Գրաբարում *անձն* բազմիմաստ է. այս համատեքստում նշանակում է «գոյություն ունեցող՝ ի հակադրություն «ոչինչ»-ի, «չեղած մի բանի»: Ա. Աբրահամյանը *անձն* թարգմանել է *գոյակ*, որ զուտ փիլիսոփայական տերմին է. «Եւ չարիքներին չպիտի համարենք գոյակներ՝ այլ գոյակների արգասիք»:

ՆՀԲ *անձն* «գոյաւոր իրաց, գոյացութիւն» բառի համար նշում է հունարեն երկու համապատասխանակ՝ $\Theta\rho\acute{\alpha}\sigma\tau\phi\sigma\iota\varsigma$ և $\omicron\tilde{\iota}\sigma\iota\alpha$: Առաջինը հունարենում բազմիմաստ է (բառարանը նշում է 13 իմաստ):

Իսկ $\omicron\tilde{\iota}\sigma\iota\alpha$ -ն զուտ փիլիսոփայական տերմին է. «существо, субстанция, индивид»¹⁴: Հավանական է, որ *գոյացություն*, *գոյակ* հասկացությունները արտահայտելու համար Եզնիկը նկատի է ունեցել հուն. $\omicron\tilde{\iota}\sigma\iota\alpha$ -ն:

¹³ «Գիրք հարցմանց» համաբարբառ, գիրք Գ, Ե., 2012 թ., էջ 374 (համաբարբառը կազմել է Բ. Գ. Թ. Սուսաննա Գրիգորյանը):

¹⁴ *И.Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, М., 1958, стр. 1209, 1698.*

«Ձերեշտակաց ասեմ և զհոգւոց մարդկան և զգայականացն անշնչից յիրաքանչիւր կայանի» (I, Գ): Տարակարծությունների և տարբեր մեկնությունների տեղիք է տվել *զգայականացն* բառը: Ա. Աբրահամյանը այն թարգմանել է *անբանականներ*: ՆՀԲ-ն *Ջգայական* «բանական» իմաստը չի նշում: Առձեռն բառարանը *զգայականք*-ը մեկնում է նաև որպես «անբան կենդանիք»¹⁵, այսինքն՝ բանականությունից զուրկ:

«Ոչ պարտի օրենսդիրն օրենս դնել» (I, ԺԵ): Այս նախադասության *դնել* բառը թարգմանված է սահմանել. «Օրենսդիրն օրենքներ չպիտի սահմանի», որով ակնառու է դառնում *դնել*-ի տերմինային բնույթը: Առձեռն բառարանը *դնեմ գիրս* թարգմանում է «գիրք շարադրել»:

«Զի կեսքն երիս արմատս դնեին, բարւոյ և արդարոյ և չարի» (I, ԻԸ):

Արմատ բառը որպես փիլիսոփայական տերմին չի գիտակցվում: Աշխարհաբար թարգմանված է՝ *նախասկիզբ*. «քանի որ մի մասը երեք նախասկիզբ էր ենթադրում՝ բարու, արդարի ու չարի»: *Արմատը* «նախասկիզբ» իմաստով է գործածված և Եզնիկի հետևյալ նախադասության մեջ. «Այլ ի քեշին մի են երկոքեան. նոքա երկարմատեանք, և սոքա նոյնպիսիք» (II, Բ): (Երկարմատեան՝ երկու+արմատ+եան կազմությունն է):

«Բայց վասն զի ոչ են ձեռնհաս, ոչ իշխեն յայնպիսի իրս մտաբերել» (I, ԻԲ):

Ձեռնհաս-ը, ըստ ՆՀԲ-ի, նշանակում է, «կարօղ, բաւական, ճոխ»: Ըստ Առձեռն բառարանի՝ «ձեռքը հասնող, կարող»: Ա. Աբրահամյանը ծանոթագրում է, որ համատեքստում *ձեռնհաս չլինելը* իրավական իմաստով է, ուստի թարգմանում է «իրավասու չեն» (ծան. 171):

Կարելի է Եզնիկի գրքի տերմինային համակարգին և ժողովրդախոսակցական շերտին վերաբերող դիտարկումները շարունակել, որը, սակայն, հարմար չէ մի հոդվածի ընձեռած հնարավորությունների շրջանակում: Ընդգծենք, որ Ա. Աբրահամյանի անգերազանցելի թարգմանությամբ V դ. փիլիսոփայական-աստվածա-

¹⁵ Առձեռն բառարան հայկագնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 290:

բանական երկը ընթերցողին է ներկայանում որպես ժամանակակից գիտական աշխատություն:

Ինչ վերաբերում է ժողովրդախոսակցական բառերին, ապա տեղին է նշել Վ. Առաքելյանի դիտարկումը, որ Եզնիկը «լինելով Արարատյան աշխարհի բնակիչ՝ այդ աշխարհի բազմաթիվ բառեր ու դարձվածքներ է օգտագործել իր փոքրիկ գրվածքում, և այդ բառերն ու դարձվածքները որոշ փոփոխություններով հարատևել են մինչև այսօր»¹⁶:

Եզնիկը V դ. միակ մատենագիրն է, որ փորձում է տարբերակել (թեկուզ մեկ օրինակով) արևմտյան և արևելյան խմբակցության բարբառները: Նա *հողմ* բառի համար նշում է բարբառային երկու տարբերակ: «Քանզի յորժամ մեք ասեմք թէ *սիք* շնչէ, ստորնեայք ասեն՝ *այս* շնչէ» (I, ԻԳ):

Որոշ հրատարակություններում *ստորնեայք*-ի փոխարեն *ասորնեայք* է (այսինքն՝ ասորիները): Բանասերները ճիշտ են համարում *ստորնեայք*-ը¹⁷:

Л. Ш. Оганесян. О некоторых особенностях языка «Опровержение сект» Езника Кохбаци (оригинал и перевод). «Опровержение сект» Езника Кохбаци занимает особое место в древнеармянской литературе 5-го века, как с точки зрения содержания, так и ясностью и канонизированностью языка.

В статье исследуются некоторые философские понятия, а также слова диалектно-разговорного слоя. В древнеармянском языке первой половины 5-го века еще не было стабильной системы философских терминов. В книге Кохбаци множество слов с новыми значениями употребляются как термины. *դնել* [dnel] «класть» в значении *սահմանել* [sahmanel]- «определять», *արմատ* [armat] «корень»-*նախասկիզբ* [naxaskizb] «первоначало», *անձն* [anjn] «лицо, личность» - *գոյություն* [goyut'own], *գոյակցություն* [goyakc'ut'iwn] «существо, существование»: *Երկարմատեան* [erkarmatean] (*երկու* + *արմատ* [erku+armat]) является эквивалентом дуализма. В предложении «Зрван, что переводится как судьба», Езник имел ввиду не перевод личного имени, а роль Зрвана как божества, определителя судеб.

Диалектные слова *բայոց* [bayoc] «логово», *նշանս տալ* [nšans tal] «показать» впервые засвидетельствованы в книге Кохбаци.

Езник отмечает также существование разных диалектов армянского языка.

¹⁶ Վ. Առաքելյան, նշվ. աշխ. էջ 117:

¹⁷ Թեպետ Ա.Արքահամյանը բնագրում թողել է *ստորնեայք*-ը, բայց թարգմանել է «հարավ-կողմյան բնակիչները»:

L. Sh. Hovhannisyan. On some linguistic peculiarities of “Refutation of Sects” by Yeznik Koghbatsi (the original and the translation). “Refutation of Sects” by Yeznik Koghbatsi clearly stands out in the Armenian literature of the 5th century from the point of view of both its contents and clarity of language, as well as compact composition. The present article aims at studying some philosophical concepts and also some words picked out from the layer of the dialectal-colloquial units of the work in question.

As in the first half of the 5th century the Armenian language did not have a system of philosophical terms, Yeznik has managed to convey scientific notions with ordinary words: thus, new meanings acquired terminological value. For example, the word *դնել* [dnel] has the meaning of “define,” *արմատ* [armat] - “initiation,” *ան* [an] - “existence,” “being,” “formation,” *երկարմատեան* [erkamatean] - (*երկու* + *արմատ* [erku+armat]) “dualism” (two+root). Yeznik was the first among the Armenian writers of the 5th century to use *հրաման* [hraman] in the meaning of “fate,” “destiny.”

The word *զրուան* [zrwan] which is translated as “fate” or “glory” is used in the text by Yeznik not to mean the translation of an anthroponym but as one of the basic notions of the Zoroastrian religion, namely – the God of Fate, the one who allots fate.

A number of colloquial words, such as *բայոց* [bayoc] - “den,” *նշան տալ* [nshan tal] “show,” are the first or only evidence in our literature. Yeznik also argues for the presence of Armenian dialects in the 5th century.

ՀԱՅ ԿԵԼՏԱԿԱՆ ԲԱՌԱՅԻՆ ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Գ. Ռ. Ջոլտայի ուսումնասիրությունը մեզ հետաքրքրող հարցի առումով կարևոր աշխատանք է, որում առանձին քննության առարկա են նաև հայ-կելտական զուգաբանությունները¹: Ավելի ուշ այդ հարցին մասամբ անդրադառնում է Է. Ա. Մականը՝ նկատի ունենալով Ջոլտայի կողմից առանձնացված թվով ինը զուգաբանությունները²: Ընդ որում նա գտնում է, որ այդ նյութը «ամեննին էլ անխոցելի չէ հայերենի և կելտական լեզուների տեսակետից»³:

Գ. Ջահուկյանը գրում է. «Մականը հատուկ ուսումնասիրություն է նվիրել հայ-կելտական զուգաբանությունների հարցին, որտեղ փորձում է բացատրել հայ-կելտական մերձավոր շփումների առկայությունը»⁴: Այս գնահատության մեջ թերևս ավելին է ասված, քան իրականում կա, որովհետև առանձին տեղ է տրվում Մականի կատարածին, այնինչ Ջոլտայից քաղած միայն ինը բառարմատի վրա է հիմնված նրա վերլուծությունը, ավելին՝ հայ-կելտական առնչությունները ենթադրում են ավելի լայն քննարկում, քան որ կատարված է տվյալ դեպքում:

Այդուհանդերձ՝ անդրադառնանք այդ զուգաբանություններին, միաժամանակ նշենք մեր նկատառումները՝ որոշ ճշգրտումներով կամ լրացումներով:

1. Հայ. *հարկանեմ* «խփել, հարվածել» - հիոլ. *orgaim* «խփում եմ, հարվածում եմ». Մականը դնում է Ջոլտայի նշած սահմ. եղ. ներկայի 1-ին դ. *orgaim*, իսկ իր շարադրանքում՝ *orcaid* «սպանում է, ավերում է» ձևը: Ջահուկյանը գրում է. «Հեթկ-ի միացումը

¹ G. R. Solta, Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen: Eine Untersuchung der indogermanischen Bestandteile des armenischen Wortschatzrs, Wien, 1960, ss.181-182, 188-189, 232-233, 257-258, 291-292, 301, 374-375, 424, 440-441, 467-468:

² Յ. Ա. Макаев, Армяно-кельтские изоглоссы // "Кельты и кельтские языки", М., 1974, էջ 51-62:

³ Յ. Ա. Макаев, նշվ. աշխ.:

⁴ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 1987, էջ 89: Ջահուկյանը նկատի ունի Մականի վերը նշված աշխատությունը:

հարկանեմ-ին առաջարկել է Մեյլեն (*Meillet*, 1908, 129)⁵. Անհավաստի է կապը **perk*’- « պատռել, հերկել. ակոս» արմատի հետ (**perk*-> **հերս*): Պարզ չէ *հերձեմ* բայի կապը սրանց հետ⁶: Մեյլեի առաջարկը միանգամայն ճիշտ է, մանավանդ եթե ընդունենք հնդեվրոպական դիցարանի ամպրոպային աստծու գործառույթը: Իսկ Ջահուկյանի թերահավատությունը վերանում է, երբ համեմատում ենք մի կողմից՝ ոչ միայն *հերկեմ*, *հարկանեմ*, *հերս* և *հերձեմ*, այլև *հարսն* «ամուսնու ուզածը՝ առնակին (որ պիտի պտղակալի)», *հարցանեմ* «հարս ուզել՝ առնել», *փորձ* (*փորձեմ*), *փեսա* (< **փերձա*) «հարս ուզող», *որոտ* «կայծակ» (?), իսկ մյուս կողմից՝ հնդեվրոպական ժողովուրդների ամպրոպային աստծու ժայռին, նաև ծառին (կաղնուն) հարվածելու առասպելը. հմմտ. հինդկ. *Parj-anyah*, սլավ. *Perunu*, լիտվ. *Perkunas*, հիսլ. *Fiorgyn*, մանավանդ որ հայտնի է հիսլ. *Fiorgyn* (Տոր ամպրոպ-աստծու մոր անունը) համեմատվում է գոթ.*Fairguni* «սար», նախակելտ. **perkunia*, լատ. *Hercunya* (*silva*) և այլն ձևերի հետ⁷:

Ընդ որում Մակասը գտնում է, որ «հ.-ե. **per*-ը **perg*- աճականով ներկայանում է հայերենում, բալթիկ-սլավոնականում, ալբանականում, իտալականում, կելտականում և չի կարող դիտվել որպես հայ-իւթա-թոխարա-կելտական գուգաբանություն»⁸ :

2. Հայ. *դուրզն* «(բրուտի) անիվ» - հիռլ. *droch* «անիվ» գուգաբանությունը չի ընդունում Մակասը, պատճառաբանելով, որ հայ. *դուրզն* արմատն ամենից առաջ առնչվում է հուն. *προχος*, որ ունի ոչ միայն «անիվ», այլև «բրուտի անիվ», այնինչ հիռլ. *droch* նշանակում է «անիվ», և հայ. *դուրզն*-ը ենթադրում է ձայնդարձի երկար աստիճան և դրափոխություն:

Այստեղ թերևս առարկելին այն է, որ՝

⁵ *A. Meillet*, *Les dialectes indo-européennes*, Paris, 1908, էջ 129:

⁶ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 186;

⁷ *В. В. Иванов*, К этимологии балтийского и славянского названия бога грома // «Вопросы славянского языкознания», вып. 3, М., 1958: Հմմտ. *Т. В. Гамкрелидзе*, *Вяч. Вс. Иванов*, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, т. 1- 2, Тбилиси, 1984, էջ 614-615, 792-793:

⁸ *Э. А. Макаев*, նշվ. աշխ., էջ 55:

1) ըստ Գ. Ջահուկյանի հայ. *դուրզն*-ը ծագում է հե. *dhōrgh-(?) [*< *dhreggh-*] ձևից և իմաստի առումով էլ զուգահեռ է հիռլ. droch «անիվ» բառին,

2) հե. *r -ի դիմաց սովորական *ար*-ի կողքին ունի *ուր*. հմմտ. *dhrgh'h- (*dhergh'h-/*dhreg'h-) > *դարձ, դառնամ* (**դարձնամ*) և *dhōrgh (*< *dhreggh-*) > *դուրզն*,

3) *դուրզն*-ից բացի այս դեպքում համեմատելի է նաև հայ. (փոխառություն) *դրոզ* «մի տեսակ սայլ (թերևս՝ երկանիվ)» բառը. հմմտ. ռուս. *дроза* «սայլի կողափայտ», *дрозу* «անթափք սայլ, դրոզ», «դիակառք»,

4) հուն. *προχος* ձևի հետ համեմատությունը, առավել ևս հայ-կելտական զուգաբանության բացառման հիմք ընդունելն այնքան էլ համոզիչ չէ, որքան վերը նշված լրացուցիչ փաստերի առաջ քաշելը:

Տվյալ դեպքում հայ-կելտական զուգաբանությունը հիմնավորվում է թե՛ հնչյունական և իմաստային համապատասխանությամբ, թե՛ հայերենի լրացուցիչ օրինակի [*դրոզ* «մի տեսակ սայլ (թերևս՝ երկանիվ)»] նկատառումով, և վերջապես զուգաբանության համար որոշակի հիմք է հանդիսանում արմատի ամենանախնական իմաստի՝ «պտույտ, պտտվել, շուռ գալ» արտացոլումը հիշյալ լեզուներում:

3. Հայ. *երեւիմ* «երևալ, ի տես ելնել» - հիռլ. richt «տեսք, ձև». սա չի ընդունում Մականը՝ ոչ անկախ Յ. Պոկոռնուց, այլև Հ. Լյուիսի և Հ. Պեդերսենի այն հավաստի ստուգաբանությունից, որի համաձայն հիռլ. richt («տեսք, ձև») ծագում է հե. *prptu արմատից, այնինչ հայ. *երեւիմ*-ը բխեցվում է հե. *prep- (նաև *երես* < *prep-s-a) ձևից: Նկատենք, որ անճշտությունը գալիս է Լյուիսից և Պեդերսենից, քանի որ հին իռլանդերեն և հայերեն ձևերն առաջինը նրանք են զուգադրել՝ իռլ. *richt* «ձև» (վալլ. *rhith* < հե. *prptu-. հմմտ. հուն. *πρεπο* «առանձնանում եմ») - հայ. *երեւիմ* «երևում եմ», *երես* (*-ps-) «երես, դեմք», և ըստ այդմ էլ Ջոլտայի կողմից առանձնացվում է նման զուգաբանություն: Եվ քանի որ Մականն այս հանգամանքը հաշվի չի առել, հետագայում Ջահուկյանի ցանկում, թերևս այդ իսկ նկատառումով, այն չի դիտվում հայ-կելտական զուգաբանություն:

4. Հայ. *բերան* «բերան, բացվածք» - միոլ. bern «հանված՝ տաշված մաս, փոս» զուգաբանությունը Մակասն անհավանական է համարում, նախ՝ գտնելով, որ արմատի նման կազմություն հանդիպում է հնդեվրոպական լեզուների մեծ մասում (հմմտ. լիտ. burna «բերան, կում», բուլղ. бърна «շուրթ, շրթունք», ալբ. brime «անցք, բացվածք», հվգերմ. bora «բացվածք»), այլև խանգարում է «բացվածք» - «բերան» իմաստային անցումը, և գտնում է, որ այն, ոչ անկախ այս հարցում Վ.Պորցիգի հայտնած կարծիքից, վերաբերում է հնդեվրոպական բառապաշարի հուզական-արտահայտչական կոդին:

Գ.Ջահուկյանը գտնում է, որ հայ. *բերան* (< հե. *bher- արմատ, հումանիշ՝ *os-) պիտի ծագած լինի հե. *bherono- արմատից (հմմտ. *bher > հայ. *բիր, բրեմ, բրիչ, բրչեմ*) և զուգահեռներ ունի ոչ միայն կելտական, այլև սլավոնական և բալթյան լեզուներում, թերևս նաև հունարենում, այլ կերպ ասած՝ անհավանական չի համարում Ջոլտայի առանձնացրած հայ-կելտական զուգաբանությունը⁹:

Մեզ ավելի հավանական է թվում *բերան* բառի ծագումը կապել հայ. *բե-//բո-* < հ.-ե. *p^[h]oH(i) - «շուրթն, շրթունք. ըմպեմ, ումպ» արմատի հետ¹⁰:

5. Հայ. *մատն* «մատ» - հկիմր. maut «ձեռքի մեծ մատը» զուգաբանությունը, ըստ Մակասի, նույնպես հավաստի չի կարելի համարել, և գրում է, որ Ջոլտան ինքն է նշում, որ նման զուգադիպումը, որ առաջինը Մեյեն է նկատել, ամբողջովին կասկածելի է, այն է՝ «այս դեպքում հանդես է գալիս հայ-կելտական հազվադեպ զուգաբանություններից մեկը»: Մակասը մերժում է այն հիմունքով, որ նախ՝ հկիմր. *maut*-ն «ունի կեղծ որակափոխություն (мутация)», երկրորդ՝ *մատն* ձևում, ընդհանուր կանոնին հակառակ, շնչեղի փոխարեն առկա է պարզ ատամնային խուլ հնչյուն: Այս վերջինի դեպքում էլ Մակասը տողատակին գրում է հետևյալը. «Հ. Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարանում» (հհ. 1-7,

⁹ Հմմտ. Մ. Կ. *Հաննեյան*, Մարմնի մասերի հնդեվրոպական անվանումների տարածքային նկարագիրը հայերենում // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Ե., ՀՀ ԳԱ հրատ., 1979, էջ 145-146, 156:

¹⁰ Վ. Գ. *Համբարձումյան*, Ակնարկներ հայերենի համեմատական բառագիտության, Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2012, էջ 111 և հջ.:

Երևան, 1928-1935) ջանում է փրկել Ա.Մեյեի տվյալ զուգադրությունը՝ մատնացույց անելով առ այն, որ որոշ դեպքերում *ն*-ին նախորդող դիրքում սպասելի շնչեղ *թ*-ի փոխարեն հանդես է գալիս *տ* պարզ խուլ բաղաձայն (հ. 4, էջ 871 և հջ.)»¹¹ :

Հետագայում Ջահուկյանը չի անդրադառնում իր այս դիտողությանը, այլ հետևում է Աճառյանի հայտնած տեսակետին՝ տալով հետևյալ ձևակերպումը. «*Մատն*-ի մեջ **-t*-ի արտացոլումը որպես *-տ* բացատրվում է *-ն*-ի հարևանությամբ. հմմտ. *ակն* [ՀԱԲ, 3, 270]»¹² : Իսկ ավելի ուշ գրում է, որ «**t*-ն *ն*-ի մոտ մնացել է *տ*, ինչպես **k-ն ակն* բառում չի շնչեղացել). համեմատվում է հ.կիմր. *maut*, ն.կիմր. *bawd*, մ.բրետ. *meut* (<*mā-tō) «բութ մատ» բառերի հետ, որոնք կասկածով հատկացվում են **m'* – «չափ» արմատին (որպես չափ): - Աճ. ՀԱԲ 3, 270»¹³:

6. Հայ. *ողորկ* «հարթ, հավասար», *լերկ* «հարթ. մերկ, ճաղատ» - հիդլ. *lerg* «հավասար» զուգադրումը առաջարկել է Է. Լիդենը, որը ժամանակին ընդունվել է Յ. Պոկոռնու, իսկ ավելի ուշ՝ հետագայում Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի կողմից, թեև այն անընդունելի է եղել Հ. Պետերսոնի համար: Աճառյանը հայ. *ողորկ*-ը հանգեցնում է հե. **lorgu-*, իսկ *լերկ*-ը՝ **lergu-* արմատին, ընդ որում իբրև բացառյալ (էքսկլյուզիվ), այսինքն՝ միայն հայերենի և կելտական լեզուների տվյալներով հաստատվող զուգաբանություն: Պետերսոնը *ողորկ*-ի համար ընդունում է Լիդենի ստուգաբանությունը, իսկ *լերկ*-ի դեպքում գտնում է, թե այն *մերկ*-ի հետ ռիթմական համահնչության հետևանքով առաջացած կազմություն է:

Մականը, հիմնվելով Պետերսոնի հիշյալ կարծիքի վրա, գրում է, թե «տվյալ զուգադրությունն ամբողջովին կասկածելի է»¹⁴ :

7. Հայ. *մուխ* «ծուխ, մուխ» - հիդլ. *much* «ծուխ» զուգահեռը նույնպես մերժվում է Մականի կողմից՝ հիմք ընդունելով Պոկոռնու այն կարծիքը, որ հայ. *մուխ*-ը կելտականից բացի զուգահեռներ ունի նաև հունարենում, գերմանականում, (հավանաբար նաև

¹¹ Յ. Ա. Макаев, նշվ. աշխ., էջ 59:

¹² Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 180:

¹³ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., «Ասողիկ» հրատ., 2010, էջ 514:

¹⁴ Յ. Ա. Макаев, նշվ. աշխ., էջ 59:

բալթյան և արևելասլավոնական լեզուներում), այլն այն, որ հնչույթային մակարդակում շարժական *s*-ի (հմմտ. հուն. *smucho* «մարմլում եմ», հանգլ. *smeocan*, «ծխել, ծուխ արձակել», լիտվ. *smaugti* «շնչահեղձ լինել»), երկու լեզուներում առանց *s*-ի (հմմտ. հայ. *մուխ*, հիբլ. *much*) լինելը, ինչպես որ նաև Ջոլտան է նշում, դեռևս ոչինչ չի նշանակում. հե. **sm* : **m* հարաբերակցությունը չեզոքացել է հոգուտ *u*-ի հայերենում:

Ավելացնենք, որ հայ. *մուխ*-ի հետ համեմատելի են նաև իռլ. *much* «ծուխ», վալլ. *mwg*, կոռն. *mok*, բրետ. *moug*, *mog* «կրակ», *moged* «կրակ» ձևերը: Ի դեպ, Մականը մերժում է Ջոլտայի կարծիքը նաև այն նկատառումով, որ միայն հայերենում և կելտականում է հե.**kh* > հայ. *խ*, կելտ. *ch* (**smeukh* > հայ. *մուխ*, կելտ. *much*)՝ առարկելով նաև Պեդերսենին, որ ժամանակին ցույց էր տվել, որ գերմանականում ունենք հետնալեզվային ձայնեղ *g* (հմմտ. **smeug*, սաքս. *smugan*), և դա, իրոք, տեղին չէ, որովհետև Պեդերսենն ամենայն հավանականությամբ պիտի նկատի ունեցած լինի նաև այն, որ կելտական լեզուներից, օրինակ, բրետոներենում ևս ունենք հե. **kh* > *g* արտացոլում (տե՛ս վերը):

8. Հայ. *մեղ(ք)* «մեղք, մեղանչելը» - միռլ. *mell* «մեղք», *mellaim* «խաբում եմ, կեղծում եմ» գուգադրությունը ևս չի ընդունում Մականը՝ համարելով այն «գուրկ ամեն մի հիմքից», որովհետև գտնում է, որ գուգահեռներ կան նաև իրանական, գերմանական և բալթյան լեզուներում: Թե՛ Մականը և թե՛ Ջոլտան ելնում են Պոկոռնու բառարանի տվյալներից, սակայն այն տարբերությամբ, որ Ջոլտան, ինչպես որ Պոկոռնին, բալթիկ-կելտական համապատասխանության համար ենթադրում է իլլիրականի առկայություն՝ որպես միջնորդի, ապա հայերենի դեպքում էլ կարելի է ընդունել իլլիրաթրակյան միջնորդավորության հնարավորություն:

9. Հայ. *ոյծ* «սառը» - հիբլ. *ocht*, *uacht* «սառը, ցուրտ» առնչության դեպքում ևս, ըստ Մականի, Ջոլտան դիմում է իլլիրերենի հնարավոր միջնորդավորությանը, որը դարձյալ մերժելի է, քանի որ հաստատված է, որ հայ. *ոյծ*-ը ծագում է հե. **eug-* / **oug-* տարբերակային արմատից:

Իբրև վերն ասվածի ամփոփում կարելի է նշել հետևյալը:

ա) Հայ. *դուրզն*, *հերկեմ* բառերին ավելացնել է *դրոզ* (?), *հարսն* (*հարցանեմ*), *փորձ* (*փորձեմ*), *փեսա* (< **փերձա*) (?),

բ) Հայ. հետնալեզվային ձայնեղին համապատասխանում է ձայնեղ բաղաձայն՝ *կ/ց*, շրթնային կամ առաջնալեզվային ձայնեղին նույնպիսի ձայնեղ՝ *բ/վ*. *դ/ժ*, իսկ հպաշփական խուլին սովորական խուլ՝ *ծ/տ* և այլն:

գ) Մականը կարծում է, որ հայերենի և կելտական լեզուների միջև առնչություն հնարավոր է, եթե նկատի առնենք հայերի և գաղատների շփումները Փոքր Ասիայում և Բալկանյան թերակղզում, որը բացառվում է, քանի որ այլ բան են ասում հնդեվրոպական լեզուների նախնական բնակության վայրին վերաբեյալ վերջին տասնամյակներին առաջ քաշված տեսության տվյալները:

դ) Հայ-կելտական բառային զուգաբանությունները քանակով ավելին են, քան որ առանձնացվում են Ջոլտայի կողմից և քննության առնվում Մականի հիշյալ աշխատանքում, որոնք ինչ-որ չափով ունեն լրացման կամ ճշգրտումների կարիք, մանավանդ հայ-կելտական ընդհանուր զուգաբանությունների քննության մեջ:

ե) Հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների, տվյալ դեպքում՝ հայ-կելտական առնչությունների հարցը արդի համեմատական լեզվաբանության առանցքային հարցերից է, ընդ որում ոչ միայն ծագումնային ընդհանրության, այլև տիպաբանական արժանահավաստության (վերիֆիկացիայի) տեսանկյունից:

В. Г. Амбарцумян. К вопросу об армяно-кельтских лексических изоглоссах. Вопрос связи между армянским и другими индоевропейскими, в том числе армяно-кельтскими языками является одним из основных вопросов современного сравнительного языкознания, с точки зрения не только генетической общности, но и типологической верификации сравниваемых единиц.

В статье речь идет о тех армяно-кельтских лексических изоглоссах, которые рассматривались в исследовании Г. Р. Зольта, и которые подвергаются рассмотрению Э. А. Макаевым в его отдельной статье, еще Г. Б. Джаукяном. Нами делаются некоторые сравнительно-типологические уточнения и добавления, исходя из новых данных в области изучения армяно-кельтских отношений.

V. G. Hambardzumyan. On the Armenian-Celtic Isoglossies. The relationship of Armenian and other IE languages, including Celtic languages is one of the fundamental issues in current comparative linguistics not only from the viewpoint of etymological commonality, but also from the verification viewpoint. The present article touches upon those Armenian-Celtic parallels, which have been studied in separate works of R. Zolta and E. Makaev and which have interested G. Jahukyan as well. Moreover some clarifications and additions have been done coming from new data concerning Armenian-Celtic word parallels.

**Յ. ԿԱՐՍՏԻ «ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՐԱՆԸ»
ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՄԿՁԲՆԱՂՔՅՈՒՐ**

*Բանասիր. գիտ. թեկնածու Մ. ՄԱԼԱՔ-ՄՈՀԱՄԱԴԻ
(Իրան, Սպահանի համալսարան)*

Գերմանացի լեզվաբան-հայագետ Յոզեֆ Կարստը (1871-1962 թթ.)՝ Հ. Հյուբշմանի աշակերտը, իր ուսումը ստացել է Ստրասբուրգի Վիլհելմ կայսեր անվան համալսարանում, որտեղ ուսումնասիրում է հնդկական բանասիրություն, պարսկերեն, ասորերեն, արաբերեն և հայերեն: 1899 թ. պաշտպանել է «Կիլիկյան հայերենի արտասանությունը և ձայնավորները» թեմայով դոկտորական ատենախոսություն և դասավանդել է նույն համալսարանում¹: Վաստակաշատ հայագետը հեղինակել է մի շարք արժեքավոր աշխատանքներ, ինչպես՝ «Հայ բանասիրության պատմություն» (Հայդելբերգ, 1930), «Խեթա-ասիական առասպելաբանություն» (Յուրիխ, 1948), կատարել է 10-րդ դ. հայ պատմիչ Ստեփանոս Ասողիկի «Տիեզերական պատմութեան» և 4-րդ դ. հույն հեղինակ Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրություն» երկերի գերմաներեն թարգմանություն և այլն:

Հայագիտությունը, բասկագիտությունը և կովկասագիտությունը եղել են Կարստի գիտական գործունեության հիմնական ոլորտը, զբաղվել է նաև ազգագրության, դիցաբանության, իրավագիտության, դրամագիտության հարցերով²: Կարստի «Միջին հայերենի բառարանը» բացառիկ գիտական արժեք է ներկայացնում³:

«Միջին հայերենի բառարանը» պատմաստուգաբանական աշխատանք է, որում քննվում են միջին հայերենում եղած բուսա-

¹ J. Karst, Aussprache und Vocalismus des Kilikisch-Armenischen, 1901, Strassburg:

² Մ. Ռ. Գազինյան, նշ. աշխ., էջ 9-10:

³ Յ. Կարստը իր 90-ամյա կյանքի յոթ տասնամյակը նվիրել է հայագիտությանը, իսկ իր «Միջին հայերենի բառարանի» վրա աշխատել է մի քանի տասնամյակ: Կարստի մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Յ. Տաշեան, Կիլիկեան հայերենը // <<Հանդես ամսօրեայ>> 1900, ԺԴ տարի, յունուար, էջ 17-20: Գ. Վ. Աբգարյան, Յոզեֆ Կարստի անտիպ «Միջին հայերենի բառարանը» // «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, 2 /86/, էջ 183-186: Մ. Ռ. Գազինյան, Յոզեֆ Կարստի լեզվաբանական հայացքները, Ե., 2008: Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

նունների և դեղանունների ծագումը՝ համեմատությամբ արաբերենի, պարսկերենի, վրացերենի, հունարենի, լատիներենի և այլն, այլն գուգահեռներ են անցկացվում հնդեվրոպական և այլ տիպի լեզուների տվյալների հետ:

Կարստը գրում է. որ բառարանը «կոչված է ստեղծելու ճիշտ հիմք հայոց լեզվի բնագավառում լեզվահամեմատական հաջող աշխատանքի համար, որքանով այստեղ առաջին անգամ ի մի է բերվում, ըստ բարբառների տարբերակվում և համեմատվում է միջին շրջանի ամբողջ բառամթերքը, ինչպես նաև փորձ է արվում այն հանգեցնել հին հայերենի համարժեքներին, այլն հասցնել մինչև նոր հայերենի բարբառներին, իբրև անհրաժեշտ նախնական աշխատանք հայոց լեզվի պատմական քերականության համար»⁴:

Հոդվածում անդրադառնում ենք այդ բառարանի հետ կապված, մեր կարծիքով ուշագրավ, մի քանի հարցի՝ առանձին-առանձին:

1. *Ձեռագիր բառարանի ընդհանուր բնութագիրը*: Բառարանն ընդգրկում է 7417 թղթեր, նյութերը հավաքվել են տարիների ընթացքում՝ գրված մեծ մասամբ փոքրիկ թերթիկների վրա, փակցված մեծ էջերի վրա⁵: Միջին հայերենի բառապաշարին նվիրված սակավաթիվ այլ աշխատանքների համեմատությամբ, պետք նշել, որ այս բառարանն ավելի ծավալուն է, կատարվում են ծագումնաբանական վերլուծություններ, կան սկզբնաղբյուրների հիշատակումներ և բերվում են հեղինակայն վկայություններ⁶:

1962 թ. բառարանի ձեռագիրը Փարիզից բերվել է Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարան, որտեղ և պահվում է առ այսօր⁷:

Տարիներ առաջ Ռ. Ղազարյանը և Հ. Ավետիսյանը օգտվել են

⁴ J. Karst, Geschichte der armenischen Philologie, Heidelberg, 1930, էջ 43-44: Հմմտ. Ա. Ռ. Գազինյան, նշ. աշխ., էջ 83:

⁵ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան. Կարստի արխիվ՝ «Heritage of Josef Karst» 249,250, 251, 252, 253 և 254 թղթապանակներում՝ թվով 38 վավերագրեր: Կարստի «Միջին հայերենի բառարանի» վրա աշխատել ենք 2010-2014 թթ., Մատենադարանում:

⁶ Տե՛ս Գ. Վ. Աբգարյան, Յոզեֆ Կարստի անտիպ «Միջին հայերենի բառարանը» // Բանբեր Երևանի համալսարանի, 1995, 2 (86), էջ 183-186:

⁷ Կարստը 1956 թ. առաջ դիմել է Մխիթարյաններին իր «Միջին հայերենի բառարանը» տպագրելու համար, սակայն հետագա տարիների ընթացքում բառարանը ուղարկվում է Վիեննա, որտեղ տպագրվում է միայն տիտղոսաթերթն ու բառացանկի առաջին երկու էջերը, որը սկսվում է Ա տառով, երկայունակ էջերի վրա:

Կարստի անտիպ այս աշխատանքից՝ իրենց նույնանուն բառա-
րանը գրելիս:

2. *Բառարանի սկզբնաղբյուրները և մատենագրությունը:*
Կարստը օգտագործել է իր թեմային առնչվող համարյա բոլոր հե-
տազոտությունները: Բառարանի սկզբում դնում է գրականության
ցանկը, տալիս է սկզբնաղբյուրների նկարագիրը: Նշվում է «Պատ-
մութիւն Պղնձէ քաղաքին» (10-րդ դ.) գրքի հայերեն թարգմանու-
թյան մասին, որն ապացույց է հեղինակի մանրակրկիտ ուսումնա-
սիրության միջին հայերեն մատենագրության ոլորտում⁸: «Բժշկա-
կան-դեղաբանական գրականություն» վերնագրի տակ տալիս է
համապատասխան գրականության ցանկը (էջ 38), իսկ «Միջին
հայերեն բառացանկեր» վերնագրի տակ՝ հետևյալը. «Բժշկական
բառարան», ըստ որի՝ «Թարգմանութիւն անուանցն դեղոց յայլ լե-
զուաց ի մերն», «Անուանք դեղերոյ. հայերէն և արապերէն, և լադին
բառով», «Բառք Գաղիանոսի» և այլն (էջ 39): Այնուհետև, առանձին
բաժնով՝ «Մեկնութիւն բառից քերականի. վերծանութիւն. Ընթերցո-
ղութիւն», «Այս բառք են քերթողականք..., և են որ գեղջուկք են՝
որով ճարտասանքն վարին, զի յաճախապէս փոխաբերին սակս
զարդու ճարտասանից և հարկէ յոքնայամար եղանիլ», «Հանդէս
բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս:
Բառ է գեղջուկ», «Թարգմանութիւն պարսիկ բառի ի Վարդան գրոց»,
«Բառք խորանին» և այլն: Ներկայացվում է կրոնական և աստ-
վածաբանական մատենագրությունը (էջ 45), որոշ բնագրեր 12-16-
րդ դդ. գրականությունից և վիմագրությունից (էջ 64 - 73, թվով՝ 84
աշխատանք):

Բացի տպագիր գրականությունից օգտագործվել են նաև բազ-
մաթիվ ձեռագրեր, որոնք պահվում էին Վենետիկում, տարբեր վան-
քերում և եկեղեցիներում: Նա ուսումնասիրել է միջնադարյան

⁸ Ավելի մասին մանրամասն տե՛ս Պ. Մ. Մուրադյան, «Պատմութիւն պղնձէ քաղաքի»
գրույցի հայկական և վրացական պատումների ու նրանց փոխահարաբերության շուրջ
// Բանբեր Մատենադարանի, 1962, հ. 6, էջ 249: J. R. Russel, The Tale of the Bronze City
in Armenian // Armenian and Iranian Studies, Harvard Armenian Texts and Studies, 9, 2004,
250-261: Մ. Մալեք-Մոհամմադի, 10-րդ դ. «Պատմութիւն պղնձէ քաղաքի» բնագրի
փոխառյալ բառապաշարի շուրջ // Լրաբեր հասարակական գիտությունների, 2011, 3,
էջ 207-220:

բժշկական և դատական գրքերը. ինչպես՝ Սմբատ Սպարապետի և Մխիթար Գոշի Դատաստանագրքերը:

Յուրաքանչյուր բառահոդվածի նյութի վերլուծություն գրաբարի, միջին հայերենի, պարսկերենի, արաբերենի, վրացերենի, մենգրելերենի և ասորերենի համեմատությամբ վկայում է լեզուների հարցում հեղինակի բանիմացության մասին: Նա ներկայացնում է հետաքրքիր հնչյունական և ձևաբանական վերլուծություններ, բերում է մանրամասներ այդ լեզուների վերաբերյալ: Ի դեպ ստուգաբանություններ կատարելիս բառերը գրել է պարսկերենի, արաբերենի, վրացերենի և այլ լեզուների այբուբեններով: Նկատենք նաև, որ, տիրապետելով հին լեզուներին (հին պարսկերեն, հունարեն, լատիներեն, հին ֆրանսերեն և այլն) հաճախ անդրադառնում է այդ լեզուներից կատարված փոխառությունների ծագումնաբանությունը:

3. Բառացանկի կառուցվածքը: Բառարանում գլխաբառերը տրված են հայերեն այբբենական կարգով, որին հաջորդում է նրա տառադարձությունը, ապա տվյալ բառի գերմաներեն, որոշ դեպքերում ֆրանսերեն թարգմանությունը: Հիշատակվում են բառերի գրչագրական կամ բարբառային տարբերակները: Բառերի գրակշռող մասի համար ներկայացվում են գրավոր աղբյուրներում հանդիպող վկայությունները: Սա բառարանի արժեքավոր կողմերից մեկն է, որովհետև ըստ այդմ ավելի է մեծանում միջին հայերենի շրջանում տվյալ բառի գործածության հավանականությունը, այնուհետև նշվում է ծագումը ստուգաբանական վերլուծություններով:

Մատենադարանում պահվող Կարստի արխիվի թ. 249 թղթապանակի 2-րդ վավերագիրը վերաբերում է բառացանկի Ա տառով սկսվող բառերին:

Սույն հոդվածում ընդհանուր շարադրանքով ներկայացնում ենք Կարստի բառարանում տեղ գտած իրանական ծագման բառերի վերաբերյալ եղած ծագումնաբանական վերլուծությունները, որոշ դեպքերում նշում ենք մեր նկատառումները: Հոդվածում պահպանել ենք Կարստի կազմած բառարանի հիմնական կառուցվածքը՝ գլխաբառերը տրվում են հայերենով, որին կից նշում ենք

բացատրությունը (բառի իմաստը): Տեղի սղության պատճառով բաց ենք թողնում նրա տառադարձությունը, գրավոր աղբյուրներին հղումները տվյալ բառի մասին, այլն հեղինակային մեջբերումները:

Պետք է նշել, որ Կարստի ստուգաբանությունների մի զգալի մասը վերցված է նախկին ուսումնասիրություններից:

Կարծում ենք, որ միջին հայերենի փոխառյալ բառերի քննությունը կարևոր է հատկապես մատենագրության բնագրագիտական, բանասիրական և լեզվաբանական հետազոտությունների տեսանկյունից: Հոդվածում Կարստի բառարանի հիման վրա ներկայացնում ենք միջին հայերենից հայտնի իրանականին առնչվող բառերը (Ա տառն ամբողջությամբ, թվով՝ 141 բառ):

Ավելացնենք, որ բառացանկի ստուգաբանական և լեզվաբանական լրացումները կատարել ենք իրանական, արաբական և հայկական մի շարք ստուգաբանական բառարանների և ուսումնասիրությունների հիման վրա⁹:

Քննությունը ցույց է տալիս, որ փոխառությունների մեջ մեզ հետաքրքրող բառերը կարելի է ներկայացնել մի քանի խմբով:

1. Առաջին խումբը կազմում են այն բառերը, որոնց ծագման բացատրության ժամանակ իրանական լեզվի որևէ ձև չի բերվում՝ որպես զուգահեռ կամ համեմատության եզր: Դրանք հիմնականում համեմատվում են արաբերենի, ասորերենի և այլ լեզուների տվյալների հետ (բառին կից նշում ենք իմաստը՝ չակերտներում, նաև փոխառության աղբյուրը): Բերենք դրանցից հատկապես հետևյալները. *ազատ* «երկու մեծ բուրբակ, որ կիսում է չորս մասի հասարակածը և կենդանականաբար» (< արաբ. *aqd*), *աղաղ* «շարժուն քանոն» (< արաբ. *idāda*), *աղարոր* «մի տեսակ գոհար կամ մարգարիտ» (< արաբ. *durr* «մարգարիտ»), *աղիմ* // աղեմ «ներկված սեկ կամ կաշի» [(< արաբ. *adim* (*adēm*))], *ազապ* // *ազաբ* «ամուրի, չամուսնացած» (< արաբ. *azab*), *աթաբակ* // *աթաբեկ* // *աթաբէկ* // *աթապակ* «թագավորահայր, փոխարքա» (< թրք. *atābēg*), *աթխար* // *աղխար* //

⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837: Հ. *Աճառեան*, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-7, Ե., 1926-1935: Ն. *Բիւզանդացի*, Բառգիրք ստորին հայերենի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, Ժենն, 2000: Նույնի, Բառագիրք ի գաղղիերեն լեզուէ ի հայերեն, Կ. Պոլիս, 1884: Գ. *Ջահուկյան*, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե. 2010: Լ. *Հովհաննիսյան*, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990: Նույնի, Հայ-իրանական նոր ստուգաբանություններ, Ե., 2005:

օթխոր «վաղամեռուկ (խոտը)» (< արաբ. aḏxir), *ալամ* «դրոշ, դրոշակ» (<արաբ. Alam «դրոշ, դրոշակ»), *ալամ* «աշխարհ, երկիր, տիեզերք» (<արաբ. ālam), *ալանի* «հայտնի» արաբ. alānī), *ալատնի* «մի տեսակ խոտ» (< արաբ. alāṭīnī), *ալոճ* // *ալուճ* // *ալոճի* «մի տեսակ (վայրի) պտուղ» (< թրք. aluĭ, թրք. haləĭ, արաբ. halyĭ, halûĭ), *ալչի* «գաջ» (< թրք. alčy), *ալպուճ* «հնդկական մի խոտ» (< արաբ. albuĭĭ, buĭĭ), *ալսուս* «բուժիչ բույս՝ մկնականջ» (< արաբ. al-sûs), *ախինն* «մի տեսակ խոտ» (< արաբ. aqiyûn), *ախիննս* «մի տեսակ խոտ» (< արաբ. aqīnus), *ախլսաչ* «մի տեսակ բույս» (< արաբ. axarsāĭ), *ակրկարհայ* // *ակրկարհայ* // *ակրկարհա* // *ախրկարհա* «մի տեսակ խոտ» (< արաբ. āqirqarhā < ասոր. eqār qarxā), *աղիակ* «հարկի մի տեսակ» (< թրք. aġal haqqā), *աղիտա* «ռուպ, դոշաբ» (< արաբ. aqida «ռուպ», թրք. ayda), *աղպար* «մի տեսակ ծարիր», «համեմ» (< արաբ. aybar, yubār, yubara), *աղրմնամ* // *աղրմնայ* «մի տեսակ քոր» (< թրք. agry, agrymak), *ամալ* «գործ, նպատակ» արաբ. amal), *ամլաճ* // *ամլեճ* «մի տեսակ (հնդկական) ծառ» (<արաբ. amlaĉ), *այլդան* ailyan (< eyl «երկիր, ցեղ») (< թաթար. eyl-xān), *այուխ* «լուսաստղ» (< արաբ. ayyūq), *այպ* «ամոթ, թերություն, պակասություն» (< արաբ. ayb), *անագ* // *anag* (<արաբ. ānaq), *անապի* «մի պտուղ» (< արաբ. anab), *անմրուաթ* «անագորություն, անգութ» (< արաբ. mūrūvvet), *անշաղաւաթ* «մեծահոգություն, մարդասիրություն» (< արաբ. šafayat), *աքիլե* [< արաբ. aqila «(ազնվական) պարկեշտ կին], *աքիլ-մեհիք* «մի տեսակ բույս» (< արաբ. iklil-ul-malik), *աֆիոն* (< արաբ., պարսկ. afiyūn) և այլն:

2. Բառեր, որոնց ծագման բացատրության ժամանակ հիմնականում բերվում է իրանական լեզվի (հին պարսկերեն, միջին պարսկերեն և այլն, ընդ որում՝ քրդերեն և այլն) որևէ ձև, երբեմն ի համեմատություն արաբերենի և այլն. *ազեստե* [(*ազեստե* [āšistā] ašestan), *ազուռ* «աղյուս» (< նպրսկ. āgūr, քրդ. ājūr), *ազատ-դրախտ* «մի տեսակ ծառ» (< նպրսկ. āzād-deraht), *ազար*, *ազարեղ* (< պրսկ. āzār), *ազարին* «ալ կարմիր մի ծաղիկ» (< պրսկ. ādaryūn), *ազբ(ն)* «գործելիք կտավի ծոպերը» (< պրսկ. asb « ձի»), *ազտիհ* «ազատություն» (< նպրսկ. . āzātih «ազատություն», նպրսկ. . āzādī «ազատություն»), *աթաշ* «կրակի պարսից անվանումը» [< պրսկ. ātaš,

մպրսկ. (պազ.) ātaš, մպրսկ. ātaxš, զենդ. ātarš], *աթաշակ* «ախտ, հիվանդություն» (< պրսկ. ātašk «վատ ցավ»), *աթաշիհարիստ* «կրակապաշտ» (< պրսկ. ātašparast «կրակապաշտ»), *ալ(p)* «մի տեսակ ախտ» (< պրսկ. āl), *ախոր* // *ախոռ* «ձիու ախոռ» (< պրսկ. āxwr, āxūr «ախոռ», մպրսկ. āxvar, āxvar i stōrān «զոմ», քրդ. axūr, աֆղան āxūr, զենդ. *āxvarəna), *ախսրթամար* «մի տեսակ հարկ» (< արաբ. askar, պրսկ. lascar), *ախտարմաղ* // *ախտարմոլ* «աստղագուշակ» (< մպրսկ. axtarmār «աստղագետ, աստղաբաշխ»), *ախտար* «աստղահմա, ժամագետ» (< մպրսկ. āxtar), *ախրապատին* // *ակրաբադին* «բժշկարան, դեղերի գիրք» (< արաբ., պրսկ. aqrābādīn), *ակիշ* «կեռ, երկաթի ճանկ» [< նպրսկ. . āgīš, ēgīš (āgīš)], *ահէնք* «մագնիս» (< պրսկ. āhāng), *ահշահ* ahšāh «մի տեսակ ցավ» (< արաբ. ahšā, պրսկ. ahšā), *ադալն* «ադալական» [< արաբ., պրսկ. azala (adhala)], *ադեդ եամանի* «ալ կարմիր ադեդ» (< արաբ., պրսկ. aqīq «շատ թանկագին քար, սարդիոն»), *ադվաշբանկ* // *ադվէշբանկ* [< նպրսկ. bang(id)], *աճուճ ու բաճուճ (մաճուճ)* (< արաբ., պրսկ., թրք. âjûj-u-mâjûj «թգաչափ հասակով, յոթ թգաչափ մորուքով մարդկանց (առասպելական) ցեղ, որ իբր երևան է գալու աշխարհի վերջում. գոգմագոգն»), *ամանաթ* «ավանդ տրված բան» (< արաբ., պրսկ., թրք. amānat. amānat «ավանդ»), *ամլուխտ* // *ամլախտ* «կոշիկ» (< նպրսկ. hamlahti). *ամօխտայ* «պողպատ» (< պրսկ. amûhta), *այախ* [< թրք. ayağ (ayay), պրսկ. ayağ «զավաթ, բաժակ, թաս, գավ»), *այարիճ* «բադաղդյալ դեղ» [< արաբ., պրսկ. . āyārīj (ayārīj) , āyāre], *այեան* // *այան* «բացահայտ, իսկապես» (< արաբ., պրսկ., թրք. ayan), *այենակ* (< պրսկ. āyīn, āyēn «օրինակ»), *այենպետ* (< նպրսկ. āyēn-bād, մպրսկ. āden-pat, պրսկ. āyen, āyēn, āyīn+ pat, bad), *անբադդ* «անբախտ» (< հայ. -ան և նպրսկ. baxt), *անգուման* «անկասկած, անսպասելի» [< մպրսկ. (պազ.) agumān, հայ. -ան և պրսկ. gumān], *անգուտան* // *անկիտան* «մի տեսակ բույս ու համեմ» [< նպրսկ. angudān, angidān (angûyān), արաբ., պրսկ. anjudān, anjidān], *անդիշայ* (< պրսկ. andīša «հոգ, մտածություն, մտմտութ»), *անդոհ* (< նպրսկ. andōh «տխրություն, տրտմություն», պրսկ. andōhgīn, andōhnāk «տրտմագին, տխրագին, dreary», մպրսկ. andōh), *անխուէշքաբէ* «սեփականություն, property» (< մպրսկ. xwēškār, պրսկ. x'ēškār «ազգական, սե-

փական», *xwêškārī* «սեփականություն»), *անծրութ* // *անգրուտ* // *անձրութ* (< նալրսլ. *anzarût*, *anjarût*, արաբ. *anzarût* «մի տեսակ խեժ կամ ռետին», արաբ. *anzarut*), *անճարակ* «մկնականջ խոտը» (< պրսլ. *anjarak*, *anjğirak*. «մի տեսակ ռեհան»), *անճիտան*//*անճուտան* (< արաբ. *anjūdān*, պրսլ. *angudān*, *angidān*), *անճիրիտամ* «մի տեսակ բույս» (< նալրսլ. *anjīr-i-ādam*), *անճուք* (< պրսլ. *anjarak* «մկնականջ բույսը»), *անուշադր* «պաղլեղի նման մի նյութ» (< մալրսլ. **anōšādūr*, պրսլ. *nūšādir*), *անջիման* «ժողով» (< մալրսլ. *anjāman*, *hanjāman* «ժողով», պրսլ. *anjuman*. հալրսլ. **hanjāmana* «ժողով»), *աշքարա* // *էշկեարէ* // *էշկյարէ* «ակնհայտ» (< նալրսլ. *āšikār*, *āšikāra* «ակնհայտ, ակներև»), *ապար* «այրած արձիճ» (< արաբ., նալրսլ. *ābār*), *ապիզար* «նզովք, անէծք կամ նզովյալ, անիծյալ» (< պրսլ. *bēzār* «ձանձրացկոտ, տաղտկացած», *bēzārī* «ձանձրույթ, անհանգստություն, չարչարանք»), *ապուզնայ* // *աբուզնայ* «կապիկ» (< պրսլ. *abūzna*, *būzīna*, *pūzīna*, արաբ. *abūzinna*), *ապուկալին* // *պուկալամին* // *ապուդալմանին* «մի տեսակ կտորեղեն» (< արաբ. *abū-qalamūn*, պրսլ. *Būqalamūn* «ծաղկանկար դիպակ»), *ապուռէշ* // *ապուռիշ* // *ապուռիշի* (< պրսլ. *āb-rez*), *ապրիշում* «մետաքս» (< մալրսլ. **aprešum*, պրսլ. *abrešūm*, *abrešam*, աֆղան. *wrešam* «մետաքս»), *ապրուն* (< պրսլ. *ābrūn* «գառան դմակ»), *ապրուր* «սմբուլի տեսակից մի բույս» (< պրսլ. *ābrūd* «սմբուլ, նունուֆար»), *ասան* «առավոտ» (< մալրսլ. **āsān* «առավոտ», պրսլ. *xurāsān* «արևելք»), *ասլանճ* «ներկատու վայրի մի խոտ» (< նալրսլ. *aslanj*, արաբ. *ḡanab-al- ḡail*. արաբ. *Islīx*), *ասլիսու* // *ասլու* «1. թիթեռնածաղկավոր մի բույս. մատուցակ: 2. Մատուցակի արմատ» (< արաբ. *al-sūs*, *aṣl-as-sūs*, պրսլ. *asl-i-sūs*, *asl-i-sūs* «ասմին ձեթ» (< արաբ., պրսլ. *yāsamīn*, *yāsmīn*), *ասուպ* «թռչող աստղ» [< արաբ., պրսլ. *šahāb*, *šihāb* (հոգն..) *šuhub*, արաբ. *ašhub*, արաբ. (հոգն.) *šuhub aššuhub*), *ասպաստ* «առվույտ խոտը» (< նալրսլ. *aspast*, *ispist* (*sipist*, *isfist*), *ասպրում* // *ասփրում* (< պրսլ. *ispāryām*, *āspārym*, պրսլ. *šāhspram*, պրսլ. *šāhisparam*), *աստան* «հագուստի ներսի կողմը դրված շորը» (< մալրսլ. **āstār*, պրսլ. *āstar* «աստառ»), *ասփրիմն* «հանան, եհանան» [< մալրսլ. *ispārām-āb*. պրսլ. *asparym*, *isparyam* (*šāhisparayam*)], *արագ* // *արաք* «թիթեռնածաղկավոր մի թուփ» (< պրսլ. *arāk*, *erāk*), *արանդ* «կոճղեզ,

բույսի տակի սոխը» (< նպրակ. arand), *արգրեղ* // *արգրըղ* // *արգրըթ* // *արգրղ* «մի մեծ պաշտոնյա՝ պարսից արքունիքում» (< պրսկ. *arz-bād), *արզն* «պաղլնդ, շիբ» (< արաբ., պրսկ. arđ, arz), *արկ* «ավան» (< մպրսկ. *ark, պրսկ. ark «միջնաբերդ, acropolis»), *արճուան* «մի տնասկ բույս՝ կարմիր ծաղիկներով» (< արաբ. arǧuvān, պրսկ. aryavān), *արմաղան* // *արմուղան* «նվեր, ընծա» (< պրսկ. armayan, armayān «նվեր, ընծա»), *ալթխոր* // *օթխար* // *օթխոր* // *օթխոր*, // *իթխիր* «մորմազգիների ընտանիքին պատկանող բույս, վաղամեռուկ» (< արաբ., պրսկ. idhur, idxir), *աւշակ* // *օշակ* // *օսակ* // *օշախ* // *օշաղ* «խեժանյութ՝ ստացվող օշակ բույսից» (< արաբ. ušaq, uššaq, uššaj, պրսկ. ūša), *աւշնէ* «կաղնի ծառի խաւզն ապիտակն» [< արաբ., պրսկ. ušna (všna)], *ափսոս* «վա՛յ, ավա՛ղ» (< նպրսկ. afsos, afsus, մպրսկ. afsōs, պազենդ. awasōs) և այլն:

3. Բառեր, որոնց ստուգաբանությունը կա՛մ ամբողջովին իրենն է, կա՛մ դրանցում ունի որևէ ճշգրտում, լրացում և այլն (ամեն անգամ բառահոդվածի վերջում նշվում է՝ Karst). *ազլիմա* // *ախլիմիա* «մի տեսակ բույս» (բժշկ.) (< արաբ. al-qalimiā // qlīmiā), *աթլազ* «շիթ, աթլաս» (< արաբ. atlas «շիթ, աթլաս»), *աթուն* // *աթունի* «հնոց» (< արաբ. atūn, attūn, ասուր. atūna, atūun, ասոր. atōna, atūn «հնոց»), *ալաէ* (< թրք. alet, քրդ. alet. hqū. alat), *ալաջայ* (< թրք. alağa, alača), *ալիկ* «անասունի կեր» (< արաբ. aliq «անասնակեր»), *իլիմա* «մի տեսակ բույս» (< արաբ. qalimiyā, al-qalimiā, հմմտ. պրսկ. Aqlimiyā, լատ. cadmia, հուն. Κοδμεια), *ախրիզան* «մի տեսակ (գեղեցիկ) ծաղիկ» (< նպրսկ. angriz. արաբ. abu xanjār), *ահմաղան* (< նպրսկ. ahmatān, hamatān, նպրսկ. hamadān), *աղալն* // *աղալուն* // *աղալական* «մկան(ունք)» (< արաբ., պրսկ. azala (adhala), արաբ. ađala), *աճալ* «մի տեսակ բույս» (< արաբ. aǧala «միտեսակ բույս»), *ամառաթ* // *ամառաթ* «պանդոկ» (< արաբ. imārat «բարեպաշտական խոհանոց» < պրսկ. ham - արաբ. mahārat), *ամիրայ* // *ամիր* «էմիր» (< ասուր. amīra «պետ», արաբ. amīr «պետ, հրամանատար»), *ամլ* «ամեղ, ամուղ» (< հպրսկ. * āmrda), *ամպաճ* // *անպաճ* // *անապաճ* // *անապ* // *անպ* «մի տեսակ (հնդկական) միրգ» (< արաբ. anab, anba. հմմտ. պրսկ. anbaǧ), *ամօխտայ* «պողպատ ամօխտայ» (< պրսկ. amûhta), *այարիճ* «բաղադրյալ դնդ» (< արաբ., պրսկ. āyārīǧ (ayārīǧ), պրսկ. āyāre], *այենպեն*

(< նպրակ. āyēn-bād, մպրակ. āden-pat, պրակ.. āyen, āyēn, āyīn+ pat, bad (bād), *անխուէշքարէ* «սեփականություն» (< մպրակ. xwēškār, պրակ. xʷēškār «ազգական, սեփական», xwēškār «սեփականություն», հմմտ. պրակ. ham+ ɸ(x)vēškār), *ապրշահր* (< պրակ. abaršahr, մպրակ. aparšaθru), *ասպալանճ* «մի տեսակ խոտ» (< պրակ. asp-launǰ), *ասպուզան* // *ասբուսան* «մի տեսակ լեռնային գեղեցիկ ծաղիկ» [< պրակ. ispäyûl, äspäyûš (isfäyûš)] և այլն:

4. Որոշ բառերի ստուգաբանության կամ քնության դեպքում Կարստն օգտվել է իր նախորդների (Հ. Հյուբշման, Ն. Բուզանդագի, Ա. Վարդանյան և ուրիշներ), առավելապես Հ. Աճառյանի ստուգաբանություններից: Օրինակ՝ *ազուռ* «աղյուս» (< նպրակ. āgūr, «աղյուս») (ԱՃ.), *ադիմ* // *ադեմ* «ներկված սեկ ` կաշի» [< արաբ. adim (adēm) «կաշի, կարմիր ներկած կաշի»], *ազբ(ն)* «գործելիք կտավի սկզբի ծոպերը՝ թելերը», (հոգն.) azbuns (*ազբունս*), *ազբախումբ* «բազմախումբ», *ազբոց* «ջուլհակի սանտր» (< պրակ. asb. «ձի») (ԱՃ.), *ազտիհ* «ազնվականություն, իշխանություն» (< մպրակ. āzātih «ազատություն, ազնվականություն», նպրակ. āzādī «ազատություն») (ԱՃ., ՀԱԲ. 37), *աթաբակ* // *աթաբեկ* // *աթաբեկ* // *աթապակ* «թագավորահայր, փոխարքա» (< արևմտ. թրք. atābēg «թագավորի հայր», չաղաթայ. atābeg «մեծ հայր, կառավարիչ, սուլթանի որդիների ուսուցիչը») (Հյուբշ., 261), *աթխար* // *ադխար* // *օթխոր* «վաղամեռուկ խոտը» (< արաբ. aḏxir) (Հյուբշ., 261), *ախեստ* axest «պատուհան, պահանգ» (< նպրակ. agišta, aqışta «մառան, մթերանոց») (ԱՃ.), *ախոր* // *ախոռ* «ձիու ախոռ» (< պրակ. āxwr, āxūr «ախոռ», մպրակ. āxvar, āxvar «գոմ», քրդ. axūr, աֆղան. āxūr, զենդ. *āxvarəna) (ԱՃ.), *ամանաթ* «ավանդ տրված բան» (< արաբ., պրակ., թրք. amānat. amānat «ավանդ») (ԱՃ.), *անգուտան* // *անկիտան* [< նպրակ. angudān, angidān (angûyān), արաբ., պրակ. anjudān, anjidān «ռետին ունեցող մի ծառ»] (ԱՃ.), *անծրութ* // *անգրուտ* // *անձրութ* (< նպրակ. anzarût, anjarût, արաբ. anzarût «մի տեսակ խեժ կամ ռետին») (Ն. Բյուզ.), *անուշադր* «պաղլեղի նման մի նյութ» (< մպրակ. *anōšādūr, պրակ. nūšādir, թրք. nišādər, վրաց. nišādūri, բուլղ. nišadūr, ռուս. нашатиръ) (ԱՃ.), *ապար* «այրած ապար՝ արձիճն» (< արաբ., պրակ. ābār) (Հյուբշ., 306), *ապուզնայ* // *աբուզնայ* «կապիկ» (< պրակ. abūzna, būzīna, pūzīna, արաբ. abūzinna)

(Հյուբշ.), *ապրիշում* «մետաքս» (< մալթ. *aprēšum, պրսկ. abrēšum, abrēšam, աֆղան. wrešam «մետաքս», քրդ. avrīšim, ebrīšim, armuš, hewirmūš, վրաց., մենգր. abrešūmi, ասուր. abrišūm, արաբ. ibrīsum, բրբ. ebrüšūm) (ԱՃ.), *ասան* «առավոտ» (< նալթ. *āsān «առավոտ», պրսկ. xurāsān «արևելք» (ԱՃ.), *աստան* «հագուստի ներսից կարված շոր» (< մալթ. *āstār, պրսկ. āstar «աստան, lining»), (Հյուբշ.), *արգրէղ* // *արգրէղ* // *արգրէր* // *արգրէղ* «մի մեծ պաշտոնյա (պարսից արքունիքում)» (< պրսկ. *arz-bād) (Վարդ., ՀԱ, 1922, 281):

5. Մեկ-երկու դեպքում բառարանային միավորներ են ընտրված հատկանունները, նշենք դրանցից մեկ-երկուսը. *խլրծըխէ* «Եղև գրնալ խան Ոստիֆի յԱխրծըխէ քաղաք Վրացին» [< վրաց. Axalcixe «Ախալցխա (քաղաքանուն)»], *Ապու-յԱլի* «Աբու Ալի, Աբու Ալի Սինա. Սինայի որդին, Ավիցենա» (< պրսկ., արաբ. Abū Alī (Al Hasain b. Abd Allāh b. Sina.) Ibn Sina»), *Արգռում* «Էրգրում (քաղաքանուն)» [< արաբ., պրսկ. arzyrūm, arz-i-rūm (հմմտ. արաբ. arz «գավառ, քաղաք» և «Հռոմ»)ն այլն:

М. Малек-Мохаммади. “Словарь среднеармянского языка” Ж. Карста – первоисточник армяно-иранского языкового исследования. Армяно-иранские и армяно-арабские культурные, экономические и литературные связи служили основанием для многих иранских и арабских заимствований в среднармянском языке (XII-XVI вв.).

Рукопись “Словаря” Ж. Карста по существу является этимологическим словарем среднармянского языка, т.к. дается происхождение заимствований из иранских и арабских языков, а также представлена названий растений и лекарственных трав, используемых в среднармянском языке.

Этот ценный письменный памятник исследован нами впервые как научный источник с лексикологическими и этимологическими целями. В статье мы представляем структуру и источники словаря, главным образом иранские, арабские заимствования, а также этимологию некоторых из них. Рукопись словаря готовится к изданию спонсорством WV¹⁰:

M. Malek Mohammadi . The manuscript of J. Karst’s “Wörterbuch des Mittelarmenischen” as a primary source of Armenian-Iranian linguistic researches. The Armenian-Iranian and Armenian-Arab cultural, economic and literature ties have

¹⁰ VolkswagenStritung, Between Europe and the Orient – A Focus on Resaerch and Higher Education in/on Central Asia and the Caucasus. (<http://titus.uni-frankfurt.de/curric/konftbil/readercpl.pdf>)

served as a basis for the linguistic correlations and numerous Iranian and Arab loanwords in Medieval Armenian (12th -16th centuries). .

The non-published vocabulary "Wörterbuch des mittelarmenischen" of J. Karst is a historic-etymological vocabulary of Medieval Armenian where the author paid special attention to the whole thesaurus of Middle Ages with etymologic purposes. The etymology of plants' and drugs' names used in the Medieval Armenian are also presented.

The manuscript of this Dictionary is investigated by us for the first time as a scientific source with linguistic and etymological purposes. In this article we present philological and linguistic activities of J. Karst, structure and sources of his Dictionary, the lexicon of Iranian, Arab and other loanwords), the etymological analysis of those words, and our considerations.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ
ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ**

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Հ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Ա. Ներածություն: 12–13-րդ դդ. պատմական և քաղաքական հեղափոխումների ժամանակշրջան էր հայ ժողովրդի կյանքում: Այս շրջանում միջին հայերենի գրական նորմավորման համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել՝ շնորհիվ Կիլիկյան պետության գոյության: Գիտական ծավալուն գրականության մեջ զանազան բնագավառներին վերաբերող գրքերի թվում զգալի տեղ են զբաղեցնում նաև իրավական բնույթի երկերը՝ Մ. Գոշի «Գիրք դատաստանին» և Ս. Սպարապետի «Անսիգ Անտիոքայ» օրենսգիրքը (բաղկացած երկու մասից՝ «Անսիգ պարոնաց և լիճ ճորտերոյ» և «Անսիգ Անտիոքայ քաղաքականաց»): Ժամանակագրական առումով սրանցից առաջինը՝ Մ. Գոշի աշխատությունն է՝ հեղինակված 1184–1193թթ., երկրորդը՝ Ս. Սպարապետի դատաստանագիրքը, որը թվագրվում է 1266թ., և երրորդը՝ «Անսիգ Անտիոքայ»-ն, որի ստեղծման ստույգ տարեթիվը հայտնի չէ:

Մ. Գոշի դատաստանագիրքը թեև պետական օրենսդիր ժողովի չկայացման պատճառով օրենսգրքի կարգավիճակ չստացավ, բայց այնուամենայնիվ լինելով ժամանակի պահանջներին բավարարող գործ՝ երկար ժամանակ ծառայեց որպես գործող օրենսգիրք: Այն ունի մի շարք խմբագրություններ (Խ. Թորոսյանի գնահատմամբ՝ Ա, Բ, Գ խմբագրություններ): Բացի հայերեն խմբագրություններից հայտնի են նաև լատիներեն, ղփչաղերեն, վրացերեն և ֆրանսերեն խմբագրական տարբերակները:

Դատաստանագիրքը բաժանված է երկու հիմնական մասի՝ «Եկեղեցական կանոնք» և «Աշխարհական օրենք», չհաշված «Նախադրություն»-ը (ներածական մաս), որի գլուխներից վերջինը՝ ԺԱ-ն, հեղինակի հիշատակարանն է՝ «Յիշատակարան սակաւութ» վերնագրով: Աշխատության բնագրում հոդվածներն անվանված են տարբեր կերպ, ավելի հաճախ՝ «դատաստան», այլև «ճառ», «գլուխ», «վիճակ», «դպրութիւն» և «դրութիւն»: Դատաստանագրքի յուրա-

քանցյուր հողված բաղկացած է երկու մասից: Առաջին մասում նշվում է այն աղբյուրը, որից օգտվել է հեղինակը և որը բառացիորեն մեջ է բերվում որպես կանոն, իսկ երկրորդ մասը՝ հեղինակի սահմանումն է, որով աղբյուրի իրավադրույթը կա՛մ հաստատվում է, կա՛մ էլ լրացվում:

Եթե Մ. Գոշի գործն ընդհանուր իրավական բնույթ ունի, ապա Ս. Սպարապետինը՝ կիլիկյան հայկական պետության պաշտոնական օրենսգիրքն էր, ըստ որում՝ վերջինս էականորեն չէր տարբերվում Մ.Գոշի ուրվագծած կառուցվածքից և բովանդակությունից, անգամ դիտվում է նույնի խմբագրությունը՝ որոշ փոփոխություններով ու լրացումներով հանդերձ (Խ. Թորոսյանի խմբագրությամբ՝ «Գիրք դատաստանի», ԼԵ):

Ս. Սպարապետն իր դատաստանագրքում օգտագործել է բազում աղբյուրներ, որոնց շարքին են դասվում Մովսիսական օրենքները, հայոց կանոնագիրքը, ասորական դատաստանագիրքը, հռոմեական օրենքների ժողովածուն, մասնավորապես՝ «Հուստինիանոսի կողեքսը» և հայկական իրավունքին վերաբերող փաստական նյութեր (տե՛ս ն.տ. ԼԵ, հջ.):

Քննվող դատաստանագիրքը բաղկացած է յոթ բաժնից և ընդգրկում է 202 ընդարձակ հոդված՝ «Օրենք և կանոնք ընդհանրական եկեղեցականաց եւ աշխարհայնոց» ընդհանուր վերնագրով: Բաժինները վերնագրված են հետևյալ կերպ.

Առաջաբանությին (Վասն թագաւորաց եւ որդոց նոցին), ա) Ժառանգութին հայրենեաց, բ) Իրաւունք ծնաւդաց եւ որդոց, գ) Վասն գրաւելոց եւ այլ ցեղ ստացուածոց իրաւանց, դ) Իրաւունք վաճառականաց, ե) Վասն տիաթկներոյ, զ) Իրաւունք ծառայութեան և է) Վասն վնասաց եւ գրկանաց վճարելոյ իրաւունք:

Ժողովածուի առաջին մասը վերաբերում է իրավունքներ ունեցող ճորտերին, իսկ երկրորդը՝ քաղաքացիներին: Ս. Սպարապետի իրավաբանական աշխատություններից պահպանվել է նաև «Անսիզ Անտիոքայ» օրենքների կողեքսը, իսկ ահա «Անսիզ Երուսաղեմայ» վերնագրով օրենսգիրքը մեզ չի հասել: Նախորդի համար հիմք է ծառայել հին ֆրանսերեն բնագիրը, որի ճշգրիտ թարգմանությունն է հիշատակված կոնոնագիրքը: Դատաստա-

նագիրքը բաղկացած է երկու մասից, ինչպես նշվեց վերևում, առաջին մասն ընդգրկում է 17 գլուխ, երկրորդը՝ 21 գլուխ:

Բ. Հոմանիշ, հականիշ և համանուն բառեր: Ինչպես հայտնի է՝ լեզվի զարգացման տարբեր փուլերում տեղի են ունենում բառապաշարի տարբեր շերտերի քանակական փոփոխություններ, որոնք պայմանավորված են իմաստով իրար հարաբերակից միավորների նվազմամբ կամ հակառակը՝ աճով: Միջինհայերենյան փուլում զգացվում է որոշ լեզվական ոճերի հատուկ բառաշերտերի ընդգծված աշխուժացում: Դա վերաբերում է նաև իրավական բնույթի երկերին: Քննվող իրավագիտական աշխատություններում նկատվում է նախ և առաջ հոմանիշ բառերի անբնագրոս գործածություն: Հոմանիշները կամ միաբնույթ են, այսինքն՝ բառակազմական և ձևակազմական տեսանկյունից չեն տարբերակվում, այլև տարաբնույթ: Նույնպիսի տարբերակում կարելի է կատարել նաև հոմանշային շարքերում՝ բնիկ և փոխառյալ անդամներ առանձնացնելու դեպքում, այսինքն՝ կան շարքեր, որոնք ներկայանում են լոկ փոխառյալ անդամներով, և կան շարքեր, որոնք տարաբնույթ են հիշված տեսանկյունից:

Ստորև թվարկվող շարքերում գերակա անդամը (դոմինանտը) դնում ենք առաջին տեղում. *ակտար* «հաշվետար» - *սրկբուն* «քարտուղար, գրագիր», *անտեղութիւն* «աւտարութիւն» - *առեզր(ել)* «տնով-տեղով լքել հեռանալը», *բանադրել* - *այեմո ընկնիլ* «գործի անցնել, ազդեցություն ունենալ», *բանառած* - *խլոցք* «գողոն», *արվլէճ* «արտոնություն» - *աւդրած* «արտոնված, առանձնաշնորհ», *գանկատ* - *ջալունջ*, *դաղ* «դրոշմ» - *սիգեղ* «կնիք», *դարպաս* «դատարան» - *տիւան*, *ըռահ* «հասանելիք. բաժին» - *հառնէզ* «շարժական գույք», *հաւատադիր* - *դոմետիկոս* «դավանաբան, հավատադիր», *ճորտ* - *պառիկոս* «(ենթակա) ճորտ», *մեղկան* - *հիլայած* «մեղադրյալ», *մսխել* - *խանծրիլ* «վատնել, վաճառել», *նօտար* - *նոմիկոս* «գրագիր», *շեպոնել* «հրել, բոթել» - *րթումն* «ազատ արձակել, բաց թողնել», *պայլ* - *լիճ*, *պարոն* - *տուկ*, *պատգամասաց* - *դեմետրիտոս* «պատգամավոր» - *չաւուշ* «պատգամաբեր», *սիզնայ* «մարտական դրոշ» - *շուղ*, *վարձանք* - *տուայր* «հարսանեկան նվերներ», *քիթ*

լինիլ «ազատվել» - չմոել «դատական պատասխանատվությունից ազատ մնալ», օրէնք - անսիգ, տիպաւն - նաւմաւս և այլն:

Առկա են նաև որոշ թվով հականիշ բառեր, որոնք բոլորն էլ տարարմատ են և հիմնականում ընդգրկում են տերմինային միավորներ: Դրանք կարելի է դիտել որպէս հակադրական հականիշներ. *ահուտ* «երկյուղալի» - *աներկեղ (ութին)*, *բլայթել* «դատվարել» - *ֆայլել* «դատի մեջ տանուլ տալ», *հառնէզ* «անշարժ գույք» - *գումաշ* «շարժական գույք», *պարոն* - *ճորտ*, *պոռոք* «օժիտ» - *մահր* «ամուսնական նվեր», *ջաստել* «պատժել» - *չմոել* «դատական պատասխանատվությունից ազատ մնալ», *տըֆընդել* «պաշտպանել» - *հիլայել* «մեղադրել» և այլն:

Համանունները այնքան էլ շատ չեն: Սրանց մեջ միակ համարմատ համանունը թերևս *շալակն* է, իսկ մյուսները տարարմատ են. *մազատ* «աճուրդ» - *մազատ* «հակառակ. ներհակ», *շալակ* «բեռ» - *շալակ* «պարտականություն», *ջաստել* «պատժել» - *ջաստել* «ամբոց, դոյակ»:

Գ. Տերմինաբանությունը: Տերմինային բառաշերտը բազմաբնույթ է մի շարք առումներով: Նախ՝ տերմինների լեզվական ադբյուրը տարբերակված է: Հայկականից զատ և նույնիսկ առավել հաճախություն ունեն օտար անունները՝ լատիներեն, հունարեն, ֆրանսերեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն տերմինները: Երկրորդ՝ զգալի թիվ են կազմում նորաստեղծ տերմինները, որոնց բառակազմական բաղադրիչները զուտ հայկական կամ հնուց լեզվի մեջ արմատացած օտար հիմքերի ծավալումներ են: Դատաստանագրքերի տերմինաբանությունը, որքան էլ տարօրինակ թվա, կարելի է ասել՝ մեծ մասամբ դուրս է մղվել ժամանակակից տերմինա-գործառական ոլորտներից և ստացել լոկ պատմական ունեցվածքի արժեք: Փոքրաթիվ այն տերմինները, որոնք արդի լեզվական այս կամ այն տարբերակում դեռևս շարունակում են գործառել՝ հիմնականում պարսկական ծագման, թերևս, խոսակցական ճանապարհով անցած փոխառյալ անուններ են՝ *աբ(բ)աս*, *ապահարգ(ել)*, *առնանգ(ել)*, *գանկատ*, *դադ* «կնիք, դրոշմ», *դատստան*, *զնդան(ել)*, *խանդակ*, *խարճ* «ծախսեր», *խիշտ* «նիզակ»,

կապալ, հալալ, հարամ, մարկ, նադտ, նօտար, չաուշ, պարոն, տրըստել (դրստել, դրրուստ) և այլն:

Դատաստանագրքերի տերմինային բառապաշարն ունի շատ հստակ տարբերակված բաշխում: Սրանց մեջ մեծ տարածում և գործածական հաճախություն ունեցող բառերը հենց իրավական տերմիններն են:

ա) Այրկություն, անայր, անբեկար, անընկմահ, անդատապարտ, անլտորդություն, անպարապություն, անսիզ «օրենք», անտեղություն, աշխարհաւարություն, ապահարզել, առնանգ //առուգնայք, արձակապաշտան, աղդել < հֆրանս. *otreier* «արտոնել», աւտարություն, աւրինադրակից, բահր < պրսկ. *bahr* «փայ, շահաբաժին», բանաղդել «գործադրել, ազդեցություն ունենալ», բանառած «գողոն. կողոպտած իր», բաւլաւ «ստերջ, ամուլ», բլայթել < հֆրանս. *plaidier* «դատ վարել. դատը պաշտպանել», բրվլէճ < հֆրանս. *privilege* «արտոնություն», գանկատ, գերետարություն, գրաւկնել, գումաշ < արաբ. *qumāš* «շարժական գույք», դաղ < պրսկ. *daq* «կնիք, դրոշմ», դատաստանել, դարպաս «դատարան», դիաթէկ //տիաթիկ < հուն. *diadéke* > «կտակ», դիմախօսություն, դիմոս (դնել) < (?) «հարկատու դարձնել», երդմնող, զընդանել, ըռահ < պրսկ. (?) «հասանելիք, բաժին», ըոզակ < արաբ. *arzāq* «ապրանք. ինչք», ըռըշֆաթն < պրսկ. *rošvat*, «կաշառք», ըռիմոն < արաբ. *rimun* «գրավ», խիսմն < արաբ. *xasm* «դատի մեջ հակառակորդ», խլոցք «գողացած իրեր», կահրայ < արաբ. *qahrā* «բռնություն, ապստամբություն», կամախ < արաբ. *qamā* «հավասարագոր», կապալ < արաբ. *qabāl* «կապալ», կոթրու < թուրք. *gotürü* «առանց կշռելու, միանվագ», կոփիչ, կրիտ < հուն. *crites* «քննիչ, նոտար», հայրենեթփություն «հայրենադավություն», հալալ «արդար. ազնիվ» < արաբ. *halāl* «հասք», «հասույթ», հարամ «ապօրինի» < արաբ. *harām* (նույնը), հարմի «ավագակ» < արաբ. *harāmi*, հարկաւորիլ «թույլատրել, արտոնել», հիլայել «ամբաստանել» < արաբ. *hiḷa*, հրիտակ < հուն. *herditas* «ժառանգություն», հողադրամ, հուքրել «անարգել» < արաբ. *haqir* (նույնը), մեղկան «մեղավոր, հանցավոր», մեռելոյթք «մեռյալի թաղման ծախսեր», մերձաւորիչ «սեռական գուգընկեր», մոտել «ապստամբել, ըմբոս-

տանալ», յեմո ընկնիլ «գործի անցնել» < արաբ. *amr* «գործ», նաւմաւս «օրենք» < հուն. *nómos* (նույնը), նեհ < պրսկ. *nerx* (?) «սակագին», նօտար < հուն. *nota'rios* «գրագիր», նոմիկոս «նոտար» < հուն. *nomiko's*, շալակ «պարտականություն», շմոր «խառնակություն, իրարանցում», չեքչեք «կողմնակի, ապօրինի հարկ», չմոել «պատասխանատվությունից ազատ մնալ», պարսաւադէտ, պոխսոխմոն < հուն. *próstimon* «տոկոսային տուգանք», պոռոյք // պոռոյգ «օժիտ, բաժինք», ջալունջ < հֆրանս. *chalonge* «բողոք, գանգատ», ջաստել < հֆրանս. *chastier* «պատժել», սազայ տալ/այնել «կալանք դնել. բռնագրավել», սալլել «ցուցմունք տալուց հրաժարվել» < արաբ. *salla* «լեզուն կտրել. պապանձել», սիմն «նյութական փոխհատուցում», ստեզրել «տնով-տեղով լքել, հեռանալ», վարձանք, վարձելիք, տահրրկել < արաբ. *tahrik* «դատական պարտություն կրել», տրֆընդել < ֆրանս. *defendre*, «պաշտպանել», տիպօն < հուն. *týpon* «կարգ. կանոն», տիւանպաշի < պրսկ. *divānbaši* «դիվանապետ», տինցի «դատավոր» < պրսկ. *divān* հիմքից, տուայր < հֆրանս. *douaire* «վարձանք, հարսանեկան նվերներ», տուրտվել «մատնել. դավաճանությամբ հանձնել», (ի վերա) փնդոել «իրավունքները վերականգնել», քաշանք «նախատինք. անպատվություն», քիթ < հֆրանս. *quite* «ազատ, զերծ. անմասն», ֆայլել < հֆրանս. *faillir* «դատի մեջ պարտություն կրել»:

բ) Վարչական տերմիններ. – *բաժնուն* «մաքսատուն», *բանտ-վաղ* «գործատու», *եղենդիար* < հուն. *selentarios* «կայսերական պալատի բարապան», *եսկոպոտիրայ* «պալատական պահակ» < լատ. *exkubitor* (նույնը), *լաւդաւոհաս* «ծախու ապրանքի գին» < հուն. *logariasias* «գումար. հաշիվ», *լիճ* < հֆրանս. *lige* «վասալ, ավատառու», *խանձրիլ* «ծախսել, մսխել», *խաստ* < արաբ. *qist* «մասնավճար», *խարճ* < արաբ. *xarj* «ծախսեր», *հառնեզ* < ֆր. *harnais* «շարժական գույք», *մագատ* < արաբ. *mazād* «աճուրդ», *մահր* < արաբ. *mahr* «ամուսնական նվերներ», *մայրենիք* «մայրական ժառանգություն», *մանտատոր* < լատ. *mandator* «հրահանգիչ», *մարզիզ* < ֆրանս. *marchis* «մարկիզ. ազնվական մի տիտղոս», *մուխթասիպ* < արաբ. *muhtasib* «հսկիչ. վերակազմ», *նադտ* < արաբ. *naqd* «կանխիկ, առձեռն (դրամ)», *չաւուշ* < թուրք. *çavuş* «պատվիրակ»,

պայլ < հֆր. *bail* «մեծ իշխան. ասպետի փոխանորդ», *պաշտաւնակից*, *պառիկոս* < հուն. *pároikos* «տիրոջ ենթակա, հարկատու ճորտ», *պատգամասաց*, *պարոն* < հֆրանս. *baron* «մեծավոր, իշխանավոր, ազնվական կալվածատեր», *պրոպատիկէ* < հուն. *proto patrikos* «մեծ և առաջին պատրիկ», *ջամբո* < ֆր. *chambre* «սենյակ» (իմա՝ «գանձատուն»), *ռեքինար* < լատ. *recitator* (?) «գեկուցագիր կարդացող», *սերեֆիկ* < թրք. < արաբ. *sarrafi* «դրամափոխ, սեղանավոր», *սիգեղ* < լատ. *sigillum* «կնիք, հրամանագիր», *սինաւո* < հուն. *synoros* «սահման, սահմանագիծ», *ստրատորոս* < հուն. *strator* «ձիապան. ախոռապան», *սրկրունք* < հուն. *skri*՝ *bones* «թիկնապահ» (իմա՝ «քարտուղար»), «գրագիր», *վենետոր* «բաղնեպան» < լատ. *balneator* «բաղնիսպան», *վեստիտոր* «թագադիր» < լատ. *vestitor* (նույնը), *տուկ* < հֆրանս. *duc* «ավատատեր իշխան, դուքս», *տոնիզլինար* < լատ. *triclinarcha* «թագավորական պալատի սեղանապետ», *տրքստել* «կարգավորել, կանոնավորել» < պրսկ. *durust* (նույնը), *տֆթար* < արաբ. *daftar* այստեղ «հաշվեմատյան», *փղակոն* < հուն. *filagēs* «գիշերապահ, հսկող»:

Դ. *Բառակազմական առանձնահատկությունները*: Քննվող դատաստանագրքերը, որպես միջին գրական լեզվի փաստացի նմուշներ, աչքի են ընկնում բառակազմական բազմապիսի կաղապարներով: Դա վերաբերում է հատկապես բառաբարդմանը, առանց որի անհնարին կլինեին բազմաբնույթ տերմինաբանական կաղապարների ստեղծումը և գործառությունը: Բարդությունների մեջ հոդակապով և անհոդակապ ձևերի բաշխումը շատ չի տարբերվում: Հմտ. անհոդակապ՝ *արտպան, բաժտուն, բերդտու, դեղգին, խոզերամակ, կցրդասաց, շողհաց, շողսիրտ, պատգամասաց, ուժփորձուկ* և այլն, հոդակապով՝ *աստուածածախ, արձակապաշտաւն, աւրինադրակից, բարձրաթռիչ, գաղտագէն, գիշերակոյր, երկակաւն, ժամահարձակ, խաչահան, խելաթափ, հաւատադիր, հնակադ, հնահագ, հողադրամ, մարմնագեղծ, չարագազան, պաշտաւնակից, պարսաւադէտ, տնկահատ, րաբունապետ* և այլն:

Ածանցումը պահպանում է հայոց լեզվին բնորոշ ընդհանուր պատկերը. վերջածանցավոր բառերն անհամեմատ շատ են, գերազանցում են նախածանցավորներին: Նկատելի է, որ ածանցավոր

բառերը ևս օժտված են որոշակի գործառական ծանրաբեռնվածությամբ, հատկապես տերմինային գործառությունով. *ան՝ անբախտ, անբեկար, անգայթակղ, անդատապարտ, անդիմադրաձ, աներկեղություն, անընկմահ, անլսողություն, անխելիլ, ամնուղ, անպարապություն, անպղերգաբար, անտեղություն, -ան(ք)՝ վարձանք, քաշանք, քրշտան, -(ա)կան՝ բնաւորական, խանձական, մեղական, -իչ՝ անձանձիչ, կոտիչ, մերձաւորիչ, -իք՝ մայրենիք, վարձելիք, - ոյթ(ք)՝ մեռելոյթք:*

А. Г. Мушегян. *Лексика армянских судебных средних веков.* Армянские судебники средних веков включают многие термины, а также новшества среднеармянского языка. Здесь представляется лексика этих трудов в кратком содержании. Юридические термины разноязычные - это заимствования из древнефранцузского, польского и румынского, а также латинского и древнегреческого языков. Кроме иностранных слов и терминов юридического характера можно найти и исконно армянские слова и фразы, касающиеся данной науки. В статье изучаются синонимические ряды и другие семантические характеристики юридической лексики.

A.H. Musheghian. *Lexics of Armenian Law-codices in Middle Ages.* Armenian codices of Middle ages involve a great number of terms and innovations of the Middle Armenian language. Here we observe the vocabulary in brief. Juridical terms are multilingual – borrowings from Old French, Polish, and Romanian, as well as Latin and Old Greek. Besides, foreign words and terms of juridical area, there are some number of words and phrases originally Armenian, which may also apply to this area. The author observes synonyms and other semantic characteristics of juridical terms.

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՂԱՁԱՅՆԵՐԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Բանասիր. գիտ. թեկնածու Գ. Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ըստ լեզվական փաստերի՝ Գեղարքունիքի մարզում կան առանձին տարածաշրջաններում գործող երեք բարբառ և մեկ խոսվածք: Բայազետի բարբառը Գավառի տարածաշրջանում է, Մակուի խոսվածքը՝ Սևանի, Մշո բարբառը՝ Մարտունու, Դիաղինի բարբառը՝ Վարդենիսի, իսկ Արցախի բարբառը՝ Վարդենիսի և Ճամբարակի¹: Միայն Մշո բարբառն է, որ, ի տարբերություն մյուսների, առանձին խոսվածքներ ունի նաև մյուս տարածաշրջաններում²: Ի դեպ, Մշո բարբառը Մարտունու տարածաշրջանում ներկայանում է բարբառի հյուսիսարևելյան խմբին պատկանող Ալաշկերտի խոսվածքով³:

Տարածաշրջանի խոսվածքների բաղաձայնական համակարգերի համաժամանակյա քննությունը ցույց է տալիս, որ ըստ տարբեր դիրքերի՝ Գեղարքունիքի մարզի խոսվածքներում գործում են բաղաձայնական տարբեր համակարգեր (ի դեպ, համաժամանակյա չափանիշներով զուգադրական քննության մեջ չեն ներառվել Արցախի խոսվածքների առանձնահատկությունները Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջաններում. այդ խոսվածքների հատկանիշների հետազոտումը ընթացքի մեջ է): Այս համակարգերը ներկայացվում են ողջ բառապաշարի ընձեռած փաստերի հիման վրա՝ ներառելով նորագույն շրջանի արտաքին և ներքին փոխառությունները: Սևանի, Գավառի, Մարտունու տարածաշրջանների խոսվածքները, ըստ բառասկզբի դիրքի, ունեն քառաստիճան բաղաձայնական համակարգ: Այս տարածքներում տարբերակվում են շնչեղ ձայնեղների, պարզ ձայնեղների, պարզ խուլերի, շնչեղ խուլերի շարքեր (հմմտ. *բ^h, բ, պ, պ^h*): Այս խմբի խոսվածքներում բառա-

¹ Ռ. Բաղրամյան, Հայերեն բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, էջ 3-11:

² Գ. Մկրտչյան, Մշո բարբառի արդի վիճակը Գեղարքունիքի տարածաշրջանում // Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ (Միջազգային գիտաժողով, 8-9 հոկտեմբերի, 2014 թ., Ջեկուցումների ժողովածու), Ե., 2014, էջ 134-136:

³ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 134:

սկզբի դիրքում պարզ ձայնեղներ կան միայն արևելյան լեզուներից կատարված և ժամանակակից գրական փոխառություններում: Վարդենիսի տարածաշրջանի խոսվածքների մի մասն ունի եռաստիճան բաղաձայնական համակարգ, իսկ մի մասը՝ քառաստիճան. Մշո բարբառի խոսվածքներն ունեն քառաստիճան բաղաձայնական համակարգ, որոնք, ի տարբերություն Դիադինի խոսվածքներին հատուկ պարզ ձայնեղների, պարզ խուլերի և շնչեղ խուլերի, տարբերակում են նաև շնչեղ ձայնեղներ:

Ի տարբերություն բառասկզբի՝ բառամիջի և բառավերջի բաղաձայնական տվյալների հաշվառմամբ մարզի խոսվածքները բնութագրվում են եռաշարք բաղաձայնական համակարգերով, որոնցում տարբերակվում են պարզ ձայնեղներ, պարզ խուլեր և շնչեղ խուլեր: Սակայն բառամիջի բաղաձայն հնչյուններն ունեն որոշակի դիրքային և որակական առանձնահատկություններ, որոնցով էլ տարածաշրջանի խոսվածքները միավորվում և տարբերվում են⁴:

Սևանի, Գավառի, Մարտունու տարածաշրջանները միավորվում են շնչեղ ձայնեղների համակարգով (հմմտ. *p^h, t^h, q^h*), իսկ Դիադինի բարբառի խոսվածքներն այդ հատկանիշը չունեն, հետևաբար տարբերվում են մյուսներից: Սակայն շնչեղ ձայնեղների համակարգով ներկայացող խոսվածքները տարբերակվում են իրարից ուժեղ և թույլ շնչեղության հատկանիշով:

Լսաձայնագրումների միջոցով հետազոտումները ցույց են տալիս, որ Մարտունու տարածաշրջանի Լիճք, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Մադինա գյուղերի շնչեղ ձայնեղներն ուժեղ են, ունեն ընդգծված հնչեղություն՝ *ʰod, μարի, ·nɪz, Ñop, ɑnɪp*, իսկ մյուս տարածքների շնչեղ ձայնեղները՝ թույլ. չունեն որոշակիորեն ընդգծված շունչ ու հնչեղություն՝ *ան, μալ, ·nɪpu, Ñուն, ɑnɪp* և այլն: Ընդ որում, թույլ և ուժեղ շնչեղ ձայնեղների գործառնական համար բացառված դիրք է բառամեջը և բառավերջը:

Ընդհանուր հայերենյան բառերի բառասկզբի դիրքում պարզ ձայնեղներ կան Դիադինի բարբառը ներկայացնող խոսվածքներ-

⁴ Համեմատական-վիճակագրական արդյունքները բերվում են ստորև:

բում՝ *բօխկ, գէլ, դուրէլ, ձէն, ջարթէլ* և այլն, ինչպէս նաև՝ մարզի ողջ խոսվածքների նորագույն շրջանի արտաքին և ներքին փոխառությունների բառակազմում՝ *բողագ, դատարան, գանձանագ, դինջ, բէդ, գ՛մ* «1. սանձ, 2. մէխ», *դաղէլ* և այլն: Հնչյունական վերջին այս հատկանիշով մարզի բոլոր խոսվածքները միավորվում են:

Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի բոլոր խոսվածքներում, ինչպէս նաև Գավառի տարածքի Նորատուսի և Սևանի շրջանի Ծովագյուղի խոսվածքների՝ բառամիջում ու բառավերջում կան ձայնեղներ՝ *աբբանք, բագ, ծաղիգ, կօղբէս, պըդուգ, մըգրադ, մաձուն, խըրադ, հավադալ, խէդջ* և այլն, այն դեպքում, երբ մարզի մյուս խոսվածքներում այդ դիրքերում գործածվում են պարզ խուլեր՝ *պատըսխան, կընիկ, ՝անբակ, խըբարտ, խավիծ* և այլն:

Գեղարքունիքի խոսվածքներում ձայնեղ հնչյունները գործառուում են նաև բառամիջի և բառավերջի հնչյունական որոշակի միջավայրերում: Գավառի, Սևանի, Մարտունու տարածաշրջանի խոսվածքների մի մասում (Երանոս, Զուլաքար, Ծակքար, Վարդենիկ և այլն) ձայնեղներ կան ոնգային *ն, մ* բաղաձայններից հետո՝ *թումբ, ՝անբակ, լանգատ, հ՛ընդանիք, ռանձ, պինդ, ճընջուդ, ծունգ, անձվէր, էրինջ* և այլն: Չնայած նրան, որ Դիադինի բարբառը ներկայացնող խոսվածքների բառամիջի և բառավերջի դիրքերում կան բաղաձայնների կայուն, անտեղաշարժ համակարգեր, սակայն ոնգայինների և ձայնորդների հարևանությամբ ունեն այնպիսի ձայնեղներ, որոնք կային վերոնշյալ խմբերում՝ *տէրդէր, ցուդ, ճ՛մբախ, ամբ, փէդուդ, կընգան* և այլն:

Գեղարքունիքի մարզի խոսվածքներում բառերի բոլոր դիրքերում կան խուլ բաղաձայններ: Բառամիջի և բառավերջի դիրքում խոսվածքներն ունեն խուլերի գործառման ինքնատիպ համակարգեր այլ որակի հնչյունների հարևանությամբ: Մարտունու տարածաշրջանի Մշո շերտի խոսվածքներում (Լիճք, Զորագյուղ, Գետաշեն, Աստղաձոր, Ծովինար, Թագագյուղ, Ծակքար, Ադամխան), ինչպէս նաև Սևանի տարածաշրջանի Ծովագյուղի խոսվածքում պատմականորեն ապաշնչեղացած խուլեր կան բառամիջում և բառավերջում՝ *թապէլ, գածին, առձատ, թատ, ՝ուկ, խուծ, աղաճանկ, էրտալ* և այլ: Մյուս խոսվածքներում նմանատիպ դիրքերում օրի-

նաչափ են շնչեղ խուլերի գործածությունները: Բառամիջում և բառավերջում ոնգային *ւ, ն* բաղաձայններից հետո Մարտունու տարածաշրջանի խոսվածքների մի մասում (Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Լիճք, Մդինա, Ձորագլուխ և այլն), ինչպես նաև Ծովագյուղի խոսվածքում գործառում են պարզ խուլեր, այն դեպքում, երբ մյուս տարածքներում նմանատիպ դիրքերում կան պարզ ձայնեղներ՝ *բամպակ, գերընտի, խիվանտ, փոխինտ, ցանկաճ* և այլն: Վերոնշյալ խոսվածքներում կան պարզ խուլեր բառամիջի և բառավերջի ձայնավորներից և *ր, ռ* ձայնորդներից հետո՝ *կառտալ, լիռպ, խապէլ, շապատ, առճ* և այլն, այն դեպքում, երբ մյուս խոսվածքներում այդ դիրքերում կան ձայնեղներ ու շնչեղ խուլեր:

Դիադինի շերտը ներկայացնող խոսվածքներում դիտարկման արժանի է մի հնչյունական երևույթ: Ընդունված է համարել, որ Դիադինի խոսվածքներում բացակայում են շնչեղ ձայնեղները⁵: Գ. Ջահուկյանը նույնպես այս երևույթը բացատրել է Վարդենիսում գործածվող Դիադինի բարբառի համար⁶: Ա. Հանեյանը, անդրադառնալով Դիադինի բարբառն ուսումնասիրած Ռ. Բաղրամյանի դիտարկումներին՝ այս հարցի առիթով, գրում է. «Ի դեպ, Դիադինի (Վարդենիսի) բարբառին նա հատկացրել է ձայնեղներով համակարգ: Իբրև ընդհանուր հատկանիշ՝ նոր սերնդի խոսվածքում նշված է ձայնեղ շնչեղների թույլ շնչեղացման և ձայնեղ հագագի խլացման հակումը, որ տանում է դեպի ձայնեղ շնչեղների ապաշնչեղացում և ձայնեղ հագագի ապաձայնեղացում»⁷: Ա. Հանեյանն անժխտելի է համարում Դիադինի խոսվածքներում ձայնեղ շնչեղության առկայությունը՝ դրանք դիտելով համեմատաբար թույլ շնչեղություն⁸:

Վ. Խաչատրյանի գնահատմամբ՝ Վարդենիսի (Դիադին) տարածքում կան խլության հակված ձայնեղներ բառասկզբի դիրքում⁹, այն դեպքում, որ Ա. Հանեյանը դրանք համարում է թույլ շնչեղություն: Փաստ է մեկ իրողություն. Աճառյանի օրենքը գործում է Վար-

⁵ Ռ. Բաղրամյան, Հայերեն բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները, էջ 116:

⁶ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 58:

⁷ Ա. Հանեյան, Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում // Հայերենի բարբառագիտական ատլաս (Ուսումնասիրություններ և նյութեր), պրակ 3, Ե., 2010, էջ 204:

⁸ Ա. Հանեյան, նշվ. աշխ., էջ 217:

⁹ Վ. Խաչատրյան, Վարդենիսի (Դիադինի) բարբառը, Ե., 2004, էջ 38:

դենիսի խոսվածքներում: Մակայն տարբերությունն այն է, որ քմայնացած ձայնավորներից առաջ ձայնեղները չեն խլացել ամբողջովին, այլ միջին վիճակով են ներկայանում. ձայնեղ են խլության երանգով, և առկա է խլացման գործընթաց: Այդ են վկայում նաև հետազոտված լսաձայնագրումները: Օրինակ՝ *բուրդ, գարի, դարձ, ձոր, ջուր* և այլ բառերում բառասկզբի ձայնեղների արտասանությունը, կարծեք թե, մոտենում է խուլ հնչյունների արտաբերմանը: Մեր այս պնդման հիմքում դնում ենք այն փաստը, որ Մշո և այլ բարբառներում մեզ հանդիպած թույլ շնչեղ ձայնեղները չունեն այն որակը, ինչպես Վարդենիսի պարագայում ներկայացնում է Ա. Հանեյանը:

Տարածաշրջանի բոլոր քննարկված խոսվածքները միավորվում են բառասկզբում շնչեղ խուլերի առկայությամբ, որոնք արտասանական տարբերություններ չունեն՝ *բուր, փ^{ու}օս, փ^{ու}օխինդ, թընդիր, ցորեն, չօղթան* և այլն: Մակայն Դիադինի խոսվածքներում *ք* շնչեղ խուլը բառասկզբի, երբեմն նաև բառամիջի դիրքերում, հատկապես առաջին շարքի ձայնավորներից առաջ ներկայանում է քմային *ø* տարբերակով և որոշակի հակադրության մեջ մտնում էտալոնային *ք*-ի հետ՝ *ø^ոմբախ, øիր, øաղթու, øէլալ, խօօի, øօ, øամի, øաղէլ, թըօէլ, շաօար* և այլն: Հետնալեզվային բաղաձայնների քմայնացումները վերաբերում են այն դեպքերին, երբ *գ, կ, ք* հետնալեզվայիններին հաջորդում են առաջնային շարքի ձայնավորներ, մինչդեռ վերոնշյալ տարածքների դեպքում քմայնացումները պայմանավորված չեն հաջորդող ձայնավորի բնույթով¹⁰: Քմային *ø*-ի և էտալոնային *ք*-ի գործածություններով տարբերակայնություն են դրսևորում ուսումնասիրվող խոսվածքները. Դիադինի շերտը ներկայացնող խոսվածքների բառավերջը ներկայանում է քմային *ø*-ով՝ ընդգրկելով միայն բնիկ բառերը՝ *հ^ոինø, իրէնø, բաժինø, էստօնø, իրէø* և այլն: Հետնալեզվային *ք*-ի քմայնացման դեպքեր ենք արձանագրել նաև Մարտունի քաղաքի խոսվածքում՝ *խօօի, բուø, մէնø* և այլն:

¹⁰ Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Ե., 1982, էջ 310, 312:

Վարդենիսի տարածաշրջանում հնչյունների քմայնացումը մեծ տարածում ունի: Իրողությունը տարածվում է ոչ միայն *ք*-ի, այլև հետնալեզվային մյուս՝ *գ*, *կ* բաղաձայնների վրա: Եթե Մշո շերտի խոսվածքներում հազվադեպ են քմային *’, ի* հնչյուններն առաջնային ձայնավոր հնչյուններից առաջ, ապա դրանք օրինաչափ են հատկապես Վարդենիսի խոսվածքներում և մեծ ոլորտներ են ընդգրկում՝ *Ռերակուր, Ռէխտ, Ռիսուր, տի՛ին, Ռիր, հէրէ՛, մոդո՛, ծախ-Ռէ, շըլ՛էլ* և այլն: Երևույթը կա նաև Գավառի տարածաշրջանի Նորատուսի խոսվածքում:

Քմայնացման՝ մեծ տարածում ունենալու հետևանք է նաև այն, որ Գավառի և Սևանի տարածաշրջանների, հատկապես Նորատուսի, Ծովագյուղի, Դումաշենի, Գեղամավանի, Ծաղկունքի, Այրիվանքի խոսվածքներում հետնալեզվային պայթական *գ*, *կ*, *ք* բաղաձայնները ընդհանուրիայերենյան և նորագույն շրջանում փոխառյալ բառերում առաջին շարքի ձայնավորներից առաջ բաղաձայնների քմայնացման օրենքով ներկայանում են որպես առաջնալեզվային *ă, Ō, â* հնչյուններ: Այս համակարգերի մասին վկայել է Ռ. Բաղրամյանը¹¹՝ *Օէր<Ռէր<կէր, âավօր < øավօր < քավօր, äէրընդի < ’էրընդի < գէրընդի, äէտ < ’էտ < գէտ, äին < ’ին < գին, âէչա < øէչա < քէչա* և այլն: Այս իրողության հիմքում ընկած է առաջին շարքի ձայնավորներից առաջ տեղի ունեցող ուժեղ քմայնացումը: Այն այնքան ուժեղ է եղել, որ «հիշյալ բաղաձայնների արտասանության ժամանակ արտաբերության բովը միջնալեզվայինից տեղափոխվել է դեպի ավելի առաջ, որի հետևանքով էլ պայթականները վերածվել են պայթաշփականների»¹²: Խոր հնություն չունեցող այս երևույթը տարածում է գտել նաև բառամիջում՝ *պատՕէր < պատՌէր < պատկէր, սէրäէվիլ < սէր’էվիլ < սէրգէվիլ, խէàաթ < խէøաթ < խէքաթ* և այլն: Այս երևույթի ոչ խոր հնություն ունենալը պայմանավորված է հայերենում քմայնացման երևույթի գործածությամբ: Կարծում ենք՝ այն չի կարող նախորդած լինել հետին շարքի ձայնավորների քմայնացումը և ձևավորված պետք է լինի ավելի ուշ, թերևս հայերենի զարգացման վաղ աշխարհաբարի փուլում կամ դրան նախորդած

¹¹ Ռ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 8, 10:

¹² Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 310, 312:

ու հաջորդած հարակից փուլերում: Ըստ ժ. Միքայելյանի բնութագրման՝ այս հնչյունները «գրավում են միջին դիրք» հետնալեզվային *q, ɣ, p* բաղաձայնների և քմային *ʔ, l̥, ø* հնչյունների միջև¹³: Այդուհանդերձ, կարծում ենք՝ կա որոշակի տարբերություն առաջնալեզվային *ɟ, ɟ̥, ʒ* և հետընթաց արտաբերություն ունեցող *ä, ô, à* հնչյունների միջև: Կարծում ենք՝ այդ որոշակի տարբերությունը, ի տարբերություն *ɟ, ɟ̥, ʒ* հնչյունների առաջընթաց արտաբերման, *ä, ô, à* հնչյունների հետընթաց արտաբերությունն է, և միայն փորձառական-լաբորատոր հետազոտությունը կարող է այդ տարբերությունը հստակ ուրվագծել: Այս հնչյուններն իմաստատարբերակիչ հակադրություններ չեն կազմում *q, ɣ, p* հնչյունների համեմատությամբ, այլ *ɟ, ɟ̥, ʒ* հնչյունների դիրքային տարբերակներն են. *ä, ô, à* հնչյուններն այս տարածքի խոսվածքների բաղաձայնական համակարգում ուրույն տեղ են գրավում:

Տարբեր որակի հնչյունների միջև շնչեղ խուլեր կան Գավառի տարածաշրջանի խոսվածքներում և Մարտունու շրջանի խոսվածքների մեծ մասում (Մարտունի, Վարդենիկ, Ծակքար և այլն). ա) բառամիջում՝ *շօփօթ, աքահ, լքում, օշիլ, խափել, բուրթ, ստերչ* և այլն, բ) բառավերջում՝ *յէփ, թաք (թագ), օթ, օց, էք, մէչ* և այլն: Ընդ որում, շնչեղ խուլերի գործառնման դաշտն ավելի մեծ է. այդպիսիք կան *p/n* ձայնորդներից հետո ևս՝ *հօառփել, լիռփ, յէրք, կարք, ճուռթ, վօրթ, խուռց, ճանցրր, առչ, մըռչէմ* և այլն: Սևանի, Գավառի խոսվածքների մի մասում (Նորատուս, Այրիվանք և այլն) և Վարդենիսի տարածաշրջանի խոսվածքներում կան շնչեղ խուլեր բառամիջի և բառավերջի դիրքերում՝ խէլք, շունչ, կանթ և այլն:

Տարածաշրջանի խոսվածքներում բառի բոլոր դիրքերում շփական բաղաձայններն ունեն արտաբերման միևնույն օրինաչափությունները, եղած տիպական և ընդհանրական տարբերությունները հանգում են հետևյալին:

Մարզի խոսվածքների մեծ մասում գործում է ոչ առնմանական, ենթաշերտային երևույթ համարվող *h>ɦ* անցումը: Այս իրողությունը, ինչպես լեզվաբաններն են նշում, գալիս է հնուց, և քիչ

¹³ ժ. Միքայելյան, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (Համաժամանակյա և տարածամանակյա քննություն), Ե., 2009, էջ 31:

հավանական է, որ այս երևույթը բարբառային փոխազդեցությունների հետևանք է¹⁴: Ա. Խաչատրյանը, հենվելով փորձառական ուսումնասիրությունների տվյալների վրա, եզրակացնում է, որ *h*-ն մոտենում է ըմպանային արտասանության¹⁵, ինչպիսին *խ*-ն է: Սրանից կարելի է եզրակացնել, որ երկու հնչյունների միջև եղած ընդհանրությունը պայմանավորված է դիրքով: Սևանի տարածաշրջանի Ծովագյուղի խոսվածքում և Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների Մշո բարբառը ներկայացնող խոսվածքներում չկա *h>խ* անցումը: Այլ կերպ ասած՝ նշված բարբառային միավորների բառերի այն դիրքերում, որտեղ *h* կա, բացառված է շփական *խ* հնչյունի համար: Բուն Մշո բարբառում կան են մի քանի բացառություններ, այն էլ միավանկ բառերում՝ *խըտ*, *ախ*, *գախ*¹⁶, *խօղ*, *խատ*, *խամ*¹⁷: Այս բառերը, որպես բացառություններ, ամենայն հավանականությամբ, ազդեցություններ են և Մշո բարբառին են անցել հարևան բարբառներից ու խոսվածքներից: Մինչդեռ մյուս բոլոր տարածքների, այդ թվում Մարտունու տարածաշրջանի մի շարք խոսվածքներում՝ Մարտունի քաղաքում, Վարդենիկ գյուղում և այլ խոսվածքների նմանատիպ դիրքերում *խ*-ի գործառումն օրինաչափ է՝ *խիվոնդ*, *խաց*, *խօլիվօր*, *խամ*, *խամբրրեղ* և այլն: Ըստ հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման՝ Մշո բարբառի խոսվածքներից միայն Բաղեշը, Խլաթը, Արճեշը, Արծկեն ունեն *h > խ* անցումը¹⁸, սակայն կարծում ենք, որ այս իրողությունները կան նաև Ալաշկերտի տարածքի որոշ խոսվածքներում, քանի որ ժողովրդագրություններում նշվում է, որ Մարտունու տարածաշրջանի *խ*-ախոս գյուղերի մեծ մասը եկվորներ են հենց Ալաշկերտի կողմերից:

Կա տեսակետ, համաձայն որի՝ հայերենում *h*-ի դիմաց *խ* ունեցող բարբառներն ի սկզբանե չեն ունեցել *h* բաղաձայն¹⁹: Գեղար-

¹⁴ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 131: Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1953, էջ 67: Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 267: Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 264-270: Վ. Կատվալյան, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014, էջ 63, 74:

¹⁵ Ա. Հ. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյութաբանություն, Ե., 1988, էջ 183:

¹⁶ Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958, էջ 66:

¹⁷ Ք. Մաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985, էջ 38:

¹⁸ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 56-57:

¹⁹ Վ. Կատվալյան, նշվ. աշխ., էջ 63, 74:

քունիքի մարզում *հ*-ախոս են Երանոսի, Վարդաձորի, Լիճքի, Ձորագյուղի, Վերին Գետաշենի, Ներքին Գետաշենի, Մաղինայի, Ծովագյուղի, Մաքենիսի խոսվածքները, իսկ տարածքի մյուս բոլոր խոսվածքները *խ*-ախոս են: Հ-ախոսների լեզվում *խ* կա այն բառերում, որոնք հայերենի զարգացման հնագույն շրջանում կատարված փոխառություններ են՝ *խնձոր*, *խելք/կ*, *խիլ* և այլն, իսկ *խ*-ախոսների լեզվում *հ* կա ուշ շրջանի գրական փոխառություններում՝ *համօզէլ*, *հանդարտ*, *հարուստ*, *հրուշագէղէն*, *հէռախօս* և այլն, ինչպես նաև այն դեպքերում, երբ առկա է գրաբարյան ձայնեղ հագագ *յ >* խուլ հագագ *հ* անցումը՝ *հարգ*, *հաջէլի*, *հիմար*, *հիշատակ*, *հղի* և այլն: *Խ*-ի՝ ժամանակակից գրական փոխառություններում չարտացոլվելու հանգամանքը հաշվի առնելով՝ հայերենում հնչյունական այս օրենքը համարվում է ոչ թե վերացող, այլ սահմանափակվող: *Խ*-ախոս է մարզի խոսվածքների մեծ մասը, այդ թվում Մարտունու տարածաշրջանի Մարտունի քաղաքի, Ծակքարի, Վաղաշենի, Աստղաձորի, Զուլքարի, Վարդենիկի, Ծովինարի, Կարճաղբյուրի, Արծվանիստի խոսվածքները:

Խոսվածքներում առանձնահատկություններ են ցուցաբերում նաև ձայնեղ և խուլ հագագները: Մշո շերտի *հ*-ախոս խոսվածքներում տիպական է ձայնեղ *с* հագագի գործածությունը միայն ձայնավոր հնչյուններից առաջ՝ *сանգաջ*, *сախպուր*, *с'շկ*, *сիմնալ*, *сէվէլի*, *сէրագ*, *сընգուգ*, *сառդ* և այլն, իսկ *խ*-ախոս և մյուս խոսվածքներում՝ խուլ *h* հագագի գործածությունը: Սակայն մարզի՝ ձայնեղ հագագ ունեցող խոսվածքներում կա խուլ հագագի գործածությունների ընդլայնման և հագագների աստիճանական միօրինակացման միտում, այսինքն՝ հաճախադեպ են այն գործածությունները, երբ ձայնեղ *с* հագագը փոխարինվում է խուլ *h* հագագով:

Հավելական *հ*-ի առկայություն կա բառասկզբում ձայնավորից առաջ տարածքիս բոլոր խոսվածքներում՝ *հ'արի*, *հ'օժար*, *հ'իրար*, *հ'ըրօր*, *հ'ուրիշ*, *հ'ունք*, *հ'ըմմէն*, *հ'ափ*, *հ'առիք* և այլն: Հավելական *հ*-ն, լինելով կոկորդային հնչյուն, ընկալվում է որպես ձայնեղ շունչ: Այս հնչյունը ուժեղ շունչ է և ունի ուժգին արտասանություն՝ *հ'էռտիգ*, *հ'իշկալ*, *հ'առիկ*, *հ'էկուց*, *հ'ախպուր* և այլն: Խոսվածքներում կան նաև առանց հավելական *հ*-ի գործածության

փաստեր՝ *ալիվոր, ուլուինկ* և այլն: Նշենք, որ Մշո շերտի խոսվածքներում հավելական *հ'* ներկայանում է ձայնեղ հագագով՝ *ժառիք, շերթում, շէնէլ, շըմէն* և այլն:

Մարզի դիտարկման ենթարկված գրեթե բոլոր խոսվածքներում տարբերակվում են կոկորդային *Օ, ի* հնչյունները: Պայթական այս հնչյունները փոխառված են արաբերենից և ունեն ըմպանային արտաբերություն: Ա. Խաչատրյանն, ինչպես *ղ, խ*, այնպես էլ այս հնչյունները, կոչում է կատկային կամ փափկաքմային՝ կարևորելով կատիկի և քիմքի ունեցած մասնակցությունն այդ հնչյունների արտաբերման գործընթացում²⁰: Այս հնչյունները գործառական հակադրության մեջ են էտալոնային *ղ* և *խ* հնչյունների հետ, միավորվում են միայն արտաբերման տեղով և հանդես են գալիս հիմնականում արևելյան լեզուներից կատարված նորագույն փոխառություններում՝ *Օըսմաթ, Օարիք, Օուլ* և այլն: Ինչպես գիտենք, հայերենի վաղ փուլերում բառասկիզբը բացառված դիրք է եղել *ղ* հնչյունի համար և հայերենում *ղ*-ով բառ չի սկսվում²¹, ուստի և փոխառյալ *Օ, ի* հնչյունների համակարգային գործածություններն օրինաչափ են: Քանի որ օրինաչափություն է, որ հայերենում բառասկզբի դիրքում բացառված է *ղ* հնչյունի կիրառությունը, ուստի հատկապես Մշո բարբառում միտում կա փոխառյալ *Օ, ի* հնչյունները փոխարինել խ հնչյունով²², ինչպես՝ *խարիք, խասաք, խամագ, խսմաթ* և այլն: Սակայն Գեղարքունիքի մարզի ոչ Մշո շերտի խոսվածքներում այդ գործընթացը չկա: Ծովագյուղի, Այրիվանքի, Նորատուսի և Մակուի շերտը ներկայացնող մյուս խոսվածքներում ըմպանային *Օ*-ն խիստ կոկորդային արտասանություն ունի և ներկայանում է զուգահեռ *Ս* տարբերակներով՝ *Օ՛նուլ, Օ՛նուլ, Օ՛նլէզ* և այլն:

Որպես ամփոփում՝ համաժամանակյա և ընկալողական մեթոդներով կատարված ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ Գեղարքունիքի մարզի խոսվածքները այս կամ այն չափով պահպանել են պատմական հայերենիքում ունեցած հնչյունական

²⁰ Ա. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյութաբանություն, էջ 181:

²¹ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 214-215, *Էդ. Աղայան*, Գրաբարի քերականություն, գիրք Ա, հնչյունաբանություն, Ե., 1964, էջ 81-102:

²² Գ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 134-136:

համակարգերը և դրանց առանձնահատկությունները, քանի որ ժամանակին գործած լեզվական համակարգերի և ներկայիս բարբառախոսների ունեցած համապատասխան տվյալների համեմատություններում գերակշռողը ընդհանրություններն են:

Г. Г. Мкртчян. Территориальная характеристика согласных фонем говоров гехаркунического региона. В статье дается анализ согласных фонем говоров Гехаркунического региона. Диалекты на территориях Севана, Гавара и Мартуни в начале слова имеют звонкие придыхательные, простые звонкие, простые глухие, глухие придыхательные. У диалектов этой группы, в начале слова есть простые звонкие, заимствованные из восточных языков и современных литературных языков. Часть диалектов Варденисского региона, и диалекты Чамбаракского региона имеют трехуровневую звонкую систему; простые звонкие, простые глухие и глухие придыхательные, а в Варденисском регионе, представители Мушского слоя, имеют четырехуровневую систему.

G. G. Mkrtchyan. Regional Characterization of Consonants in the Gegharqunig Region Dialects. The article looks into the regional characterization of the consonant sounds of Gegharqunig region dialects. The territorial dialects of Sevan, Gavar and Martuni have spirant voiced consonants, simple voiced and spirant voiceless consonants. In this group of dialects there appear simple voiced consonants from the modern literary borrowings or from Eastern languages.

One part of Vardenis dialects and all Jambarak dialects have three-stepped consonant systems; simple voiced, simple voiceless and spirant voiceless consonants. Msho layer of Vardenis dialect has a four-stepped consonant system.

10-րդ դ. սկզբներից (եթե ոչ 9-րդի վերջերից) Ֆրանսիայի Օտունի գրադարանում պահպանված ձեռագիր (երկլեզվյան՝ լատիներեն-հայերեն) մի բառացանկ (բառարան) եվրոպական գիտությունը հայտնի է դառնում միայն 18-րդ դ., որին էլ տարբեր աղբյուրներով անդրադառնում են օտար և հայ ուսումնասիրողներ: Լեյդենի համալսարանի պրոֆ. Յ. Վայտենբերգի անգլերեն լույս տեսած սույն հոդվածում փորձ է արվում բառացանկի հայերեն տվյալներին անդրադառնալ հայ բարբառների պատմության տեսանկյունից, որն ինքնին նոր մոտեցում է, թեև հարցի լուծումը հեռու է վերջնական լինելուց: Վերջինս էլ նկատի ունենալով՝ հարկ ենք համարում այն հրապարակել հայերեն թարգմանությամբ՝ ավելի մեծ հնարավորություն ընձեռելով հետագա ուսումնասիրողներին: (Գլխ. խմբագիր):

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ ԵՎ ՕՏՈՒՆԻ ԼԱՏԻՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԸ*

Յ. Յ. Ս. ՎԱՅՏԵՆԲԵՐԳ (†)
(Նիդեռլանդներ, Լեյդենի համալսարան)

1882թ. ֆրանսիացի գիտնական Օմոնը հրատարակում է 90 բառահոդված պարունակող լատիներեն-հայերեն համառոտ մի բառարան՝ հիմնվելով Ֆրանսիայի Օտունի գրադարանի մի ձեռագրի վերջին երկու էջի վրա¹: Ձեռագրի մնացած մասը պարունակում էր սուրբ Ջերոմի նամակների տեքստը: Վեց տարի անց, Օ. Կարիերը հրատարակում է այս տեքստը՝ նույնացնելով բառարանի հայերեն բառերը և ավելացնելով արժեքավոր մեկնություններ²:

* T. Samuelian, M. Stone (հրատ.), "Medirval Armenian Culture". (University of Pennsylvania Armenin Texts and Studies 6), Chico. CA: Scholars Press, 1983, pp. 13-28.

¹ H. Omont, Manuel de conversation arménien-latin du Xe siècle // *Bibliothèque de l'école des chartes* 43 (1882) 563-564: Ձեռագիրը պահվում է Օտունի համալսարանի գրադարանում (Ֆրանսիա) կրելով 17 A (S 17) համարը: Բառարանը տեղ է գտել Fol 156 և 156 Vo էջերում: Բառարանի համառոտ նկարագրությունը հրատարակվել է "Catalogue général des manuscrits des bibliothèques publiques des départements"-ում (Paris, 1849, 1, 13):

² A. Carrière, Un ancien glossaire latin-arménien (Paris, Imprimerie Nationale, 1886): Այստեղ ես վկայակոչել եմ գլխաբառերը այն համարներով, ինչպես նշել է Կարիերը:

Այս հատվածում պետք է քննվի նշված փաստաթղթի արժեքը հայոց լեզվի զարգացման ուսումնասիրության համար³: Ես չեմ խորանա բառարանի նպատակի և փաստաթղթի պատմական կարևորության հարցի մեջ: Մ. Ժ. Պերրատի թույլտվությամբ ես կարող եմ ներկայացնել բառարանի լուսանկարը⁴: Վերջինիս և Օմոնի ու Կարիերի հրատարակությունների համեմատությունը ցույց է տալիս, որ կարևոր են որոշ, մեծամասամբ տեխնիկական բնույթի կատարելագործումներ, սակայն, ամբողջության մեջ դրանք կդառնան համարժեք⁵: Փաստաթղթի հետ կապված կարևոր են հետևյալ փաստերը.

1. Հայերեն տեքստը գրված է լատինատառ: Օմոնը ձեռագիրը թվագրել է IX դարի վերջին և X դարի սկզբներին (հնագիտական հողի վրա): Լուսանկարի հոտագոտությունը հաստատում է այդ, չնայած առավել հավանական է թվում թվագրումն ավելի ուշ դարաշրջանին⁶:

2. Գրություններից բացի, բառարանն այսպիսով կազմում է հայերեն ամենահին փաստաթղթերից մեկը, ամենահին ձեռագիրը, Մատենադարան 6200 (887 AD): Իրականում բառարանի տեքստը չի կարող ավելի հին լինել: Կարիերը փաստարկներ է բերում տեքստի կրկնակի արտագրության մասին: Լուսանկարի քննությունը որոշ չափով հաստատում է Կարիերի տեսակետը: (68) – (73) բառահոդվածներն ընթանում են հետևյալ կերպ. (68) *scirt*, (69) *handam*, (70) *gernac*, (71) *andam*, (72) *scunch*, (73) *uluec*: Լուսանկարի վրա երևում են լրացուցիչ գրության հետքեր. (69)-ից հետո հնարավոր է

³ Այս փաստաթղթի պատմական արժեքը նշել է Կ. Կոստանյանցը «Հայագիտությունն արևմտյան Եվրոպայում» (Թբիլիսի, 1910): Այն փաստը, որ Օտոնի բառարանը ամենավաղ պահպանված այդ կարգի հայերեն գործերից է, նշել է նաև Գ. Կ. Գասպարյանը (Հայ բառարանագրության պատմություն, Ե., ՀՄՄՀ, ԳԱ հրատ., 1968, էջ 46-47):

⁴ Ես երախտապարտ եմ Պեռային. նա ինձ է տրամադրել լուսանկարը: Ես չեմ տեսել ձեռագիրը:

⁵ Ես շնորհակալ եմ պրոֆ. Գումբերին. նա ինձ խորհուրդներ տվեց պալեոգրաֆիկ նյութերի մասին: Կարիերի հրատարակության գլխավոր ճշտումներից մեկը *brachium* բառահոդվածն է. *striuch*, որ պրոֆ. Գումբերը կարդացել է *stuuch*:

⁶ Պրոֆ. Գումբերը 20, 22, 23 բառահոդվածների համար գերադասել է միջին -s-ի ավելի ուշ թվագրում: Կա այդպիսի թվագրման արտաքին փաստ (վկայություն). Օտոնի ձեռագրի 22-ի մի նշում ցույց է տալիս, որ 17A ձեռագիրը պատկանել է այն աշխատանքների թվին, որոնք նվիրել է Օտոնին (գրադարանին) Վալտերիուսը. նա վանահայր է եղել Օտոնում 10-րդ դարում ("Catalogue" general", 16-17):

կարդալ (69a) *genu: scunch*, որը նման է (72)-ին: Կարելի է ենթադրել, որ ընդօրինակողը սխալվելով (69)-ից հետո գրել է (69a). սխալ ընթերցելով (71)-ը *audam* այնուհետև նկատելով՝ ջնջել է այն: Բացի այդ, հնագիտորեն նման է *t*-ի և *c*-ի շփոթությունը. օրինակ՝ (11) *khuert* [դաս. հայ. *չորք*], (9) *khurce xapte* [դաս. հայ. *չորեքշաբթի*] բացատրելի է միմիայն այն դեպքում, եթե ընդունվի, որ տեքստը կրկնակի է արտագրված⁷:

3. Բառարանի առաջին տարբերակը գրող անձը հայերեն չի իմացել: Բառահոդվածների (մի քանի) լատիներեն թարգմանություններից պարզվում է, որ նա ինչպես լսել, այնպես էլ գրել է: Սա բացատրվում է լատիներեն մի քանի ոչ ճիշտ իմաստներով, որոնք նշվում են հայերեն բառերի համար (ինչպես՝ (58) *pectus* «կուրծք», *scirt* «սիրտ»):

Այսպիսով, ունենք 90 բառ, որոնց մեծ մասը պատկանում է լեզվի հիմնական բառաֆոնդին: Այս բառերը թվագրված են այն ժամանակաշրջանին, երբ անբավարար էր խոսակցական լեզվի վստահելի տեղեկությունը, և ձեռագրերում ու գրչություններում այն կարող էր նշվել միայն պատահական սխալներով: Բառարանի արժեքը ավելի է մեծանում, երբ հասկանում ենք, որ այն ցույց է տալիս բազմաթիվ շեղումներ դասական գրությունից (լեզվի բառապաշարում և հնչյունաբանության մեջ):

Կարիերը իր հրապարակման մեջ հույս է հայտնում, որ տեքստը շուտով քննվելու է լեզվաբանական տեսանկյունից: Իրականում Մեյեն և ավելի քիչ չափով Կարստն ու Ֆեյդին միայն օգտագործում են բառարանն իրենց հրապարակություններում: Հայ բարբառագիտության վիճակը դարասկզբին թույլ չէր տալիս բառարանի նյութի ամբողջացում մի կապակցված պատկերի մեջ: Դրանից հետո, որքան ինձ հայտնի է, բառարանը չի օգտագործված XX դարում հրատարակված միջին և ժամանակակից հայ բարբառագիտությանը նվիրված աշխատություններում: Փաստը զարմանալի է այն տեսանկյունից, որ հայ բարբառագիտությունը ձևավորվել է VII-XI դդ.,

⁷ Նոր արտագրությունը հաստատվում է նաև մի քանի աղճատված ձևերով. (87) *monachus, apiigahalts*; (89) *levita: aottroets* (Carrière, *Glossaire*, 17, h. 2.3):

որոնց համար բառարանն ամենահին և օգտագործվող ամենալայն (ծավալուն) աղբյուրն է⁸:

Մենք ոչինչ չգիտենք բառարանի համար իբրև լեզվական լրատու ծառայող հայի անցյալի մասին, բացի այն, որ նա Եվրոպայում է եղել X դարի սկզբին կամ ավելի վաղ, այլև չգիտենք, թե ինչ գործով է զբաղվել:

Այնուամենայնիվ, կարելի է հետևել նրա լեզվի հետադարձ ուղղությամբ դեպի հարազատ աղբյուրը: Այլ կերպ, կարելի է բառարանի լեզուն կապել Հայաստանի որևէ բարբառային տարածքի հետ՝ հաշվի առնելով, անշուշտ, հազար տարվա բացը բառարանի և ժամանակակից հայ բարբառների վկայության փաստի միջև:

Բառարանի ամբողջական քննությունը երևան է հանում սույն հոդվածի գործառնության շրջանակները: Սակայն, ես կանդրադառնամ հնչյունական տարբերակիչ գծերին: Կարելի⁹ է արդյոք դրականորեն պատասխանել բառարանի ուղղագրության հետևողական բնույթի մասին. բառարանը նկատելիորեն հետևողական է իր ուղղության մեջ և, անշուշտ, հետևում է այն ժամանակ Եվրոպայում տարածված ռոմանական լեզուների ուղղագրական կանոններին: Նույնիսկ հայկական պայթաշփականները արտահայտված են լատինական գրությամբ այնպես, որ կարելի է եզրակացություն անել դրա մասին:

Սկզբում ես կբերեմ մի օրինակ, թե ինչպես է բառարանը հարմարվում հայտնի փաստերին: Բառավերջին, ձայնավորից հետո *j*-ի անկումը (կորուստը) բազմավանկ բառերում նշված է՝ (38) *luna – lucenga*, դաս. հայ. *լուսնկայ*: Այս երևույթը ընդհանուր է ժամանակակից բոլոր բարբառների համար և արձանագրվել է VII դարի սկզբներին: 887թ. գրությունից դատելով, կարելի է թվագրել վերջին *j*-ի անկումը (բազմավանկ բառերում) IX դարին⁹: Բառարանը այս

⁸ Կարիերի հրատարակությունը գրախոսել է Պոլ դը Լագարդը ("Göttingische gelehrte Anzeigen", 1887, 2, SS. 292-294). նա մի քանի մեկնաբանություն է ավելացնում բառարանի բաղաձայնական և ձայնավորական համակարգի մասին: Ս. Մեյեն նույնպես համառոտ գնահատել է Կարիերի հրատարակությունը, "Auguste Carrière" // *Annuaire de l'Ecole pratique des hautes Etudes. Section des Sciences historique et philologique* 1903 (Paris, 1902, p. 26-27).

⁹ Տե՛ս Ա. Աբրահամյանի ներկայացրած նյութերը. «Փաստեր հայերենի պատմական հնչյունաբանության մի քանի երևույթների ժամանակագրության մասին» // ՀՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր» 1957, 4, էջ 78-82:

հարաբերության մեջ չի ներկայացնում և ոչ մի անսպասելի զարգացում:

Որոշ հնչյունական յուրահատկություններ հնարավորություն են ընձեռում տալու բառարաններում ներկայացված բարբառի ժխտողական բնութագիրը: Օրինակ, բառահոդված (19) XXX - *Erchun* [դաս. հայ. *երեսուն*], բացահայտում է միջին անշեշտ *ե-* ի հորանջը: Բառարանը ցույց է տալիս, որ անշեշտ *ե-* ի կրճատումը սկսվում է մեկ դար ավելի շուտ, քան ընդունված է լեզվաբանության մեջ¹⁰: Կրճատված ձևը հիշատակված է համարյա բոլոր բարբառներում, բացի ժամանակակից արևելյան բարբառներից (Երևան, Ագուլիս, Նոր Զուղա, Ղարաբաղ, Գորիս և Շամախի): Թբիլիսիի բարբառում երկվանկ *yarsun*-ին զուգահեռ կիրառվում է և եռվանկ *yarasun*-ը: Համեմատելով բարբառային ձևերի տարբերակները, պարզվում է, որ բառարանը չի ներկայացնում այս արևելյան բարբառներից և ոչ մեկը:

Հետագա հաստատումը կարող է գտնվել *երեսուն*-ի և *քառասուն*-ի բարբառային ձևերի համեմատությամբ: Պարզվում է, որ այն բոլոր բարբառները, որոնք կորցրել են միջին *ե-*ն *երեսուն*-ում, կորցրել են նաև միջին անշեշտ *ա-*ն *քառասուն*-ում: Այն բարբառները, որոնք պահպանել են *ե-*ն *երեսուն*-ում, պահպանել են նաև *ա-*ն *քառասուն*-ում¹¹: Սա համընկում չէ: Բացատրությունն այն է, որ *երեսուն*-ի և *քառասուն*-ի եռվանկ ձևերը պահպանած բարբառները վերականգնում են դասական շեշտը վերջինից դեպի նախա-վերջին վանկը¹²:

¹⁰ Անշեշտ միջին *-e-* կորստի ամենավաղ նկարագրական փաստը թվագրվում է 11-րդ դարից: Տե՛ս այդ հարցի քննարկումը Մ. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 104-07: Հ. Դ. Մուրադյան, Հնչյունաբանություն // Ակնարկնր գրական հայերենի պատմության, հ. 1, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 82 միայն ավելի վաղ օրինակներում:

¹¹ Բարբառային ձևերը վերցված են Աճառյանից. «Հայերեն արմատական բառարան» (վերահրատ. Ե., ԵՊՀ հրատ., 1971-1979). տե՛ս *երեսուն*, *քառասուն*. Ոզմի, Հավարիկի, Ակնի բարբառներում «40»-ի համար են նյութ չունեի. Դըրանք բոլորը *երեսուն*-ում կորցնում են *ե-*ն:

¹² Շեշտի կրճատման մասին տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., Հայպետհրատ, 1951, էջ 372: Նաև Ղարաբաղի բարբառի համար Կ.Ա. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, էջ 84-85: Այս փաստը կարևոր է հարաբերական ժամանակագրության համար:

Հավանական է, որ միջին անշեշտ *ե*-ի և *ա*-ի կորուստը համաժամանակյա բնույթ է կրում: Բառարանը տալիս է անշեշտ *ե*-ի կրճատման *erchun* և *ա*-ի կրճատման (49) *dens - atmunc* [դաս. հայ. *ատամունք*] ամենավաղ նշումը¹³: Այստեղ նույնպես բառացանկը տալիս է ավելի վաղ վավերացումներ ավելի քան մեկ դար կրճատված անշեշտ *-ա*-ով¹⁴: Միաժամանակ բառարանը անսպասելիորեն պահպանում է *-ա*-ն (20) XXXX - *karraschun* [դաս. հայ. *քառասուն*-ում]: Ինչպե՞ս է բացատրվում այս փաստը: Ըստ այսմ բառարանում բացառվում է *ե*-ի կորստի ավելի վաղ հնարավորությունը՝ հայ. *ատմունք*-ի և ժամանակակից բարբառների ավելի վաղ տվյալների վրա: Ես կարծում եմ, որ *քառասուն*-ում *ա*-ն կարող էր պահպանվել գրական լեզվի ազդեցությամբ: Այս նույն բացատրությունը հավանական է թվում նաև գրական կիլիկյան հայերենի համար, որը ցույց է տալիս *երեսուն*, չնայած անշեշտ միջին *ե*-ի կրճատում նշված է և այս բարբառում¹⁵:

Արդյունքում, բառարանը մի նորամուծություն է ցույց տալիս, որը չի գործում Ագուլիս – Ղարաբաղ – Երևան տարածքում: Սա բառարանի բարբառային ժխտողական նշումներից առաջինն է:

Բառարանի բարբառայնության պարզաբանման մեկ այլ բանալի է գտնվում դասական հայերենի *ռ* և *ե* հարաբերության մեջ: Փաստերը ճշտորեն հաստատել է Մեյեն մի քանի տարի առաջ: Անշեշտ դիրքում դասական հայերենի *ե*-ն և *ռ*-ն չեն երկբարբառայնանում: Այս դիրքում *ռ*-ն բառարանում գրվում է *ս*, որը ցույց է տալիս, որ դասական հայերեն *ռ*-ն ձգտում է ավելի փակ արտասա-

¹³ Հետաքրքիր է նշել, որ բառարանը ներկայացնում է *ատամն* դասական բառը, մինչդեռ առավել ժամանակակից բարբառները նշում են *ակոսայ* (բացառությամբ՝ Երևանի, Մոկսի, Մարաղայի, Մալմաստի, Փայաջուկի, Վանի, Ուզմի և Մուշի: Տե՛ս Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, տե՛ս *ատամն*: Մ. Հ. Մուրադյան, Բառագիտություն // Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, 1, Ե., 1972, էջ 167-296:

¹⁴ Անշեշտ միջին *-ա*-ի կորստի ամենավաղ փաստը թվագրվում է 1036-ից (Տեկոր): Տե՛ս Մ. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, էջ 381: Մ. Մուրադյան, Հնչյունաբանություն, էջ 74-76:

¹⁵ Տե՛ս J. Karst, Historische Grammatik des Kilikische-Armenischen, Strassburg, Trübner, 1901, 41-44 (*ա*-ի անկում), 51-52 (*ե*-ի անկում). 216-217 (թվականներ): Թվում է, որ '40'-ի մասին ոչ մի վկայություն չկա կիլիկյան գրական հայերենում. Կարստը ենթադրում է **քառուն*: Շեշտման պայմանները, որոնց պատճառով անշեշտ *-ա*- (երբեմն նաև *-e*-) ընկնում են, բացատրել է Մեյեն. "Esquisse d'une grammaire comparé de l'arménien classique (նաև 2-րդ հրատ., Vienne, Imprimerie des PP. Mékhitaristes, 1936, p. 20):

նության¹⁶: Օրինակ՝ (9) II - *ergout* [դաս. հայ. *երկու*], (37) sol - *archac* [դաս. հայ. *արեգակն*], (4) feria IIII - *khurec xapte* [դաս. հայ. *չորեքշաբթի*], (73) crus - *uluec* [դաս. հայ. *ուլոք(զ)*]: Շեշտված դիրքում դասական հայերենի *ե*-ն և *ո*-ն երկրաբառայնանում են, ինչպես՝ (10) III - *eriec* [դաս. հայ. *երեք*], (53) facies - *eriesc* [դաս. հայ. *երեսք*], (11) IIII - *khuert* [դաս. հայ. *չորք*], (67) dorsum - *cuelc* [դաս. հայ. *կողք*]: Այս դեպքում, երբ դասական շեշտված *ո*-ն միջին դիրքում մշտապես երևում է իբրև *ue*, բառարանը գրում է (*h*)*ua* միջին շեշտված դիրքում՝ (66) spina - *hauln* [դաս. հայ. *ողն*], (74) pes - *uaden* [դաս. հայ. *ոտն*]¹⁷: Դասական *ե*-ն երբեք չի երկրաբառայնանում. օրինակ՝ (80) deus - *ter* [դաս. հայ. տե], (88) preshibiter - *eresc* [դաս. հայ. երեց]: Որքան ինձ հայտնի է, շեշտված դիրքում դասական *ե*-ի երկրաբառայնացման ամենավաղ նմուշը գրված է հայկական տեղանունների հունական տառադարձության մեջ (Կոնստանդին Պորֆյուրոգենեսի աշխատության մեջ, որը մահացել է 959-ին)¹⁸: Իրականում, Ջահուկյանը ձգտում է շեշտված *ո*-ի և *ե*-ի երկրաբառայնացումը թվագրել դասական կամ նույնիսկ մինչդասական շրջանին¹⁹:

Այստեղ ուրվագծվող իրավիճակը հայտնաբերված է կիլիկյան գրական հայերենում²⁰: Սա իհարկե չի նշանակում, թե բառարանի

¹⁶ A. Meillet, Remarques sur la grammaire historique de l'arménien de Cilicie de M. J. Karst // Zeitschrift für armenische Philologie, 1904, 2, 25 (վերահրատ. "Etudes de linguistique et de Philologie arménien, Louvain Imprimerie Orientaliste, 1977, 2, p. 121):

¹⁷ Միջին և բառասկզբի դիրքում դասական *օ*-ի երկրաբառայնացման տարբերությունը ներկայացված են լեհահայոց բարբառում. A. Meillet, Remarques, 25: F. Feydit, Considérations de l'alphabet de Saint/ Mesrob, Wien, Mechitaristen-Bushruckerei, 1964, pp. 122-124: Ֆեյդիտ նշում է զարգացումը Ջուղայի բարբառում: *Eriec xapte* (3) [դաս. հայ. *երեքշաբթի*] և *khurec xaptet* (4) [դաս. հայ. *չորեքշաբթի*] անհամաձայնությունը պիտի բացատրվի նախորդող վանկում ձայնավորի բնույթով: *Tevavoet* (83) [հավանաբար դաս. հայ. *թեւաւոր*] բառում շեշտված *օ*-ն երկրաբառայնացել է, ինչպես սպասվում էր, սակայն գրվել է *oe*: *Lingua* (5) - *lizu* (դաս. հայ. *լեզու*. տե՛ս A. Meillet, Remarques, 25: Esquisse, 11): *Brachium* (62): *striuch* [դաս. հայ. *ձեռք*. տե՛ս վերը՝ 5]. Բառը հնարավոր է աղավաղվի:

¹⁸ Feydit, Considérations, pp. 103-104:

¹⁹ Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1972, էջ 268-269:

²⁰ Karst, Grammatik, 18-21 (որտեղ նա համոզված չէ *օ* > *uo* հարցում). Մուրադյան, «Հնչյունաբանություն», 63-67 (*e* > *ye*-ում), 67-72 (*օ*-ում): Կիլիկյան գրական հայերենը հետագայում զարգացել է, որում անշեշտ դասական հայ. *ե*-ն նայական բաղաձայններից առաջ երևում է իբրև *i*. *Autun eriec* vs. *իրեք* ([*իրեք*]) [դաս. հայ. *երեք*] [Karst, Grammatik, 49-50]:

բարբառը ճշգրիտ նախորդն է կիլիկյան գրական հայերենի: Ժամանակակից բարբառների երկբարբառայնացման տարածումը պետք է հաշվի առնել մինչև այս գուգահեռի համար հավաստի փաստեր գտնելը:

Շեշտված *ե*-ի և *ռ*-ի երկբարբառայնացման աշխարհագրական նկարագրությունը ժամանակակից բարբառներում ներկայացված է Ջահուկյանի աշխատանքում²¹: Շեշտված *ե*-ի երկբարբառայնացման հանդիպում ենք բարբառների 28%-ում, իսկ *ռ*-ինը՝ 31%-ում: Քանի որ բառարանում միաժամանակ հանդիպում են և՛ *ե*-ի, և՛ *ռ*-ի երկբարբառայնացման դեպքեր, ուստի ես ձեռնպահ եմ մնում տալ այն օրինակները, որտեղ հանդիպում է այս երկու ձայնավորներից միայն մեկի երկբարբառայնացումը:

Շեշտված *ե*-ի և *ռ*-ի երկբարբառայնացում գտնում ենք միայն մեկ հարակից տարածքում և մի քանի մեկուսացված շրջաններում: Հարակից շրջանը կենտրոնացված է Ուրմիա լճից արևմուտք և Խոյ-Ուրմիա բարբառի հարավային մասը (Ղարիբյանի VII խումբ), Վանա լճի ամբողջ տարածքը (VII խումբ), Մուշի բարբառի հարավային մասը (II խումբ), Վանա լճի հյուսիսային քաղաքներն ու Մուշը, այլև Սասունի բարբառի կենտրոնական մասը (IV խումբ)²²: Տարածված խմբերը միասին կիսաշրջան են կազմում Սվազի և Կարին – Երևանի տարածքում (I և II խմբեր), թեև շատ մեկուսացված են: Դրանք ներառում են՝ Ջեյթունի տարածքը (IV խումբ), Սվազի շրջակայքը (I խումբ), Խոտրջուրը (Տրապիզոնից արևելք՝ II խումբ), Լե-

²¹ *Ջահուկյան*, Հայ բարբառագիտության ներածություն, 63, գուգահեռություն հ. 30 (*ե > յե*) և հ. 31 (*ռ > լռ*) աղյուսակ 3-ի հետ:

²² Բարբառները խմբերում համարակալված են ըստ Ա. Ա. Ղարիբյանի բարբառների դասակարգման՝ «Об армянском консонантизме» // «Вопросы языкознания», 1959, 5, 81-90 (վերատպ. «Армянский консонантизм в оценке международной лингвистики», Ереван, АН АрмССР, Сектор научной информации по общественным наукам, 1975, 1-10): Մանրամասները տե՛ս *A. Pisowicz*, *Materiaux pour servir à la recherche du consonantisme arménien* // «Folia orientalia», 1976, 17, էջ 197-216: Նշված են այն վայրերը, որտեղ *е*-ն և *о*-ն երկբարբառայնանում են (Ջահուկյանի կողմից տրված համարներով, Հայ բարբառագիտության ներածություն, 33-36): Խոյի բարբառ՝ Փայաջուկ/Մալմաստ (118), Ուրմիա (119), Վանի բարբառ՝ Բաստ (67), Վան (68), Շատախ (69), Մոկս (70), Ոզմ (71), Վարդենիս (Սևանա լճից արևելք) (72), Մուշի բարբառ՝ Մուշ (55), Մանազկերտ (59), Արճեշ (65), Արծկե (66) [բայց ոչ Բիթլիս(63) և Խլաթ (64)], Սասունի բարբառ՝ Այգետուն (60), Նիշ (61):

նինական – Լոռի ուղղությունը (II խումբ)²³:

Ձուգահեռը հուշում է. որ երկբարբառայնացումը սկսվել է այս շրջանի կենտրոնից. լայն տարածք ընդգրկելով և հետագայում չեզոքացել է, համենայն դեպս մասամբ, մեկ այլ բարբառի տարածմամբ, որը չի երկբարբառայնացել: Մենք չունենք ճշգրիտ աղբյուր (իբրև այս տարածման), չնայած Ուրմիա – Վան – Մուշ տարածքը հարմար թեկնածու է: Եվ սակայն, նախքան բառարանի բարբառի վերջնական ճանաչումը, պետք է քննվի բառարանի բաղաձայնական համակարգը:

Դասական հայերենի բաղաձայնները [բ, դ, գ, ձ, ջ, պ, տ, կ, ծ, ճ, փ, թ, ք, ց, չ] բառարանում ներկայացված են հետևյալ կերպ:

Դասական ձայնեղ պայթականները²⁴ ռնգայինից հետո միջին դիրքում չեն փոփոխվում. (69) *renes* – *handam*, (71) *coxa* – *andan* [դաս. հայ. *անդամ*]: Սա բնորոշ է բոլոր բարբառներին, հետևաբար շատ վաղ զարգացում է, ուստի և չի կարող ծառայել իբրև վճռական փաստարկ²⁵:

Դասական ձայնեղ պայթականները այլ դիրքերում հանդես են գալիս իբրև խուլ պայթականներ՝ բառարանում²⁶: Բառասկզբում, օրինակ՝ (30) *vinum* – *chini* [դաս. հայ. *գինի*], (47) *os* – *peran* [դաս. հայ. *բերան*], միջձայնավորային դիրքում՝ (7) *feria VII* – *sabpat* [դաս.

²³ Ավելի ստույգ՝ Թումարգա (27. պատկանում է Արաբկիրի բարբառին, խումբ 3) – Հաճըն (32) – Ջեյթուն (33) գիծը. Սվասն (22) ու Բրգնիկ (23) տարածքներում, Խոտրջուրը (44). Լենինական (42)– Գյարգյառ (83) – Ղալաչա (82) գիծը, Կամոն (Սևանա լճի մոտ, 85):

²⁴ Բառարանը նշում է [d] ձ նշումով, [g]՝ ց նշումով, [b]-ի համար օրինակներ չկան:

²⁵ St u A. Piśowicz, Le développement du consonantisme arménien (Polske Akademia Nauk. Oddział w Krakowie. Prace Komisji językonawstwa, 43. Wrocław-Warszawa-Kraków-Gdańsk: Ossolineum, 1976), 60–62:

²⁶ Բառարանը խուլ պայթականների համար տալիս է հետևյալ տառադարձումը [t] = t, [p] = p կամ bp (*sabpat*), իսկ [k]-ի համար, մենք օրինակներ ենք գտնում ռումանական Եվրոպայի ուղղագրության կանոններին համապատասխան: [ke] = che [(1) *kyrache*] or ke [(78) *kenic*], ինչպես նաև kce [(40) *kcedinc*], մինչդեռ ce հանդես է գալիս որպես շփական [(38) *lucenga*] [դաս. հայ. *լուսնկայ*]. [ki] = ky [(1) *kyrache*] or chi [(30) *chini*], մինչդեռ ci հանդես է գալիս որպես հպաշփական [(59) *cize*] [դաս. հայ. *ծիծ*]. [ka]-ի համար մենք միայն հանդիպում ենք *cha* (38) *arechac*. Այլ դիրքերում [k]-ն գրվում է c. cu in (67) *cuelc*. nc (12) *hinc-nul*, ci (76) *cliu-nul*. Հիշարժան է, որ ոչ նորմալ գրությունը bp ([p]) *cha* և kce ([k]) միայն հանդիպում են այն դեպքերում, երբ խուլը ներկայացնում է դասական ձայնեղ բաղաձայն: Այսպիսով նրանք կարող են ունենալ հավելյալ հատկություններ: Հպաշփականը նշվում է kce-ով և cha-ով (57) *guttur-nul*. *Kcerchac* [դաս. հայ. *խշակ*]:

հայ. շաբաթ], (39) sol - rechac [դաս. հայ. *աբեզակն*], այլ միջակա դիրքերում՝ (2 և այլն) - xapte [դաս. հայ. -*շաբթի*], (6) feria - urpat – [դաս հայ. *ուրբաթ*], բառավերջի դիրքում՝ (12) V - hinc [դաս. հայ. *հինգ*], (84) sanctus – supr (ցույց է տալիս դրափոխություն) [դաս. հայ. *սուրբ*]²⁷:

Դասական խուլ պայթականները բառարանում ունեն կրկնակի գործածություն՝ ձայնեղ և խուլ: Իբրև կանոն՝ բառարանն ունի ձայնեղ պայթականներ դասական խուլ պայթականների դիմաց՝ *ն*-ի շրջապատում, ձայնավորների միջև և *ք*-ից հետո, օրինակ՝ ձայնեղ դիրքում: Կա մի քանի օրինակ. դասական խուլ պայթականները պահպանվում են, բառակզրում՝ (17) X - taz [դաս. հայ. *տասն*], (31) caseus - paner [դաս. հայ. *պանիր*]²⁸, բառավերջում՝ (57) guttur - kcerchac [դաս. հայ. *խոչակ*], (78) mulier - kenic [դաս. հայ. *կնիկ*], *ս*-ից հետո՝ (39) stellae - astil [դաս. հայ. *աստղ*]:

Դասական խուլ պայթականները ձայնեղանում են բառարանում, *ն*-ի մոտ՝ (38) luna - lucenga [դաս. հայ. *լուսնկայ*], (*ն*-ին նախորդող դիրքում հնչյունական իրացումը *սեն* է, բառացանկը հիմնականում *՛* [schwa] համարում է ձայնավոր. այստեղ ևս դասական խուլը բառացանկում տրվում է որպես ձայնեղ. (33) piscis - *chugen* [դաս. հայ. *ձուկն*], (74) pes - *uaden* [դաս. հայ. *նոն*]. նաև *ք* + բաղաձայն + ձայնավոր խմբում՝ (9) II – ergout [դաս. հայ. *երկու*], (36) celum - erginc [դաս. հայ. *երկինք*], (45) cilium - ardevanunc [դաս. հայ. *արտևանունք*], VCV խմբում՝ (40) terra – kcedinc [դաս. հայ. *գետինք*], (54) auris - aganch [դաս. հայ. *ականջ(ք)*], (61) humerus - tigunc [դաս. հայ. *թիկունք*]²⁹:

²⁷ *Hinc*(12) [դաս. հայ. *հինգ*] ձևը զարմանք է հարուցում. սպասելի էր ձայնեղ պայթական՝ իբրև ռնգայինից հետո [օրինակ ((*h*)/*andam*-ում) ձայնային հատկանիշի պահպանում՝ կցելով նաև բառավերջին դիրքը: (5) *hinc xapte* [դաս. հայ. *հինգշաբթի*]-ում *գ*-ն հավանաբար ձուլվել է հաջորդող շ-ին: (72) *genu: scunch* [դաս. հայ. *ծունգք*] եզակի *ծունգ*-ի փոխարեն կարող էր նշել հոգնակի *ծունգք*:

²⁸ Միակ բացառությունն է (70) *renes. gernac* [դաս. հայ. *կոնակ*]:

²⁹ Մի շարք դասական խուլ պայթականներ, ըստ այսմ, ձայնավորների միջև չեն ձայնեղանում: Երկու օրինակ՝ (1) *dies dominica. kyrache* [դաս. հայ. *կիրակէ*], (81) *altare. patarac* [դաս. հայ. *պատարագ*] պահպանում են իրենց դասական ձևը կրոնական լրացուցիչ բառիմաստի շնորհիվ (other instances of this influence in dialects gives *Pisowicz, Développement*, 61): Ես բացատրություն ունեմ (64) *digitus. matun* (հոգն. *մատն*-ի) [դաս. հայ. *մատուն(ք)*] բառի համար: (8) 1 - *meche. mēk*-ի *ե*-ն խնդրահարույց է, որքանով ժամանակակից ոչ մի բարբառ չունի **meke* կամ **mekē* ձևեր: Այս անսպասելի *ե*-ն բավականին հաճախ է

Ինչ վերաբերում է ձայնեղ և խուլ պայթականներին, ապա բառարանի գրանցման համակարգը նրանց որևէ առանձին զարգացման փաստարկ չի տալիս: Սակայն կան որոշ տվյալներ, որ պայթափականների զարգացումը հետևում է պայթականների օրինակին: Ինչպես որ դասական ձայնեղ պայթականներն են պահպանվում ռնգայիններից հետո [ինչպես (*h*)*andam*-ում], այդպես էլ կարելի է ենթադրել նույնը ձայնեղ պայթականների համար: Z-ն (14) *homo* - *anzen* [դաս. հայ. *անձն*] այսպիսով ցույց է տալիս ձայնեղ հնչյուն [դաս. հայ. *ձ*]: Հակառակը, *ch* կամ *sc* բառարանում նշում է խուլ պայթափական. (33) *piscis* - *chugn* [դաս. հայ. *ձուկն*], (32) *ovum* - *chu* [դաս. հայ. *ձու*], (77) *testiculi* - *scuc* [դաս. հայ. *ձու-ք*], (35) *aqua* - *chure* [դաս. հայ. *ջուր*], (54) *auris* - *aganch* [դաս. հայ. *ականջ(ք)*]: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ բառարանում դասական ձայնեղ պայթափականները (*ձ* և *ջ*) խլանում են ³⁰:

Դասական խուլ չ-ն մնում է այդպիսին բառավերջում. (75) *cabilia* - *cuech* [դաս. հայ. *կոճ*]: Խուլ ծ-ն մնում է այդպիսին բառասկզբում, բայց ձայնեղանում է ձայնավորների միջև՝ (59) *mamilla* - *cize* [դաս. հայ. *ծիծ*]՝ չբացատրված վերջնական *ե*-ով³¹:

Ինչ վերաբերում է դասական խուլ շնչեղներին, դրանք դժվարությամբ են նկատվում իբրև այդպիսին բառարանում: Դասական *թ*-ն ամենուրեք գրվում է *t*, դասական *ք*-ն գրվում է *c* (*i*-ից առաջ՝ *ch*, ինչպես՝ (46) *nasus* - *chit* [դաս. հայ. *քիթ*] կամ *k* ((20) *XXXX* - *karraschun* [դաս. հայ. *քառասուն*]-ում): Only in the case of (35) *pugnis* - *prunhc* [դաս. հայ. *քունք*] կարելի է ենթադրել, որ շնչեղացումը նշվում է բաղաձայններից առաջ *h* ավելացնելով: Դասական *փ*-ն

հանդիպում բառարանում. (35) *chure* [դաս. հայ. *ջուր*], (55) *vize* [դաս. հայ. *վիզ*], (59) *cize* [դաս. հայ. *ծիծ*], (60) *puerhe* [դաս. հայ. *փոքր*]: Ես տարակուսում եմ *ե*-ն ներկայացնել իբրև որոշիչ հոդ (ինչպես ասում է Կարիերը), քանի որ, թվում է, առաջացել է ավելի ուշ:

³⁰ Բառավերջի *ջ*-ի անձայնացումը ռնգայինից հետո *aganch*-ում [դաս. հայ. *ականջ(ք)*] պետք է համեմատվի *hinc* [դաս. հայ. *հինգ*] բառի հետ. տե՛ս վերը թ. 27:

³¹ Գոյությունը (8) *meche* [դաս. հայ. *մեկ*] և (59) *cize* [դաս. հայ. *ծիծ*] հավանական է. ինչն է, տե՛ս վերը թ. 29: Ինչ վերաբերում է *z* գրին, նրա համար նշվում է ձայնեղ հնչյուն ձայնավորների միջև [(27) *hazar* [դաս. հայ. *հազար*], (42) *mazen* [դաս. հայ. *մազ(ն)*], (59) *cize* [դաս. հայ. *ծիծ*] և ռնգայիններից հետո (47) *anzen*, բայց և խուլ հնչյուն բառավերջի դիրքում (17) *taz* [դաս. հայ. *տա(ն)*], (28) *panis* - *haz* [դաս. հայ. *հաջ*]:

գրվում է *p* բառասկզբում՝ (56) *gula* - *puelc* [դաս. հայ. *փողք*], բայց *b*՝ վերջին դիրքում (միայն (63) *manus* - *hab* [դաս. հայ. *ափ*])³²: Ես ենթադրում եմ, որ բառարանի բարբառում գերակշռում են խուլ շփական բաղաձայնները, ի նկատի առնելով շնչեղացված պայթաշփականների արտաբերումը և այն տեսանկյունը, որ բոլոր ժամանակակից բարբառները պահպանում են դասական *փ*, *թ*, *ք*՝ իբրև շնչեղացած խուլ պայթականներ³³:

Եթե համեմատենք բառարանի բաղաձայնական համակարգը ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգի հետ, ապա կստանանք հետևյալ պատկերը.

Խումբ		Բառասկիզբ			Միջձայնավորական		
	Դաս. հայ.	t	d	տ'	t	d	տ'
	1. Սվազ	d	տ'	տ'	d	d'	տ'
	2. Երևան	t	d'	տ'	d	տ'	տ'
	3. Տրապիզոն	d	d	տ'	d	տ'	տ'
	4. Սասուն	d	t	տ'	d	t	տ'
	5. Մալաթիա	d	տ'	տ'	d	տ'	տ'
	6. Ագուլիս	t	d	տ'	t	d	տ'
	7. Վան	t	t	տ'	t	t	տ'
	8.(Ղարաբաղ-Լոռի)				t	տ'	տ'
	Օտուն	t	t	տ'	d	t	տ'

³² Սա բառարանում պարզ *b*-ի դիմաց *bp* հնչյունախմբի (*sabpat*- *շաբաթ*) միակ դեպքն է:

³³ Քանի որ բառարանում խուլ և շնչեղ պայթականների միջև գրառման տարբերություն չկա, ուստի կարելի է եզրակացնել, որ խուլ և շնչեղ պայթականները համաձայնում են միասին դառնում են շնչեղացած պայթական: Այս հնարավորությունը բացատրվում է կիսաշփականների գրությամբ, որոնք որոշ դեպքերում նշվում է խուլերի և շնչեղների միջև: Այսպես, դասական *ճ*-ն գրվում է *ch* (75), մինչդեռ դասական հայերեն *ճ*՝-ն՝ *kh*. [(11) *khuert* [դաս. հայ. *չորք*] կամ *hc* [(43) *oculus* - *hahc* [դաս. հայ. *աչք*], [(82) *crux* - *chahc* [դաս. հայ. *խաչ*], ուր նախահունչ *h*-ն կարող է արտահայտել շնչեղություն: Երկու ձևն էլ ներկայացնում են բացարձակապես դասական *ճ*՝-ն: Մական (57) *gutter* - *kcerchac* [դաս. հայ. *խոշակ*] օրինակը տարակուսելի է: Դասական *c*-ն երևում է իբրև *c* կամ *sc* (և *-z*- (59) *cize* [դաս. հայ. *ծիծ*], մինչդեռ դասական *c*՝-ն գրվում է *-t* [(13) *VI viit* [դաս. հայ. *վեց*], *-z* [(28) *panis* - *haz* [դաս. հայ. *հաց*], նաև *-sc* (88) *presbiter* - *eresc* [դաս. հայ. *երեց*]:

Պարզորոշ է, որ բառարանի բաղաձայնական համակարգը ճշտիվ չի համապատասխանում բարբառներից որևէ մեկին. Բառասկզբի դիրքում այն համանման է Վանին, միջձայնավորական դիրքում՝ Սասունին, սակայն չկա ժամանակակից մի որևէ բարբառ, որը համապատասխանի երկու դիրքին էլ: Սա զարմանալի չէ, քանի որ բառարանի և ժամանակակից բարբառների միջև ընկած է ավելի քան 1000 տարվա հեռավորություն: Շարունակելուց առաջ անհրաժեշտ է ժամանակակից բարբառների ավելի վաղ շրջանի զարգացման մասին մի որևէ տեղեկություն: Այդպիսի տեղեկություն է տալիս Ֆ. Կորտլանդտի ուսումնասիրությունը հայ բարբառների բաղաձայնական համակարգի զարգացման ժամանակագրության մասին³⁴: Ես կաշխատեմ բառարանի իրավիճակը ծառայեցնել Կորտլանդտի առանձնացրած զարգացման փուլերին:

Ժամանակակից բարբառների զարգացման համար առաջին-թաց գիծ հայտնաբերված Ագուլիսի կենտրոնական բարբառում, որտեղ դասական լեզվի համեմատությամբ բաղաձայնական համակարգը չի փոփոխել: Սակայն բառարանը չի կարող պատկանել այս բարբառին (VI խումբ), քանի որ բառարանը դասական ձայնեղ պայթականները վերածել է խուլ պայթականների: Սա պայմանավորված է արդեն հաստատված երկու փաստով. ո՛չ կրճատումը (Օտուն *erehun*, հմմտ. դաս. հայ. *երեսուն*) և ո՛չ էլ երկբարբառայնացումը չի նշված Ագուլիսի բարբառում]:

Ընդհանուր առմամբ, մյուս բարբառները ծագում են կենտրոնական տարածքից հնչյունական տեղաշարժի հետևողական երկու ալիքի շնորհիվ. առաջինը բնութագրվում է ձայնեղ բաղաձայնների շնչեղությամբ (դաս. հայ. *q* > բրբռ. *q'*), ընդգրկելով Երևան – Կարին – Մուշ բարբառները (II խումբ), իսկ երկրորդը բնորոշվում է ոչ շնչեղ ձայնեղ բաղաձայնների խլացմամբ (դաս. հայ. *d* > բրբռ. *m*), ընդգրկելով Ղարաբաղ – Խոյ – Ուրմիա – Վան բարբառները (VII խումբ): Մյուս բարբառները ծագում են այս երկու խմբերից ավելի ուշ փուլերում:

³⁴ *Frederik Kortlandt, Notes on Armenian historical phonology II (the second consonant shift) // "Studia Caucasica", 1978, 4, էջ 9-16:*

Բառարանը չի պատկանում նաև այն բարբառների խմբին (Երևան – Կարին – Մուշ), որոնք ծագել են առաջին ալիքից, որովհետև չի շնչեղանում, բայց և միաժամանակ խլացնում է դասական ձայնեղ բաղաձայնները: Սա նույնպես պայմանավորված է ամբողջովին հրատարակված փաստերով. *է*-ի կրճատման երևույթը չի հասնում Երևանի բարբառին, *է*-ի և *ռ*-ի երկբարբառայնացումը չի ազդում Երևան – Կարին տարածքի վրա, այլ միայն Մուշի բարբառի հարավային մասի վրա:

Այնպես որ, բառարանի բարբառը պատկանում է այն խմբին, որը ծագել է II ալիքով: Սա պայմանավորված է դասական ձայնեղների (*բ, դ, գ*) խլացմամբ բառարանում (*պ, տ, կ*): Բարբառային տարածքը կարելի է ավելի նեղացնել: Բառարանը չի պատկանում և Ղարաբաղի տարածքին, որքանով *է*-ի կրճատման և *է*-ի և *ռ*-ի երկբարբառայնացման երևույթները չեն հասել այդ տարածքին: Այդ (երևույթը) շրջանցել է նաև Խոյ – Ուրմիա – Վան տարածքը:

Սակայն բարբառը համանման չէ VII խմբի արևմտյան բարբառներին, քանի որ այն ձայնեղացնում է դասական *տ*-ն (*> դ*) ձայնեղ միջավայրում:

Կորստանդուպի հարաբերական ժամանակագրության համաձայն, III զարգացումը ներառում է նաև խուլ պայթականների ձայնեղացում (ծերպաձայնացում՝ գլոտալացում) [դաս. հայ. *տ*՝ն այլն *> դ*՝ն այլն]: Բացարձակ իմաստով, փոխառյալ բառերը թույլ են տալիս թվագրել այս զարգացումը 7-10-րդ դարերին: Խոյ – Ուրմիա – Վան տարածքը վերաբերում է այս III զարգացմանը, հանգեցնելով IV բարբառային խմբի ծագման (Սասուն – Ջեյթուն – Սիրիա կամ Կիլիկիա տարածքներ, որոշ ցրված տարածքներ այլ վայրերում, հատկապես Սև ծովի հարակից Համշենի բարբառի արևմտյան կամ Ջանիկի տարածքում):

Այժմ հետևելով բառարանին, տեսնում ենք, որ դասական խուլ պայթականները մասամբ են միայն ձայնեղացած, այն էլ միայն ձայնեղի միջավայրում: Կարելի է եզրակացնել, որ բառարանի բարբառը ներկայացնում է մի միջակա փուլ II (դաս. հայ. *տ*՝ն այլն դեռևս խուլ է) և III (դաս. հայ. *տ*՝ն այլն ձայնեղ *դ* է և այլն) փուլերի

միջև: Այս բարբառի աղբյուրը պետք է փնտրել մի որևէ վայրում Վանա լճի հարավային կամ արևմտյան կողմերում:

Այս նշումներով և բառարանում ներկայացված բարբառի ծագումով, արդյոք հնարավո՞ր է ավելի ճշգրիտ ցույց տալ նրա աշխարհագրական դիրքը X դարում: Փնտրելով այդ վայրը, որը պատկանում է IV խմբին, այլև ցուցադրում է *է*-ի և *ռ*-ի երկբարբառացումը, հանգում ենք Ջեյթունի կամ Սասունի տարածքին: Սա նշանակում է, որ բառարանի բարբառը չի պատկանում ամենահարավային՝ IV բարբառային խմբի սիրիական մասին, որքանով երկբարբառայնացումը չի հասել և այս տարածքին: Սակայն դա չի նշանակում, թե արևմտյան Եվրոպայում բառարանը վանականներին թելադրող հայր ծագումով Սասունից կամ Ջեյթունից է: Աշխարհագրական կապը տարածված հարավային մասերի IV բարբառային խմբում (Սասուն – Ջեյթուն – Սիրիա) այնպիսին է, որ այն ենթադրում է ավելի վաղ շրջանում կցված տարածք, որն այժմ բաժանվում է ավելի ուշ ձևավորված V բարբառային խմբի ներթափանցմամբ (Մալաթիա – Տիգրանակերտ – Ուրֆա), որ ոչ մի երկբարբառացում ցույց չի տալիս: Այսպիսով, հայ տեղեկատուն կարող էր գալ Ջեյթուն – Մալաթիա – Սասուն – Վան ուղղությունից:

Նախնական եզրակացությունը, որ ներկայացված է Օտունի բառարանի բարբառի բնույթի և ծագման վայրի մասին, առաջին մոտեցումն է, որ արվում է այս հետաքրքիր փաստաթղթի միայն մի քանի յուրահատկությունների հիման վրա: Ավելի մանրամասն ուսումնասիրությունը անկասկած արժանի է գնահատանքի:

Անգլերենից թարգմանությունը ք.գ.թ. Ն. Գ. Հովհաննիսյանի

«Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում», Ե., 2015, 78 էջ:

Գիրքը գրվել է վերջին տարիներին Սիրիայի հայ գաղութի հետ կապված դեպքերի առնչությամբ: Դեպքեր, որոնք այնքան էլ նպաստավոր չեղան նաև լեզվական առումով: Գաղթօջախի կայուն վիճակի խարխլման վտանգի առջև կանգնած Սիրիայի հայության լեզվական քննությանն է վերաբերում այս ժողովածուն, որը հեղինակային կոլեկտիվ աշխատանքի արդյունք է:

Գրքում ընդգրկված ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով: Գիրքն ունի պատասխանատու խմբագիրներ (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ա. Ե. Սարգսյան և բանասիր. գիտ. դոկտոր Ռ. Մ. Թոխմախյան), գրախոս (պատմ. գիտ. թեկնածու Ա. Ֆիշենկյան), որոնց հանձնարարական-երաշխավորությամբ լույս է տեսել ժողովածուն, և որում ընդգրկված է ընդհանուր թեմային վերաբերող տարբեր հարցերի նվիրված յոթ առանձին ուսումնասիրություն:

Անդրադառնանք դրանց առանձին-առանձին՝ ընդհանուր դիտվածքի մեջ:

Վ. Կատվալյանի ուսումնասիրությունը, որն, ի դեպ, ունի նույն վերնագիրը, ինչ ժողովածուն, ընդհանուր գծերով ներկայացնում է խնդրի էությունը՝ կապված արդի լեզվաքաղաքականության խնդիրների հետ, այնուհետև նշվում է, որ այդ ուղղությամբ աշխատանքների է ձեռնամուխ եղել ինստիտուտի նոր բացված արևմտահայերենի բաժինը:

Այնուհետև, թերևս ծրագրային է հետևյալ տեղեկացումը. «...լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժինը ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրով տրամադրված ֆինանսական աջակցությամբ նախաձեռնել է Սիրիայի հայ համայն-

քում արևմտահայերենի արդի վիճակի ուսումնասիրությունը» (ն. տ., էջ 6-7):

Համառոտ անդրադարձ է կատարվում Միրիայի հայ գաղութի ձևավորմանը և պատմությանը, ձեռքբերումներին, մանավանդ կրթության և հայապահպանության գործում, ինչպես նաև այն, թե տեղի հայությունը ինչպիսի բարբառների կրող է և վերջին տարիներին դրանք որքանով են ուսումնասիրված, և ինչ խնդիրներ կան առաջիկայում այդ առումով: Սեղմ շարադրանքով ներկայացվում են Անտիոքի շրջանի բարբառային կացությունը, վերջինիս նկարագրությունը նախկինում, մանավանդ Հ. Աճառյանի և Ա. Ղարիբյանի աշխատություններում: Կարևորվում է այն, որ նոր պայմաններում հնչյունաբանության մակարդակում փորձառական ուսումնասիրություն է կատարվում բարբառի ձայնավորական և բաղաձայնական համակարգերի յուրահատկությունների վերհանման ուղղությամբ:

Կատարվում են ավելի մասնավոր վերլուծություններ, մանավանդ հնչյութային մակարդակի միավորների վերաբերյալ: Ուշադրության են առնվում ձայնավորների և երկհնչյունների այն յուրահատկությունները, որ նկատվում են Միրիայի հայ համայնքի խոսվածքներում, օրինակ՝ արևմտահայերենի /h/ երկհնչյունը հանդես է բերում հակում դեպի *m* ձայնավորը. «Միրիահայ լեզվակիրների արտասանվածքի ձայնաբանական վերլուծությամբ պարզվել է, որ նրանց խոսքում *ju* կապակցությունն ունի յուրահատուկ ֆիզիկական արտահայտություն, որտեղ քմայնության հատկանիշը չի ծավալվում *m* ձայնավորի ողջ սպեկտրապատկերում, ինչը թույլ չի տալիս տվյալ դեպքում խոսել *m*-ի քմայնացման մասին» (ն. տ., էջ 9):

Ժողովածուն ունի առանձին բաժին՝ «Պատմական ակնարկ» (հեղինակ՝ Տ. Սաֆարյան), որում բավականին սեղմ շարադրանքով տրվում է տարածաշրջանային կարևոր միավորի հարյուրամյակների պատմությունը՝ աշխարհաքաղաքական տարբեր հաջորդումների հենքի վրա: Եղեռնից մազապուրծ հայության մի զգալի հատված ապաստան է գտնում Միրիայում, որտեղ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին թե՛ ազգային ինքնության պահպանման և թե՛ հոգևոր-մշակութային զարգացման համար: Աշխատանքը որոշակի պատկերացում է տալիս հատկապես վերջին տասնամ-

յակների հայության մշակութային և կրթական վիճակի վերաբերյալ, իսկ վերահաս փորձությանը նրանք դիմակայում են մայր հայրենիքի աջակցությամբ՝ ընդհուպ որոշակի մասի Հայաստան տեղափոխվելով:

Ռ. Թոխմախյանի աշխատանքը վերաբերում է Սիրիայի հայության լեզվի հնչունական համակարգին: Հեղինակը, նախ, գտնում է, որ «սիրիական հայ համայնքի արտասանական-հնչունական առանձնահատկությունները...էապես չեն տարբերվում լիբանանյանից» (ն. տ. էջ 19):

Ըստ այդմ քննվում է *հւ > յու* հարաբերակցությունը. «Փորձառական ուսումնասիրությունը (սիրիահայ լեզվակիրների արտասանական վերլուծությունը) թույլ է տալիս փաստել, որ հատկապես նրանց խոսքում *յու* կապակցությունն ունի իր ֆիզիկական արտահայտությունը, որտեղ քմային հատկանիշը չի տարածվում ձայնավորի ողջ սպեկտրի վրա, այլ ունի իր ինքնուրույն պատկերը» (ն. տ., էջ 21):

Հետաքրքիր դիտարկում է նաև այն, որ բաղաձայնների համար նախկինում նկատված եռաստիճան համակարգից երկաստիճանին անցնելու վերաբերյալ հեղինակը հայտնում է իր թերահավատությունը, այն է՝ «երկաստիճանն ունի եռաստիճանի հնչական տարբերակվածություն» (ն. տ., էջ 19): Սա շատ արդյունավետ դիտարկում է առհասարակ այս տարածքի ներկայիս բարբառային արտասանության համար:

Այսպես նաև քննվում է *բ-ռ, ք-ն* (հոդերի) հարաբերակցությունը, ընդ որում վերջինը շարութային կապի մեջ: Առաջինի վերաբերյալ եզրակացությունը հետևյալն է. «Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ թեև հնչութային հակադրություն չկա, և խոսքում գերազանցապես գործածվում է *բ* ձայնորդը, այնուամենայնիվ կան բառեր, որոնցում մեծամասամբ հանդես է գալիս համեմատաբար կոշտ հնչույթը, ու այն չունի որոշակի բաշխվածություն, ուստի չի կարելի դիտարկել որպես հնչութային տարբերակ» (ն. տ., էջ 22-23):

Պ. Վարդապետյանը սեղմ շարադրանքով ներկայացնում է, ինչպես վերնագիրն է կոչվում՝ «արևմտահայերենի որոշ իրողու-

թյուններ», որոնք մասամբ են առնչվում բուն թեմատիկային: Հեղինակը գտնում է, որ Սիրիայի և Միջագետքի հայությունը թեև ի վիճակի եղավ պահպանելու իր ինքնությունը, մանավանդ լեզուն, այնուամենայնիվ տեղական խոսվածքներում ժամանակի ընթացքում փոքրիշատե տեղ գտան օտար բառեր և ձևեր, դարձվածքներ և արտահայտություններ, որոնք ինքնին ուշագրավ փաստեր են:

Թեմայի առումով բավականին հետաքրքիր է Ա. Քարտաշյանի աշխատանքը, որում քննվում են, ըստ վերնագրի՝ «արևմտահայերենի հատուկ անունների գրության անմիօրինականության հարցեր»: Վերջին տարիների մամուլի էջերից քաղված նյութի քննությունը ցույց է տալիս, որ գրական արևմտահայերենը շարունակում է հանդես բերել գրության անմիօրինակություն նաև հատուկ անունների դեպքում: Փաստական նյութն ընդգրկում է զգալի թվով տեղանուններ և անձնանուններ (վերջիններս՝ ըստ սեռերի): Խոսվում է նաև դարձվածային միավորների մասին՝ նշելով, որ «սիրիահայերի դարձվածային արտահայտություններում նկատելի են տարբերություններ գրական արևելահայերենի համեմատությամբ» (ն. տ., էջ 39):

Այս ժողովածուի ամենածավալուն աշխատանքը նվիրված է արևմտահայերեն գոյականի հոլովմանը (ն. տ., էջ 42-64): Ս. Տիոյանը այն քննում է գրավոր և բանավոր խոսքի մակարդակում՝ վերնագրում նշելով, որ աշխատանքը կատարվում է «ըստ սիրիահայ հայրենակիցների վկայությունների»: Այդուհանդերձ, հեղինակի տեսական հիմքերն են վերջին տարիներին լույս տեսած այն աշխատանքները, որոնք վերաբերում են արևմտահայերենին՝ իբրև ուսումնական կամ օժանդակ ձեռնարկներ, ինչպես նաև բառարաններ, գրական հայերենի երկու տարբերակների զուգադրական քերականություն:

Աշխատանքի վերնագրում նշվում է, որ այն ներառում է գոյականի հոլովման համակարգը, սակայն, չգիտես ինչու, դրանից հետո (աշխատանքի երկրորդ մասում՝ էջ 53-64) անցում է կատարվում բայական համակարգի իրողությունների նկարագրությանը, այն էլ ուսումնական մի ձեռնարկի, այլև տեղեկատու (ինֆորմանտ) անձի «վկայությամբ»:

Բավականին մանրամասն նկարագրվում են հոլովման համակարգի գրեթե բոլոր բաղադրիչները, բերվում են օրինակներ, որոնք առհասարակ հայտնի են գրական արևմտահայերենում, մանավանդ որ այդ թեմայով կան բազմաթիվ տեսական աշխատություններ՝ գրված թե՛ նախկինում և թե՛ մեր օրերում: Նկատենք, որ որոշ հարցեր այդպես էլ մնում են չպարզաբանված, այլ կերպ ասած՝ նախկին լուծումների մեջ:

Այսպես, անդրադառնալով սահմանական եղանակի ներկա ժամանակային ձևի կազմությանը՝ հեղինակը ծավալուն շարադրանքով ներկայացնում է *կը* (*կու*, *կ'*) և *կոր* բաղադրիչ մասնիկների ծագման հարցը՝ ընդարձակ քաղվածքներ անելով ուրիշ ուսումնասիրողների աշխատություններից, բերելով համապատասխան օրինակներ՝ թե՛ նոր և թե՛ մեջբերումներում եղած: Եվ այդպես էլ հարցը մնում է չլուծված, քանի որ ապացուցման համար անհրաժեշտ տվյալները պարփակված են ավանդական տեսակետների սահմանում, այնինչ սպասելի էր, որ նաև նոր տվյալների (օրինակ՝ Է. Մակակի, Գ. Ջահուկյանի և ուրիշների) հիման վրա կատարվեր քննարկումը: Այս հանգամանքը շեշտում ենք, որովհետև այդ հարցը խիստ կարևոր է ոչ միայն արևմտահայերենի, նրա հիմք հանդիսացած *կը* ճյուղի բարբառի (եթե ոչ բարբառների), այլև առհասարակ հայերենի պատմության համար:

Հեղինակի աշխատանքի լավագույն մասը, ինչ խոսք, հոլովման և խոնարհման համակարգերի պարզ, օրինակների վրա հիմնված նկարագրությունն է, որով սեղմ պատկերացում է ստեղծվում առհասարակ արևմտահայերենի ձևաբանական այդ իրողությունների վերաբերյալ:

Գրախոսվող ժողովածուի մեջ վերջին (ավանդական ուղղագրությամբ գրված) աշխատանքը վերնագրված է՝ «Արևմտահայերենի խնդիրները Սուրիոյ մէջ» (հեղինակ՝ Հ. Մարաշլյան): Սկզբում իսկ նշելով այն հայտնի դրույթը, որ «արևմտահայերենի վիճակը, անոր գոյությունը թե՛ գիտական, թե՛ պետական, թե՛ ալ ընկերային ուշադրության գլխավոր խնդիրներեն մեկն է», հեղինակն անդրադառնում է հետևյալ խնդիրներին՝ արագ փոփոխությունների ենթարկվող մեր ժամանակի իրականության անդրա-

դարձը հայերենի արևմտահայ տարբերակի վրա, արևմտահայ համայնքների վիճակը, դպրոցական կրթության, հատկապես ուսուցչության հարցը («գրեթե ամեն տեղ ուսուցչի պաշտոնը երկրորդական նկատված է»), դասագրքերի խնդիրը:

Հեղինակն այս հարցերի շուրջ կատարում է ավելի շուտ արտալեզվաբանական, քան բուն լեզվաբանական վերլուծություն, և այնուամենայնիվ գրեթե ամբողջական պատկերացում է տալիս արևմտահայության, մասնավորաբար Սիրիայի հայության սոցիալական և կրթական կյանքի ներկայիս վիճակի վերաբերյալ:

Նման ժողովածուի երևան գալը, ինչպես գիտենք, պայմանավորված է խնդրի հրատապությամբ, այն է՝ Սիրիայի հայ համայնքի նկատմամբ միանգամից առաջացած առանձնահատուկ վերաբերմունք դրսևորելու անհրաժեշտությամբ, որն իր առաջնահերթ խնդիրներից մեկը դիտեց ՀՀ Սփյուռքի նախարարությունը, և ինչպես տեսնում ենք, այն լուծում է իր ամբողջ հնարավորությունների սահմաններում: Վերջին ասածիս վառ արտահայտություններից մեկն էլ սույն գրքի լույս ընծայումն է:

Վ. Գ. Համբարձումյան

IX Международная конференция по армянскому языкознанию: Сборник тезисов, Санкт-Петербург, “Нестор-История”, 2012, 240 с.:

Հայերենագիտական 9-րդ գիտաժողովը (կոնֆերանսը) տեղի է ունեցել Ռուսաստանի Դաշնության Պետերբուրգ քաղաքում (2012 թ. նոյեմբերի 79)՝ նախաձեռնությամբ ՌԴ ԳԱ լեզվաբանական ուսումնասիրությունների ինստիտուտի (տնօրեն՝ պրոֆ Ն. Ն. Կազանսկի): Լույս են տեսել գիտաժողովի զեկուցումների թեզիսները՝ նշված վերտառությամբ:

Ուշադրության արժանի գիտական միջոցառում ներկայացնող յուրաքանչյուր գրքի մասին տարիներ անց գրախոսական գրելն ամենևին էլ ուշացած չէ: Ստորև ներկայացնում ենք վերը նշված գիրքը, որը համալրում է Միջազգային հայերենագիտական ժողովածուների շարքը (1-ինը՝ Delmar, N.Y.: Caravan Books, 1980, 246 p., 2-րդը՝ Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 854 էջ. 3-րդը՝ Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1993):

Գիտաժողովի կազմը բավականին ներկայացուցչական է եղել՝ ոչ միայն մասնագիտական, այլև գիտական տարբեր հաստատություններ և թեմատիկ ուղղություններ ընդգրկելու իմաստով:

Ժողովածուն պարփակում է

հինգ տասնյակից ավելի թեզիսներ (թվով՝ 54): Անմիջական մասնակցություն են ունեցել կամ իրենց զեկուցումների թեզիսներն են ուղարկած եղել մի շարք երկրներից (Հայաստան, Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, Արգենտինա, Հունգարիա, Իտալիա, Դանիա և այլն):

Նման լայն ընդգրկումը վկայում է, որ հայերենը այսօր ևս շարունակում է լինել համաշխարհային լեզվաբանության ուշադրության ոլորտում: Ընդ սմին հայոց լեզվի ուսումնասիրությամբ զբաղվում են ոչ միայն Հայաստանի և Ռուսաստանի, այլև արտասահմանի հիշյալ երկրների մեկ և ավելի գիտական, մանավանդ բուհական հաստատությունների մասնագետներ (Երևան, Մոսկվա, Պետերբուրգ, Փարիզ, Լեյդեն, Կոպենհագեն, Մայնի Ֆրանկֆուրտ, Օքսֆորդ, Քեմբրիջ, Միչիգան, Հարվարդ, Կլիվլենդ, Մասաչուսեթս, Սան Պաուլո, Բուդապեշտ, Պիզա, Միլան, Կասինո և այլն):

Գիտական զեկուցումների թեզիսները տպագրված են հայերեն, ռուսերեն և օտար լեզուներից մեկնումեկով (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն):

Մասնակիցների թվում են անվանի լեզվաբաններ (Ջ. Գրեյին, Շ.

դը Լամբերտրի, Ա. Դոնաբեդյան Դեմուպուլոս, Ա. Կոռն, Բ. Օլսեն, Ա. Օրենգո), ճանաչված հայերենագետներ (Ջ. Կլաքսոն, Ծ. Հարությունյան, Թ. վան Լինտ, Ս. Ջոյան, Ա. Պետրոսյան, Հ. Մարտիրոսյան, Հ. Պետրոսյան, Ս. Մուրավյով), հմուտ մասնագետներ (Գ. Գևորգյան, Հ. Մեսրոպյան, Դ. Գյուլգաստյան, Ա. Սարգսյան, Ա. Սանթոյան), որոնք հայերենի ուսումնասիրության մեջ ունեն որոշակի ներդրում, հեղինակ են մենագրությունների և գիտական հոդվածների: Հատկանշական է նաև այն, որ մասնակիցների մի մասը գիտության մեջ բոլորովին նոր մուտք գործող հետազոտողներ են:

Կարելի է առանձնացնել մի քանի խումբ գեկուցումներ, որոնք հիմնականում աչքի են ընկնում նոր հարցադրումներով, ուստի բավականին արդիական են:

ա) Հայերենի համեմատական ուսումնասիրություն: Այս բնագավառում, մի քանի տասնամյակ է, ինչ սկիզբ է առել մի նոր՝ «ձայնածերպային» («գլոտալ») ուսումնասիրության շրջան, որտեղ մեծ, նույնիսկ վճռական տեղ է տրվում հայերենի փաստերին, և արտասահմանի գիտնականները արձանագրել են նոր ձեռքբերումներ:

Այդուհանդերձ, ուսումնասիրողներն այսօր կանգնած են այդ բնագավառի մեջ ավելի արդյունավետ քննություն կատարելու խնդրի առջև՝ հայերենը (իր բոլոր բաղադրիչներով) քննել նոր հիմունք-

ներով, անհրաժեշտ լրացումներով և ճշգրտումներով, ըստ ամենայնի սահմանելով այլ լեզուների հետ նրա ունեցած զուգադիպումները (Վ. Համբարձումյան): Կարևոր անդրադարձ կա հայ-հյուսիսկովկասյան և խոռաուրարտական լեզվական առնչություններին (Ջ. Գրեպին), արևելակովկասյան լեզուների «արմենիզմների» քննությանը (Գ.Ռ. Գուսեյնով), բառային համաձուլմանը և ստուգաբանությանը (Ջ. Կլաքսոն), հայերեն և բալկանյան լեզուների առնչություններին (Շ. դը Լամբերտրի):

Առանձին գեկուցումներ նվիրվել են կոնկրետ բառերի ստուգաբանությանը: Այսպես, փորձ է արվում վերստին ստուգաբանել նախկինում քննության առնված և ընդունելի համարվող *գուսան* և *գռեհ* բառերը (Ա. Համբարձումյան), տալ *Աղթամար* (կղզու) անվան մեկնությունը (Ծ. Հարությունյան), խոսվում է հայ. *ծանօթ* / *ճանաչեմ* ձևերի մասին, որն այնքան էլ նորություն չէ (Ռ. Վիեդաս), անդրադարձ կա *արմեն* ցեղանվան (Ա. Պետրոսյան), հայ. *երկի(ք)* և *երկիր* բառերի քննությանը (Ա. Տրոֆիմով): Մի մասն էլ նվիրված է լեզվական առանձին երևույթների. ածանցավոր *ու* տիպի բայերը հայերենում և հնդեվրոպական մյուս լեզուներում (Վ. Ղազարյան), գրաբարի *ազին* ածանցի մասին (Ա. Կոռն և Բ. Օլսեն), ներկա ժամանակի *չի* հիմքի պատմական քննություն (Պ. Քոչարով), հին հայ. *լինիմ* / *եղէ* և հին

հուն. *γίγνομαι* ձևերի գործածությունը ավետարաններում (Ի. Տինտի), հնաբանությունները հայերենի բարբառներում և հնդեվրոպական լեզվաբանությունը (Մ. Ֆրից) և այլն:

բ) Հայերենի քերականական կառուցվածքի ուսումնասիրություն: Այս խմբի զեկուցումները մեծ մասամբ ունեն ավանդական լեզվաբանությանը հատուկ մեթոդիկա, երբեմն թողնում են նորագույն գրականությանը ոչ լիովին տեղյակ լինելու տպավորություն: Կան ուշագրավ զեկուցումներ՝ նվիրված ժամանակակից հայերենի հոլովական ձևաբանությանը և որոշյալ առմանը (Լ. Եղիազարյան), կապերի հետ *ը/ն* հոդի գործածությանը (Վ. Կռիլովա), հին հայերենի վաղակատարի գործածությանը (Վ. Պլունցյան, Բ. Սեմյոնովա), նույն ժամանակի իմաստային տեղաշարժի յուրահատկություններին (Է. Պոնոմարյովա), գրաբարի վաղակատարին՝ պատմական-համեմատական դիտանկյունից (Ջ. Սկիրու), բառի ձևային վերլուծության մի քանի հարցերի (Ա. Սանթոյան), հայերենի որոշ շաղկապներին (Վ. Խուրշուդյան), արևմտահայերեն և արևելահայերենի կապային կառույց + գոյական կաղապարով բառակապակցություններին (Ա. Մուրադյան, Օ. Խաչատրյան) և այլն:

գ) Հայերեն բնագրի (տեքստի) քննություն: Հայտնի է, որ հայերեն ոչ բոլոր գրական հուշարձաններն

են ըստ ամենայնի ուսումնասիրված, հատկապես ձեռագրերի լեզվի տեսանկյունից: Նման աշխատանքի ձեռնամուխ լինելն ինքնին դրվատելի է: Ուշագրավ զեկուցումներ են նվիրված եղել հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվին (Խ. Հարությունյան), Գր. Տաթևացու «Գիրք հարցմանց»ի բառապաշարին՝ ի համեմատություն «Նոր հայկազյան բառարանի» (Մ. Գրիգորյան), «Սասունցի Դավիթ» էպոսի պոեմի խորքային մակարդակի պարզաբանմանը (Ս. Զուլյան), Գրիգոր Մագիստրոս Պահլավունու «Թղթերի» լեզվին՝ իբրև ուշ հունաբան դպրոցի նմուշ լինելու հարցին (Թ. վան Լինտ), Դադիվանքի խաչքարային արձանագրության համատեքստում մի ծածկագրի վերծանմանը (Հ. Պետրոսյան), Կիլիկի և Սիրետի նորահայտ և սրբագրված տապանաքարերին (Տ. Սարգսյան), նվագարանների անվանումների հայերեն թարգմանությունը Սաղմոսներում (Գ. Մխիթարյան) և այլն:

դ) Հայերենի բարբառների քննություն: Մա առանձին բաժին է գիտաժողովի ծրագրում: Ջեկուցումները ցույց են տալիս, որ ակադ. Գ. Ջահուկյանի հայտնի «Ներածություն»-ից հետո տեղի են ունենում բարբառներին նվիրված ավելի մասնավոր քննարկումներ: Արդյունքը բավականին նկատելի է, թեև մեթոդիկայի տեսանկյունից այն դեռևս մնում է ավանդականի սահմաններում, թեկուզ այն, որ հա-

յերենի բարբառների հնատիպության (արխաիկության) վերաբերյալ այսօր կան բոլորովին նոր հարցադրումներ: Զեկուցումներ են նվիրվել *աղոթք* հասկացության բարբառային դրսևորումներին (Հ. Մեսրոպյան), *տուն* և *տնտեսություն* իմաստային դաշտի բարբառային բնութագրին (Հ. Խաչատրյան), բարբառների եղանակային և ժամանակային ձևերի գործածության բազմիմաստության (Գ. Գեվորգյան), այսպես կոչված՝ «տրանսիլվանյան» հայերենին իբրև բարբառային երևույթ (Բ. Ժիգմունդ), բարբառների ներքին զարգացումը՝ հնաբանությունների և նորաբանությունների նկատառումով Հ. Մարտիրոսյան), ՀՀ-ում գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցին (Գ. Մկրտչյան), Մեհտիշենի բարբառի տեղորոշմանը հայերենի բարբառների շարքում (Ա. Սարգսյան) և այլն:

ե) Հայերենի և այլ լեզուների զուգադրական տիպաբանություն: Որոշ զեկուցումներ նվիրված են եղել նշված թեմատիկային: Քննության առարկա են եղել հայերենում, գերմաներենում և ռուսերենում անորոշի զարգացման միտումները (Ա. Գազինյան), ձևակազմական ձևային, մենանդամ շարույթի և ընդհանուր ասույթի գործառական համասեռությանը (հայերենի. ռուսերենի և անգլերենի տվյալներով (Դ. Գյուլզատյան), խոսակցական հայերենի և թուրքերենի դերբայական ստորադասականների զուգա-

դրական տիպաբանություն, այսպես կոչված՝ կոնտակտային գործոնի սահմանագծման փորձ (Ա. Դոնաբեդյան-Դեմոպոլոս), Մաշտոցը «Բնածին» հնչյունաբան լիներու հարցը (Ս. Մուրավյով), հեղինակի հորջորջմամբ՝ հայկական գաղտնի լեզուների և նրանց այբուբենների հարցը (Ջ. Ռասել), բոշաների լեզուն (*շոմավրեն*) (Ա. Սկալա):

զ) Հայերենի լեզվառճական քննություն: Այս թեմատիկայով եղել է մեկ-երկու զեկուցում: Մասնավորապես քննվել են հայ սիմվոլիստների բանաստեղծությունների լեզուն (Տերյան-Չարենց համատեքստում) (Բ. Զուլումյան), ժամանակակից հայ արձակի գեղարվեստական լեզվի առանձնահատկությունները (Ա. Մամիրջյան) և այլն:

Ժողովածուն, ցավոք, գերծ չէ խմբագրական-հրատարակչական թերացումներից:

1) Որոշ տերմիններ, անվանումներ հայերենում թարգմանված են ոչ ճիշտ, գործածված են սխալ ձևով. *խուռնաբարտական* (փիլ. *խուռնաբարտական*), *հասկացություն* (փիլ. *ըմբռնում*), *աորիստային ձև* (փիլ. *աորիստի ձև*), *փրյուգերեն* / *ֆրուգական* (փիլ. *փրյուգերեն* / *փրյուգական*), *մեքենայական* (փիլ. *մեքենական*), *վաղակատարային ձև*՝ *նշանակություն* (փիլ. *վաղակատարի ձև*՝ *նշանակություն*), *Կիլիկիայի նորահայտ տապանագիր* [փիլ. *Կիլիկի նորահայտ*

տապանագիր (բնակավայր Արևմրտյան Ուկրաինայում)], շտկված (փխ. վերծանված) և այլն:

2) Հայտնի լեզվաբանների առունների ոչ ճիշտ նշանակում՝ *Խենպ* (փխ. *Հենպ*), *Համբերտրինի* (փխ. *Համբերտրի*), *Գուսեյնով* (փխ. *Հուսեյնով*), *Կազարյան* (փխ. *Ղազարյան*), *Քլաքսոն* (փխ. *Կլակսոն*), *Թ. վան Լինթ* (փխ. *Լինտ*) և այլն:

3) Ուղղագրական անճշտություններ. *արիալային* (փխ. *արեալային*), *պատմաստուգաբանական* (փխ. *պատմա-ստուգաբանական*), *երկինացություն* (փխ. *երկինաստություն*), *ձեկույթ* (փխ. *ձնույթ*), *սյուժեի* (փխ. *սյուժեի*), *վերակառուցում* (փխ. *վերականգնում*) և այլն:

Հայ լեզվաբանության IX միջազգային գիտաժողովը կարևոր ձեռքբերում է հայերենի գիտական ուսումնասիրության բնագավառում:

«Ջահուկյանական ընթերցումներ», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 224 էջ: Ժողովածուն պարունակում է ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերը (Երևան, 2015 թ., հունիսի 4-5), ունի երկու բաժին՝ բուն զեկուցումներ և հաղորդումներ:

Ըստ թեմատիկայի դրանք միանգամայն տարբեր զեկուցումներ են, որոնք ժողովածուի մեջ ներկայացվում են հոդվածների

տեսքով: Որոշ պայմանականությամբ հոդվածները կարելի է ներկայացնել մի քանի բաժնով:

ա) Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր:

Ստուգաբանական և բառաքնական դիտարկումներ թեմատիկայով անդրադարձ է եղել հայ. *(ա)ռա(կ/ծ)* (< հե. *reg'* «ասել. խոսել») բառարմատին՝ իր *առակ // առած* տարբերակներով (Վ. Համբարձումյան), հայ. *փարաւոն* բառի իմաստային և ծագումնային հարցին (Լ. Հովհաննիսյան), քննվել են գրաբարի «զգայական ընկալումներ» իմաստային խմբի բայերը (Ն. Սիմոնյան), ինչպես նաև փորձել են պարզել հայոց լեռնանուններին վերաբերող վիճահարույց մի քանի հարցեր (Ն. Դիլբարյան), «ոտնաման» և «կաշի» նշանակող բառերի ծագումը (Հ. Զաքարյան):

բ) Ընդհանուր, զուգադրական և ճանաչողական լեզվաբանության հարցեր: Հոդվածների հեղինակներն անդրադարձել են հայերենի լեզվաբանական տերմինահամակարգերում միօրինակության միտումներին (Ա. Գալստյան), խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի բայերի գործածությանը բարեկիրթ խոսքի կառույցներում (Ռ. Դոխոյան), ընդհանուր լեզվաբանական նորաստեղծ ուսերեն տերմիններին՝ Գ. Ջահուկյանի «Լեզվի համընդհանուր տեսություն» աշխատության մեջ (Մ. Սարգսյան), բառային շեշտի դրսևվորմանը շվեդերենում և հայերեն-

նում (Ա. Խաչատրյան), մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության համալրման ներքին աղբյուրներին (Հ. Պետրոսյան):

զ) Արդի հայերենի կառուցվածքի հարցեր: Ի տարբերություն նախորդ երկուսի՝ այս բաժնի հոդվածները քիչ են: Ընդամենը երկու հոդված՝ նվիրված արևմտահայերենի երկրաբառներին (Ռ. Թոխմախյան և գրական արևելահայերենի հնչերանգային ուղղախոսության ուրվագծմանը (Դ. Գյուլգասյան):

դ) Հայերենի բարբառային նյութի քննություն: Ամենից առաջ նկատենք, որ հայ բարբառների ուսումնասիրությունը անընդմեջ եղել է լեզվի ինստիտուտի գիտական աշխատանքների տարեկան պլաններում: Բարբառագիտական ատլասի ստեղծման հույսով տասնամյակներ շարունակ հավաքվել է հսկայական նյութ, որը գրանցվել է կա՛մ բարբառախոսների ձեռքով, կա՛մ ինստիտուտի բարբառագետների ամենամյա գործուղումների ընթացքում: Ինստիտուտի բառարանագրության բաժնի մի խումբ փորձառու աշխատակիցներ տարիներ շարունակ ձեռնամուխ են եղել բարբառային բառերի բառարանի ստեղծման գործին, որը մի քանի հատորով լույս տեսավ միայն վերջին ճամանակներս: Այսօր բարբառագետները կանգնած են իրենց իսկ հավաքված նյութի թվայնացման, նոր տիպի տառադարձման գործի առաջ:

Այնուհետև, կան բարբառների առանձին իմաստային (թեմատիկ) խմբերի վերաբերյալ առանձին ուսումնասիրություններ (մենագրություններ, հոդվածներ և այլն): Նկատելի է, որ այս ոլորտում աշխատանքները շարունակվում են, մանավանդ որ գործի շարունակողներ են մասնագետների երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ: Ուստի պատահական չէ, որ գիտաժողովում ևս եղել են զեկուցումներ, որոնք, իբրև համապատասխան նյութի ուշագրավ քննություն, ընդգրկված են սույն ժողովածուի մեջ:

Ըստ այդմ հեղինակներն անդրադառնում են Բայազետի բարբառում տեղ գտած ռուսերեն փոխառություններին (Վ. Կատվայան), նոր սնկատեսակների բարբառային անվանումների ձևավորմանը Լոռիի տարածաշրջանում (Ա. Ամիրխանյան), *երեցկին* հասկացության բարբառային արտահայտություններին (Հ. Մեսրոպյան), *բնակարան, տուն, կահ-կարասի* իմաստային (թեմատիկ) խմբի բառանուններին՝ Գեղարքունիքի մարզի խոսվածքներում (Հ. Խաչատրյան), *տուն* և *հյուղ* հասկացությունների բառանունների բարբառային բնութագրմանը (Հ. Խաչատրյան), բայի երկրորդական վերլուծական ժամանակներին Կիլիկիայի և Անտիոքի բարբառային միավորներում (Ժ. Միքայելյան), Վանի բարբառում գործածվող դերանունների իմաստաբանությանը (Ջ. Բառնասյան), Համշենի բարբառի Խովայի խոս-

վածքի որոշ յուրահատկություններին (Ս.Վարդանյան) և այլն:

ե) Հայոց լեզվի պատմության հարցեր: Հայերենը, իբրև գրավոր մեծ ժամանակաշրջանով հայտնի լեզու, ունի պատմության տարբեր շերտեր, որոնց անդրադառնալը մեր օրերի հայերենագիտության խնդիրներից է: Իսկ թե որքանով է ներկայումս հնարավոր ուսումնասիրություններ ծավալել այդ բնագավառում, բավականին տարակուսելի է: Վերջին տարիներին երևան եկած գիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, թե որքան աշխատանք կա ձեռնարկելու այս բնագավառում: Լեզվի ինստիտուտի և գիտական այլ հաստատությունների մասնագետների ուշադրության առարկա են նաև այս թեմատիկային վերաբերող կարևորագույն հարցերը:

Գիտաժողովում զեկուցումներն այս իմաստով բավականին հատկանշական են: Ուշադրության առարկա գրեթե յուրաքանչյուր հարցի քննարկում, կարելի է ասել, նպաստում է այդ բնագավառի առաջընթացին: Արծարծվել են այնպիսի հարցեր, ինչպիսին են՝ ածականների բաղդատականության կարգի դրսևորումը դասական գրաբարում (Լ. Հովսեփյան), 18րդ դ. նույնանիշների ձեռագիր բառարաններում տեղ գտած բառիմաստային փոփոխությունները (Ն. Հովհաննիսյան), միջին հայերենի գրավոր տարբեր աղբյուրների միջոցով ավանդված եվրոպական

փոխառությունները (Ս. Գրիգորյան, Ն. Պարոնյան), 17-րդ դ. ձեռագիր քերականական աշխատությունների լեզվաբանական տերմինները (Տ. Մանուկյան), միջնադարյան հայ հոգևոր երգարվեստում *կցուրդ*, *կացուրդ*, *կոնդակ* անվանումները (Գ. Մխիթարյան), հայերենում օտար բառային բաղադրիչով հարադրավոր բայերի գործածությունը (Ն. Պողոսյան), բնիկ և փոխառյալ հայկական անձնանուններում ածացների ու ածանցակերպների գործածական արժեքը (Ա. Խաչատրյան), կիլիկյան հայերենի հին ֆրանսերեն փոխառությունները (Ա. Միքայելյան) և այլն:

զ) Բնագրի լեզվի քննության հարցեր: Հայերենի ուսումնասիրության ոլորտում նույնպես վերջին տարիներին ուշադրություն է դարձվում բնագրին՝ իբրև գրավոր հաղորդակցման մի դրսևորման: Այս գիտաժողովում ևս կարդացվել են նման զեկուցումներ, որոնցում քննվել են ցեղանունների կրոնական-դավանաբանական նշանակությունները հայ մատենագրության մեջ (Հ. Գևորգյան), Գր. Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի կրոնական և ծիսակարգային հասկացությունների բառակազմական կաղապարները (Ս. Գրիգորյան), *հիվանդություն* հասկացության բառային դրսևորումները միջնադարյան բժկարաններում (Հ. Թադևոսյան) և այլն: Այս թեմատիկային են առնչվում բանա-

հյուսական բնույթի այն աշխատանքները, որոնց նյութը հայթայթում են իրենք իսկ ուսումնասիրողները: Այդպիսին է, օրինակ, զավեշտի հենքով երգիծական մանրապատումների լեզվական իրականությունների քննությունը, որն ունի, այսպես կոչված միջգիտակարգային նշանակություն՝ ազգագրության և լեզվաբանության ոլորտների համատեղմամբ (Ա. Սարգսյան):

«Ջահուկյանական ընթերցումներ» ժողովածուի վերջում (էջ 215-224) տեղ է տրված նրա՝ 2006-2015 թթ. լույս տեսած հատորներում ընդգրկված հոդվածների և հաղորդումների մատենագիտությունը (կազմող ինստիտուտի աշխատակից Ա. Պողոսյան), որը միանգամայն արժանի է դրվատանքի:

Այս առիթով նկատենք, որ նման ձեռնարկումը կարևոր է հայերե-

նագիտության պատմության տեսանկյունից, և ավելացնենք, որ հայերենի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքների (առաջին հերթին՝ ատենախոսությունների՝ սկսած 1940-ական թթ.) մատենագիտությունը կա օտար լեզվով լույս տեսած հանդեսներում [“Kratylos”, 1972 (1974), 17, էջ 168, “Annual of Armenian linguistics”, 1981, vol. 2, էջ 6569]; Այս գործի կարևորությունը ենթադրում է շարունակություն, այն է՝ կազմել ոչ միայն հայերենագիտական (տարբեր լեզուներով լույս տեսած) ամսագրերի և ժողովածուների, այլև առանձին հեղինակների, առհասարակ՝ լեզվի ինստիտուտի (ըստ հնարավորին նաև մյուս կենտրոնների) գիտական հրապարակումների մատենագիտական ցանկերը:

Հանդիպում երիտասարդ լեզվաբանների հետ

2015թ. փետրվարի 2-ին ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ երիտասարդ գիտաշխատողների սեմինար-հանդիպում: Ինստիտուտի տարբեր բաժինների կրտսեր գիտաշխատողները ներկայացրին իրենց կատարած պլանային աշխատանքները, քննարկեցին առաջիկա տարվա անելիքները և խընդիրները:

Նախատեսվում է ավանդական դարձնել նման հանդիպումը: Ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը անդրադարձավ գիտական աշխատանքների հիմնական ուղղություններին, բարձր գնահատեց երիտասարդ գիտաշխատակիցների հետազոտական նախաձեռնությունները, արեց մի շարք առաջարկություններ, տվեց որոշակի հանձնարարություններ:

Մասնավորապես երիտասարդ գիտաշխատակից Վ. Խաչատրյանին առաջարկվեց ամփոփել նախորդ տարվա կատարած հետազոտությունը և առաջիկա տարվա ընթացքում ներկայացնել հրատարակության: Մ. Սարգսյանին հանձնարարվեց նախապատրաստվել անցկացվելիք սեմինար պարապ-

մունքին՝ հանդես գալու Գ. Զահուկյանի ընդհանուր լեզվաբանական տեսությանը վերաբերող տերմինաբանության թեմայով զեկուցմամբ:

Նշվեց, որ երիտասարդները պետք է վառ պահեն գիտության լույսը, հետևեն գիտական խոսքին, ապահովեն գիտական պատշաճ մակարդակ: Աշխատակիցներին առաջարկվեց հանդես գալ նոր նախաձեռնություններով, ավելի մեծ ակտիվություն ցուցաբերել գիտաժողովներում և տեսական սեմինարներին, մասնակցել ինստիտուտի գիտական նստաշրջաններին, տարվա ընթացքում հրապարակել երկուսից ոչ պակաս գիտական հոդված:

Քննարկվեցին նաև կազմակերպական բնույթի որոշ հարցեր՝ կապված առաջիկա գիտաժողովների, հատկապես «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի» վերաբերյալ:

Գիտական աշխատողների մասնագիտական գործունեության գնահատում

Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ կառավարության «ՀՀ գիտական

կադրերի որակավորման կարգը և գնահատման չափորոշիչները հաստատելու մասին» 2001 թ. հոկտեմբերի 3-ի N 935 որոշման համաձայն՝ 2015 թ. հունվարի 21-ից 29-ը ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում անցկացվեց գիտաշխատողների ատեստավորում իրենց զբաղեցրած պաշտոններում:

Որակավորման հանձնաժողովին ինստիտուտի գիտաշխատողները ներկայացրին 2010-2014 թթ. հրատարակած գիտական աշխատանքների ցանկը, գրավոր հաշվետվություն անցած հինգ տարիների գիտական գործունեության վերաբերյալ (հրատարակություն, թեմայի կատարում, ընդդիմախոսություն, գրախոսություն, աշխատանքների խմբագրում, գիտաժողովների մասնակցություն, գիտական սեմինարների անցկացում և այլն):

Որակավորման հանձնաժողովը ներկայացրեց իր եզրակացությունը, որի հիման վրա իրենց զբաղեցրած պաշտոններում վերահաստատվեցին (որակավորվեցին) ինստիտուտի յոթ բաժինների քառասունհինգ գիտաշխատակիցներ:

Որակավորման արդյունքները գոհացուցիչ են: Արդյունքները հաստատվեցին հունվարի 30-ին կայացած գիտական խորհրդի նիստում:

**Մայրենի լեզվին նվիրված
գիտաժողով՝
«Մեր լեզուն մեր հայրենիքն է»
խորագրով**

Փետրվարի 20-ին ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում սկսվեց «Մեր լեզուն մեր հայրենիքն է» խորագրով գիտաժողովը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը: Նա շնորհավորեց բոլոր ներկաներին Մայրենի լեզվի օրվա առթիվ՝ նշելով, որ այս տարի Մայրենիի օրվան նվիրված միջոցառումները իրականացվում են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում: Սա նոր երանգ է հաղորդում այս միջոցառմանը, քանի որ ցեղասպանության հետևանքով եղել է հարված նաև լեզվի նկատմամբ: Մենք չենք կարող առաջին հերթին մեծագույն ցավով չարձանագրել հայերենի շուրջ երեք տասնյակ բարբառների կորուստը: Այլևս գոյություն չունեն Ակնի, Խարբերդի, Երզնկայի, Տիգրանակերտի, Շապին-Գարահիսարի, Վանի, Հաջընի, Սեբաստիայի, Մարաշի և այլ բարբառները, որոնք եղել են հայերենի յուրահատուկ դրսևորումներ,

մեր ժողովրդի լեզվական ստեղծագործական ու ազգային մտածողության ինքնատիպ արտահայտություններ: Եվ եթե այսօր մեր երիտասարդ սերնդից շատերը չեն խոսում հայերեն, դա ևս ցեղասպանության հետևանք է, հավելեց գերատեսչության ղեկավարը:

Նշվեց, որ 2015թ. ՀՀ սփյուռքի նախարարության գերակա խնդիր է հռչակվել հայոց լեզվի տարածումը և երիտասարդության շրջանում հայերենի իմացության ընդլայնումը: Նշվեցին նաև այն կարևորագույն քայլերը, որոնք իրականացնում է գերատեսչությունը Սփյուռքում մայրենի լեզվի պահպանման և տարածման ուղղությամբ՝ մասնավորապես անդրադառնալով «Սփյուռք» ամսագրին, «Արի տուն» ծրագրին, որոնց շրջանակներում հայ պատանիները և երիտասարդները, այցելելով հայրենիք, իրենց յուրաքանչյուր առավոտը սկսում են մայրենի լեզվի դասընթացով, ունենում են հայերենով շփվելու բացառիկ հնարավորություն: Նա կարևորեց նաև նախարարության էլեկտրոնային գրադարանի ստեղծումը, որը մեծ դեր ունի մայրենի լեզվի և առհասարակ՝ հայության պահպանության գործում:

Այնուհետև, Հ. Հակոբյանը նշեց հետևյալը. «Մենք մշտապես կարևորել ենք Սփյուռքում մեկօրյա դպրոցների ստեղծումը, և ուրա-

խությամբ պետք է նշեմ, որ անցած վեց տարիների աշխատանքի շնորհիվ տարբեր համայնքներում կարողացել ենք շուրջ 600 մեկօրյա դպրոց հիմնել: Մեծ նվաճում էր, որ կարողացանք հայոց լեզվի ուսուցման, այսպես կոչված, հեռուստադպրոց ստեղծել, որը հեռարձակվում է հանրային հեռուստաընկերության արբանյակային հեռարձակմամբ»: ՀՀ սփյուռքի նախարարը խոսեց նաև Հայաստանում բնակություն հաստատած Սիրիայից և Իրաքից եկած մեր հայրենակիցների մասին, որոնց ինտեգրումն առավել արագ և ճիշտ իրականացնելու նպատակով նախարարությունը նրանց համար կազմակերպում է մայրենիի ուսուցման արագացված դասընթացներ:

Իր խոսքի ավարտին նախարար Հ. Հակոբյանը երիտասարդությանը կոչ արեց հատկապես Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին իրենց կարևորագույն և ազգանպաստ գործը համարել հայերեն սովորելը, մայրենի լեզվով հաղորդակցվելը, և որ Մայրենի լեզվի օրը յուրաքանչյուրի համար լինի ոչ միայն փետրվարի 21-ը, այլև տարվա բոլոր օրերը: Վերջում ՀՀ սփյուռքի նախարարը շնորհակալություն հայտնեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությանը, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտին՝ ավանդույթ դարձած Մայրենի լեզվի օր-

վան նվիրված այս գիտաժողովի կազմակերպմանն աջակցելու համար:

ՀՀ ԳԱԱ անունից ողջույնի խոսքով հանդես եկավ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտողար Յու. Սուվարյանը: Նա մեծ գոհունակությամբ նշեց, որ ՀՀ սփյուռքի նախարարությունը չի բավարարվում միայն այս գիտաժողովի կազմակերպմամբ և Մայրենի լեզվի օրվա շրջանակներում մշտապես իրականացնում է այցելություն Մաշտոցի շիրիմին, ձեռնարկում լեզվական առնչություններին վերաբերող տարբեր միջոցառումներ: Յու. Սուվարյանը նշեց, որ համաշխարհայնացման (գլոբալացման) մեր ժամանակներում առաջ են գալիս նոր խնդիրներ, որոնց լուծման ճանապարհին առաջանում են նոր ընթերցումներ և հասկացություններ, որոնց համար անհրաժեշտ է լինում կիրառել համապատասխան տերմիններ և տերմինային անվանումներ, և դրանց հայերեն համարժեքների ստեղծումը պետք է լինի համակարգված, հայերենին հարազատ ձևերով: Նա առաջարկեց ստեղծել հայերենի համակարգման բարձրագույն խորհուրդ:

«Հայրենիք և լեզու» թեմայով զեկուցում կարդաց Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը: Նա նշեց, որ

ինչպես նախորդ երկու, այնպես էլ այս գիտաժողովի նպատակն է ոչ միայն արժևորել և գնահատել մայրենի լեզվի դերը հայեցի հոգեկերտվածքի, մտածողության, աշխարհըմբռնման ձևավորման, հայագի ինքնության, մշակութային ինքնատիպության զարգացման ու պահպանման, հայությանը միավորելու, հայոց պետականության և ինքնիշխանության պահպանման գործում, այլև արծարծել ու բարձրացնել լեզվաքաղաքականությամբ, լեզվի գործառությանն ու կանոնարկմանը, ուսուցմանն ու ուսումնասիրությանը վերաբերող տարաբնույթ հարցեր, որոնք կարող են հետագա մասնագիտական քննարկումների առարկա և առկա խնդիրները լուծելու խթան դառնալ:

Անդրադառնալով շուրջ երեք տասնյակ անհետացած բարբառների խնդրին՝ Վ. Կատվալյանը ավելացրեց, որ եթե մի քանի տարի առաջ դեռևս կարելի էր այդ բարբառները ինչ-որ չափով հավաքել եղենից մագապուրծ եղած բարբառակիրներից, ապա ներկայումս այդ հնարավորությունն ավելի ու ավելի սահմանափակ է դառնում: Նա նույնպես նկատեց, որ լեզվի գրական նորմավորումը և հետագա զարգացումը առավել արդյունավետ կլինեն պետական համակարգող կենտրոնի առկայությամբ, որ-

պիսին կարող է լինել հայերենի բարձրագույն խորհուրդը:

«Ավ. Իսահակյանը և հայոց լեզուն» թեմայով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Ավ. Իսահակյանը՝ վերջում հիշեցնելով մեծանուն գրողի խոսքերը. «Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ սովորում, հասկանում, հիշում...»:

Լեզվի պետական տեսչության պետ Ս. Երիցյանն անդրադարձավ հրապարակային գրվածքներին առնչվող հիմնախնդիրներին, ավելի կոնկրետ՝ ազդագրերին, հայտարարություններին, որոնց զգալի մասում հաճախ սպրդում են լեզվական անհարիր ձևեր և ձևակերպումներ, և դրանք այլ բան չեն, քան աղավաղումներ, ոտնձգություն մայրենի լեզվի նկատմամբ: Իսկ ՀՀ գրողների միության նախագահ Էդ. Միլիտոնյանի ելույթը վերաբերում էր հայոց նորօրյա բանաստեղծական խոսքի գեղարվեստական, ոճական յուրահատկություններին:

Բավականին հետաքրքիր գեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Դոլուխանյանը՝ անդրադարձավ բելգիացի հայագետ Ֆելիքս Նևի՝ հայոց լեզվի վեաբերյալ ունեցած բանասիրական և գիտական գնահատումներին, շեշտելով, որ եվրոպական հայագիտությունը այսօր ևս մեծ հետաքրքրություն է հանդես բե-

րում հայերենի նկատմամբ և ըստ պատշաճի գնահատում է այն:

Պրոֆ. Ս. Դանիելյանը իր գեկուցման մեջ անդրադարձավ գրական արևմտահայերենին՝ վերաբերող առկա տազնապներին՝ նշելով, որ անհրաժեշտ է նոր գրական հայերենի այդ տարբերակին նույնպես տալ պետական լեզվի կարգավիճակ, ստեղծել հայերենի միասնական պետական և համահայկական խորհուրդ, որ կունենա արտակարգ լիազորություններ և կկարգավորի արևմտահայերենի ուղղագրական վիճակը, առհասարակ՝ կտա լեզվական կնճռոտ խնդիրների լուծումը:

Պրոֆ. Յու. Ավետիսյանը ևս խոսեց արդի հայերենի գիտական ուսումնասիրության գերակա ուղղությունների մասին, իսկ պրոֆ. Ռ. Սաքապետոյանը հանդես եկավ «Արևմտահայերենն անհետացող լեզու չէ» գեկուցումով: Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող Ս. Տիոյանի «Արևմտահայերենի զարգացման հիմնական ուղղությունները» վերնագրով գեկուցումը վերաբերում էր արևմտահայերենի բաժնում կատարված և կատարվող աշխատանքներին, ընդ որում խոսք եղավ նաև իրենց հրատարակած գրքերի, հրատարակման գործընթացում գտնվող «Արևմտահայերենի գործնական բառարանի» մասին:

Դոց. Դ. Գյուրջինյանի զեկուցման թեման էր «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի արտացոլումը հայերենի բառապաշարում», դոց. Հ. Սուքիասյանը խոսեց Հայոց ցեղասպանության հետևանքով հայոց լեզվի կրած կորուստների մասին, նույն թեմային ի մասնավորի անդրադարձավ նաև լեզվաբան Հ. Զաքարյանը:

Մասնակիցների համար ուշագրավ անակնկալ եղավ այն, որ Հ. Սուքիասյանն իր զեկուցումից հետո ամբիոնի մոտ հրավիրեց բժշկական համալսարանի արաբ, պարսիկ և հնդիկ ուսանողներին, որոնք բավականին գրագետ, միաժամանակ իրենց մայրենի լեզվի շեշտադրմանը մոտ հայերենով հիացմունք պատճառեցին ներկաներին, միաժամանակ մեծ սիրով խոսեցին հայոց լեզվի մասին, շեշտեցին, որ Հայաստանում իրենց ավելի վստահ և ընդունված են զգում հայերենը սովորելուց հետո: Նրանք ասմունքեցին հայ մեծանուն բանաստեղծների հայտնի այն ստեղծագործություններից, որոնք նվիրված են մեր լեզվին:

Թեմատիկ զեկուցումներով հանդես եկան մի շարք այլ ճանաչված լեզվաբաններ, բանասերներ:

Ամփոփելով աշխատանքները՝ գիտաժողովի մասնակիցները կազմեցին հայտարարություն՝ կոչ անելով սիրել, պահպանել, գործածել,

տարածել ու սերնդեսերունդ փոխանցել հայոց լեզուն՝ այդպիսով մեծագույն նպաստ բերելով հայապահպանության գործին:

**«Արևմտահայերենը տանտիրոջ
իրավունքով պետք է իր տեղն
ունենա հայաստանյան
իրականության մեջ»**

Այդ վերնագիրն ուներ ընթացիկ տարվա մարտի 18ին մայրենի լեզվին նվիրված «Մեր լեզուն մեր հայրենիքն է» ընդհանուր խորագիրը կրող գիտաժողովի ժամանակ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանի ելույթը:

Նա մասնավորապես նշեց հետևյալը. «Բոլորիս մտահոգության առարկան գրական արևմտահայերենի վիճակն է, որն արդեն 100 տարի զրկված է միասնական գործառության ու զարգացման, հետևաբար նաև՝ կանոնարկման հնարավորություններից, բարձրագույն կրթության, գիտության լեզվի իր դերից, դպրոցական համալիր ուսուցման միջոց լինելու գործառույթից: Մենք բարձր ենք գնահատում սփյուռքահայ և հայաստանյան մտավորականության, Սփյուռքի նախարարության և հայ եկեղեցու ջանքերը՝ արևմտահայերենը պահպանելու, զորացնելու ուղղությամբ: Կարծում ենք, որ արդյունքում արևմտահայերենը պետք է իր

ամուր հենարանն ունենա մայր հայրենիքում: Արևմտահայերենը համազգային արժեք է, այն բոլորինս է և մեզ համար նույնքան հարազատ ու սովորական պետք է լինի, որքան արևելահայերենը: Չմոռանանք նաև, որ շատերս արևմրտահայ արմատներ ունենք, իսկ ներկա Հայաստանում արևմտահայ խոսքը շարունակում է գործառել Կարնո, Մշո, Սասնո, Դիադինի և այլ բարբառների տեսքով: Հետևաբար արևմտահայերենը տանտիրոջ իրավունքով պետք է իր տեղն ունենա հայաստանյան իրականության մեջ, այստեղ պետք է արմատներ ձգի, ամրապնդվի և հայրենիքից իր կենդանարար ավյունը մղի սփյուռք: Արևմտահայերենի պահպանումը և զարգացումը ոչ միայն ազգային, այլ նաև պետական նշանակություն ունեցող առաջնահերթություն է, որովհետև այն ոչ միայն ազգապահպան դեր ունի Սփյուռքում, այլ նաև աշխարհի բազմաթիվ երկրներում կատարում է լեզվական դեսպանի յուրահատուկ դեր՝ հնարավորություն ստեղծելով աշխարհում ճանաչելի դարձնել մեր մշակույթը, ազգային ինքնատիպությունը:

Հայերենի դրսևորման բոլոր տարբերակները արևմտահայ և արևելահայ գրական լեզուները, խոսակցական լեզուն և բարբառները, միասնական համակարգի անտրոհելի բաղադրիչներ են, և

այդ դրսևորումներից յուրաքանչյուրի խնդիրները ի վերջո ընդհանուր հայերենի, այսինքն՝ ՀՀ պետական լեզվի խնդիրներն են: Ուշադրության կարիք ունեն հատկապես գրական արևելահայերենի առջև ծառացած այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

1. գրական լեզվի անաղարտության պահպանումը,

2. մայրենի լեզվի ուսուցման մակարդակի բարելավումը,

3. լեզվի կանոնարկումը և զարգացումը:

Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է իրավիճակի ճիշտ գնահատում և անհրաժեշտ գործողությունների մշակում:

1. Գրական լեզվի անաղարտության պահպանման անհրաժեշտությունը հատկապես ընդգծվում է, երբ ակտիվանում են լեզվի աղավաղման միտումները: Ներկայումս լեզվի աղավաղումն արտահայտվում է լեզվական սխալների (և՛ արտասանական, և՛ բառագործական, և՛ քերականական) տարածմամբ, գրական լեզվում խոսակցական, բարբառային իրողությունների, օտար բառերի ու արտահայտությունների անհարկի օգտագործմամբ, երբեմն նույնիսկ գոեհկաբանությունների, ժարգոնային արտահայտությունների գործածությամբ:

Մեր օրերում աղավաղումների պատճառներից մեկն էլ հասարա-

կության մեջ լեզվի վերաբերյալ պատկերացումների խեղումն է, օրեցօր տարածվող այն թյուր ըմբռնումը, թե խոսակցական լեզուն ապահովում է ավելի անմիջական հաղորդակցում, և էական չէ, թե խոսքը ինչ որակ ունի, որովհետև կարևորը մտքի հաղորդումն է և հասկանալի լինելը: Եթե նման ըմբռնումը կարող է ընդունելի լինել առօրյա, կենցաղային հաղորդակցման դեպքում, ապա բոլորովին մերժելի է գրական լեզվի գործառության ոլորտներում: Այլ կերպ ասած՝ շփոթվել են լեզվի տարբեր դրսևորումների գործառական ոլորտները, և հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ հրապարակային խոսքը (գրավոր թե բանավոր) պետք է լինի համակարգված, կանոնավոր ու գեղեցիկ, հանրության համար ընկալելի և հաճելի: Կանոնավոր, բարձր և անաղարտ գրական լեզուն ճիգ ու ջանք է պահանջում, իսկ հասարակությունը մեծ մասամբ այդ առումով կա՛մ ծուլանում է, կա՛մ էլ լեզվական հարցերով զբաղվելու ժամանակ չունի:

Իրավիճակը շտկելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ձևավորել լեզվի վերաբերյալ ճիշտ պատկերացումների համակարգ, և այդ ուղղությամբ անելիքներ ունեն ինչպես գիտակրթական համակարգը, այնպես էլ հեռուստատեսությունն ու զանգվածային լրա-

տվության մյուս միջոցները, թատրոնը, կինոն և իհարկե պետական կառավարման համակարգի տարբեր օղակներ: Գրական լեզուն կարիք ունի պետական հոգածության, ուղղորդված պետական ծրագրի և քաղաքականության, որի համակարգողը և վերահսկողը կարող է լինել Լեզվի պետական տեսչությունը՝ ունենալով օրենսդրական հիմքեր և անհրաժեշտ լիազորություններ:

2. Մայրենի լեզվի ուսուցման մակարդակի

բարձրացումը կրթական

համակարգի մշտական խնդիրն է և շարունակական գործընթաց է: Ներկայումս այս խնդիրը առավել հրատապ է, որովհետև նկատելի է գրական լեզվի նորմերի գրեթե համատարած չիմացություն, թե՛ գրավոր, թե՛ բանավոր անսխալ և գեղեցիկ խոսք կառուցելու անկարողություն, որը անխտիր դրսևորվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, նույնիսկ գիտակրթական ոլորտի աշխատանքներում, գեղարվեստական խոսքում, պաշտոնական գրություններում:

Պատճառը թերևս կրթական համակարգում մայրենիի ուսուցման ծրագրերի և մեթոդների անկատարությունն է, հարցի ոչ բավարար և պատշաճ արժևորումը: Մայրենիի ուսուցումը չի կարող սահմանափակվել ոչ քերականական կանոնները յուրացնելու պահանջով և ոչ

էլ թեստերի պատասխանները գտնելու ունակությունների ձևավորմամբ: Մայրենիի ուսուցման հիմնական նպատակը չի կարող լինել սովորողներին որևէ կարգի (հատկապես՝ ընդունելության) քննության նախապատրաստումը: Միաժամանակ, մայրենիի ուսուցումը չի կարող սահմանափակվել միայն գրական արևելահայերենի դասավանդմամբ:

Մայրենիի ուսուցման հարցում որակական փոփոխության հասնելու համար հարկավոր է ձևավորել դասավանդման այնպիսի ծրագրեր և եղանակներ, որոնց շնորհիվ սովորողները լեզվական գիտելիքների հետ միասին ձեռք կբերեն անսխալ և գեղեցիկ գրական խոսք կառուցելու ունակություններ, իրենց մտքերը ճիշտ արտահայտելու և ըստ անհրաժեշտության լեզուն ճկուն գործադրելու կարողություններ: Անհրաժեշտ է, որ մայրենիի ուսուցմանը նպաստի կրթական ողջ համակարգը: Սովորողները պետք է անհրաժեշտ տեղեկություններ և գիտելիքներ ունենան հայերենի բոլոր դրսևորումների (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բարբառային հայերեն) վերաբերյալ: Ընդհանրապես, յուրաքանչյուր դասընթաց պետք է հետապնդի նաև գիտության տվյալ բնագավառում լեզվի ճիշտ գործածման հմտությունների ձևավորման և ամրապնդման

նպատակներ: Այս առումով կարևոր է նաև, որ կրթական համակարգում գործածվող ուսումնական նյութերը, դասագրքերը լեզվական առումով անթերի լինեն: Կարծում ենք՝ ցանկացած դասագիրք հրատարակվելուց առաջ պետք է ենթարկվի լեզվական փորձաքննության:

3. Լեզվի կանոնարկումը և զարգացումը մեծ կարևորություն ունեն, որովհետև միայն նորմավորված, միասնական և հարուստ լեզուն կարող է լիարժեք և հաջողությամբ բավարարել անհատի, պետության, հասարակության և ազգի լեզվական պահանջմունքները, լինել մշակութային արժեքների ստեղծման և կուտակման, պետական ու հասարակական գործունեության կազմակերպման միջոց: Այս գործընթացը նույնպես մշտական է ու շարունակական, քանի որ լեզվի բնականոն զարգացման և հասարակության մեջ տեղի ունեցած տեղաշարժերի հետևանքով միշտ առաջ են գալիս լեզվական նոր իրողություններ, որոնք կարիք ունեն գնահատման, արժևորման և համակարգման: Ներկայումս իրենց լուծմանն են սպասում ուղղագրական և ուղղախոսական, բառագործածման և տերմինաբանական, նաև քերականական բնույթի բազմաթիվ հարցեր, որոնց կարգավորումը օբյեկտիվորեն չի կարող լինել առանձին մասնագետների

կամ մասնագետների խմբերի մենաշնորհը, այդ գործընթացը չի կարող տեղի ունենալ նաև ինքնաբերաբար: Մեր օրերում լեզվական նորմերը սահմանողների դերում հայտնվել են բուհական ընդունելության քննությունների շտեմարանների հեղինակները, որոնց ըմբռնումները հաճախ կրում են մասնավոր բնույթ: Հրապարակի վրա են ուսումնական բառարաններ, ուղեցույցներ, շտեմարաններ, գիտական աշխատանքներ, որոնց հեղինակները լեզվական տարբեր իրողությունների վերաբերյալ ներկայացնում են իրենց պատկերացումները և առաջարկությունները:

Բազմակարծությունը, ինչ խոսք, նպաստում է առաջընթացին, եթե տեղի են ունենում քննարկումներ, բերվում են փաստարկներ և կայացվում հանրության համար ընդունելի որոշումներ: Եվ չնայած լեզվի զարգացմանը և նորմավորմանը իրենց նպաստը կարող են բերել ուսումնական առանձին կենտրոններ, ստեղծագործ անհատներ (ինչպես եղել է մեր պետականության բացակայության ժամանակներում), բայց պետականության առկայության պայմաններում լեզվի նորմավորումը և զարգացումը առավել արդյունավետ կլինի պետական համակարգող կենտրոնի առկայությամբ, որպիսին, մեր պատկերացմամբ, կա-

րող է լինել հայերենի բարձրագույն խորհուրդը:

Ի դեպ՝ հայերենի բարձրագույն խորհրդում պետք է ընդգրկվեն հայ նշանավոր լեզվաբաններ, հայտնի մասնագետներ, որոնք կներկայացնեն գիտակրթական ողջ համակարգը, թերևս նաև հայտնի մտավորականներ և գործիչներ (նաև՝ սփյուռքահայ), ՀՀ կառավարության ներկայացուցիչներ: Խորհրդին կից կարող են գործել խորհրդակցական խմբեր՝ ըստ գիտության, մշակույթի, տնտեսության տարբեր բնագավառների: Խորհրդի նպատակն է լինելու գրական հայերենի (նաև՝ արևմտահայերենի) կանոնարկման գործընթացի կազմակերպումն ու համակարգումը, արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցմանը, հայերենի զարգացմանը և հարստացմանը նպաստելը:

Խորհուրդը պետք է՝

ա) մշակի գրական հայերենի կանոնարկման սկզբունքները ըստ տարբեր ոլորտների՝ ուղղագրություն, ուղղախոսություն, տառադարձություն, տերմինաբանություն, քերականություն, բառապաշարի հարստացում և այլն.

բ) շարունակաբար որոշի կանոնարկման ենթակա խնդիրների շրջանակը և նախաձեռնի պարբերական մասնագիտական քննարկումներ՝ ըստ անհրաժեշտության

ներգրավելով նաև այլ ոլորտների մասնագետների.

գ) քննարկի կանոնարկման հարցերի վերաբերյալ արտահայտված տեսակետները, արված առաջարկները, վիճելի հարցերը.

դ) պարբերաբար քննարկի արևելահայերենի և արևմտահայերենի փոխհարստացման, միասնական զարգացման հարցեր.

դ) քննարկումների արդյունքում արված եզրահանգումները և որոշումները, հանձնարարելի ձևերը, բառացանկերը իր պարբերականով ներկայացնի հանրությանը.

ե) պարբերաբար բառացանկերի ձևով հրապարակի անհարկի փոխառությունների, օտարաբանությունների հայերեն համարժեքները, այլ նյութեր.

զ) իր պարբերականում շարունակաբար հրապարակի լեզվական սխալների մեկնաբանություններ, պարզաբանումներ և այլն:

Կարծում ենք՝ հայերենի բարձրագույն խորհուրդը կարող է լինել ՀՀ կառավարության հիմնական խորհրդատուն լեզվական հարցերում: Խորհրդի իրավասությունների շրջանակներում կարող է լինել նաև այնպիսի խնդիրների կարգավորումը, ինչպիսիք են հայերենի հոլովների քանակի, ուղղագրական բարեփոխումների և այլ հարցեր:

Թվում է՝ հայերենի բարձրագույն խորհուրդը կարող է լինել ՀՀ

կառավարությանն առընթեր գործող կառույց, ինչպիսին էր ժամանակին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն:

Հարգելի բարեկամներ՝ *ր, մեր լեզուն մեր հայրենիքն է*, ուրեմն եկե՛ք որդիական սիրով պահպանենք ու հզորացնենք լեզվական մեր հայրենիքը, *հայ լեզուն տունն է հայուն*, ուրեմն եկե՛ք տիրոջ իրավունքով ու հոգածությամբ շարունակ նորոգենք ու շենացնենք մեր ընդհանուր տունը»:

**Ակադ. Ս. Աբրահամյանի
90-ամյակին նվիրված
հանրապետական գիտաժողով**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում ս. թ. մարտի 26-27-ին տեղի ունեցավ մեծանուն լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով: Բավականին հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան ոչ միայն լեզվի ինստիտուտի, այլև հանրապետության տարբեր բուհերի և գիտական հաստատությունների, ԼՂՀ պետական համալսարանի մասնագետ գիտնականներ, որոնք իրենք զեկուցումներում անդրադարձան ժամանակակից հայերենի կառուցվածքին, գործա-

ռությանն ու զարգացմանն առնչվող տարաբնույթ հարցերի:

Զեկուցողները կրկին ու կրկին փաստեցին և արժևորեցին մեծ գիտնականի նրակշիռ վաստակը և գիտամանկավարժական գործունեությունը:

Ժամանակակիցների հուշերը, ինչպես նաև գիտնականին նրա կյանքի այլ կողմերից բնութագրող հետաքրքիր ֆիլմի ցուցադրությունը յուրօրինակ տպավորություն թողեցին գիտաժողովի մասնակիցների վրա: Լավ կազմակերպված գիտաժողովին Ելույթ ունեցան գիտնականի զավակներ Անահիտ և Աշոտ Աբրահամյաններ, որոնք վերջում հայտնեցին իրենց շնորհակալական խոսքը:

Հայոց եղենի 100րդ տարելիցին նվիրված միջոցառում

2015թ. ապրիլի 29-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ Հայոց եղենի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառում: Ինստիտուտի գիտաշխատողներից բացի մասնակցեցին նաև ՀՀ սփյուռքի փոխնախարար Ս. Սրապիոնյանը, ԱՄՆ Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության

նախագահ, Միչիգանի համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Գ. Բարդակչյանը, «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր Ս. Վարդանյանը:

Ելույթ ունեցողները (Վ. Կատվալյան, Ս. Սրապիոնյան, Գ. Բարդակչյան, Զ. Բառնապյան, Ս. Վարդանյան) ցավով նշեցին, որ Եղենի տարիներին, ինչպես նաև նրա հետևանքով ամսուսալի կորուստներ է կրել նաև հայոց լեզուն: Ամենամեծ վնասը եղավ այն, որ հետագա տարիներին, այլև այսօր առաջնային խնդիր է հայերենի պահպանումը, նրա շարունակական լինելն ապահովելը սփյուռքի հայության շրջանում:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի ավագ գիտաշխատող Ս. Տիոյանը ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ բաժնի աշխատակիցների պատրաստած «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում» ուսումնասիրությունը, որով, ինչպես տեղեկացվեց, սկիզբ է դրվում Սփյուռքի լեզվավիճակի համալիր ուսումնասիրության գործընթացին:

Միջոցառման մասնակիցներն ընդունեցին հայտարարության բանաձև:

ՄԵԼԱԴԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ

2015 թ. հուլիսին վախճանվեց ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Մելադա Անդրանիկի Աղաբեկյանը:

Նրա վաստակը բավականին շոշափելի է վերջին երկու-երեք տասնամյակների հայ լեզվաբանության զարգացման մեջ: Ավարտելով Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բաժինը, ասպիրանտական ուսումնառություն անցնելով լեզվի ինստիտուտում՝ ակադ. Գ. Զահուկյանի գիտական ղեկավարությամբ նա մասնագիտանում է հայերենի համեմատական ուսումնասիրություն մեջ: Հետագայում այդ բնագավառում հասավ զգալի հաջողությունների՝ քննելով տարածքային լեզվաբանության, պատմական բարբառագիտության, հայ-իտալական և հայ-ուրարտական լեզվական առնչությունների ուշագրավ հարցեր:

Մ. Աղաբեկյանը մասնագիտացել էր հնդեվրոպական լեզուների տարածքային (արեալային) ուսումնասիրության մեջ՝ գրելով «Հայ-իտալյան բառային զուգաբանություններ» թեմայով թեկնածուական ատենախոսություն:

Նա գրեց նաև մի շարք ծավալուն աշխատանքներ, որոնք լույս տեսան տարբեր ժողովածուներում՝ «Հայ-իտալյան բառային զուգաբանություններն» (Հայերենի համեմատական քերականության հարցերն, պրակ 1, Ե., 19), «Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր» («Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 2, Ե., 1998թ.), «Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն» («Հայերենի բարբառագիտական ատլաս», պրակ 3, Ե., 2010):

«Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր» աշխատության մեջ Մ. Աղաբեկյանը անդրադարձել է հայերենում

հնդեվրոպական ձայնորդների դիրքային տարբերակների արտացոլմանը, ինչպես նաև նախապատմական շրջանի բառային շեշտի բնույթի և գործառության հարցերին: Հեղինակ է գիտական հանդեսներում լույս տեսած բազաթիվ արժեքավոր հոդվածների. «Տարածքային բառագուգաբանությունների սահմանման սկզբունքները», «Հնդեվրոպական բուսանունները հայերենում», «Հնդեվրոպական *w բաղաձայնը հայերենում», «Հնդեվրոպական ձայնավոր և ձայնորդ *u-ն հայերենում», «Շեշտը և նրա հետ կապված հնչյունական փոփոխությունները նախապատմական շրջանի հայերենում», «Հնդեվրոպական *l-ի արտացոլումը հայերենում», «Ղարաբաղի բարբառի հնչությային համակարգի զարգացումը» (թեզիսներ), «Հայերենում *bh, *b, *p > ւ (վ, ու) հնչյունափոխությունը և նրա ժամանակագրությունը», «Հայերենի գլոտացած բաղաձայնների խնդիրը», «Դիտարկումներ հայերենի հնագույն փոխառությունների վերաբերյալ», «Հայերենի և հնդեվրոպական նախալեզվի կոկորդային հնչյունների աղերսի հարցը», «Հայոց լեզվի բարբառային ձեռագիր նյութերի համակարգչային մշակման խնդիրները» և այլն:

Նա հեղինակ է նաև մի շարք բառերի ծագման վերաբերյալ ուշագրավ հոդվածների, որոնք լույս են տեսել «Ստուգաբանական դիտողություններ. Ցայել», «Ստուգաբանական դիտողություններ. տանու», «Ստուգաբանական դիտողություններ Աղվանք տեղանվան վերաբերյալ», «Քարահունջ. ստուգաբանական դիտարկումներ» թեմաներով:

Մ.Աղաբեկյանը ինստիտուտի հարգված գիտնականներից էր, գիտական խորհրդի հեղինակավոր անդամ, որ նպաստավոր մասնակցություն էր ունենում գիտական հարցերի քննարկումներին, տեսական սեմինարներին:

Մ.Աղաբեկյանի հիշատակը միշտ կմնա ինստիտուտի աշխատակիցների, նրան ճանաչողների սրտերում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրական	3
ՀՈՂՎԱԾՆԵՐ	
Լ. Շ. Հովհաննիսյան, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի լեզվի մի քանի առանձնահատկությունների շուրջ (բնագիր և թարգմանություն).....	5
Վ. Գ. Համբարձումյան, Հայ-կելտական բառային զուգաբանությունների հարցի շուրջ	15
Մ.Մալեք-Մոհամմադի, Յ. Կարստի «Միջին հայերենի բառարան»-ը հայ-իրանական լեզվական ուսումնասիրության սկզբնաղբյուր	23
ԲԱՆԱՎԵՃԵՎՔՆՆԱՐԿՈՒՄ	
Ա. Լ. Սարգսյան, Ժամանակակից հայերենի շարահյուսական կապակցման մի եղանակի մասին	35
Ա. Հ. Մուշեղյան. Հայկական դատաստանագրքերի բառապաշարը միջնադարում	45
Գ. Գ. Մկրտչյան. Գեղարքունիքի մարզի խոսվածքների բաղաձայնների տարածքային բնութագիրը	53
ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ	
Յ.Յ. Ս. Վայտենբերգ (†). Հայ բարբառները և Օտունի լատիներեն-հայերեն բառարանը	64
ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	
«Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում»	79
ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	
IX Международная конференция по армянскому языкознанию: Сборник тезисов (Санкт-Петербург, “Нестор-История”, 2012, 240 с.)	85
«Ջահուկյանական ընթերցումներ» (Ակադ. Գ. Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր)	89
ԳՐՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	93
ԼՐԱՏՈՒ	105

СОДЕРЖАНИЕ

<i>От редакции</i>	3
Статьи	
Л. Ш. Оганесян. О некоторых особенностях языка “Опровержение сект” Езника Кохбаци (оригинал и перевод)	5
В. Г. Амбарцумян. К вопросу об армяно-кельтских лексических Изоглосс	15
М. Малек-Мохаммади. “Словарь среднеармянского языка” Ж. Карста – источник армяно-иранского языкового исследования	23
Дискуссии и обсуждения	
А. Л. Саркисян – Об одной синтаксической связи в современном армянском языке	35
А. Г. Мушегян. Лексика армянских судебных документов средних веков	45
Г. Г. Мкртчян. Территориальная характеристика согласных фонем говоров гехаркунического региона	53
Сообщения	
И. И. С. Вейтенберг (†), Армянские диалекты и Армянско-латинский словарь Отуна	64
<i>Рецензия</i>	79
<i>Книжное обозрение</i>	85
<i>Научная жизнь</i>	93
<i>Хроника</i>	105

CONTENTS

Editorial	3
Articles	
L. Sh. Hovhannisyan, On Some Linguistic peculiarities of “Refutation of Sects” by Yeznik Koghbatsi (the original and the translation)	5 15
V. G. Hambardzumyan, On the Armenian-Celtic Isoglossies.	
M. Malek Mohammadi, The Manuscript of J. Karst’s “Wörterbuch des Mittelarmenischen” as a Primary Source of Armenian-Iranian Linguistic Researches	23 23
Discussion	
A. L. Sargsyan, On the One Syntactic Combination of Modern Armenian ...	45
A.H. Musheghian, Lexics of Armenian Law-codices in Middle Ages	
G. G. Mkrtchyan, The Regional Characterization of Consonants in the Gegharqunig Region Dialect	53 53
Reports	
Y. Y. S. Veitenberg, Armenian Dialects and Latin-Armenian dictionary of Autun	64 79
Reviews	85
Book reviews	93
Science News	105
Chronicle	

Ի Գ Ի Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը վերստին հրատարակում է <<Լեզու և լեզվաբանություն>> հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով (դիսկետով), 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը 1.5, տառաչափը 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները՝ ռուսերեն և անգլերեն Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն միմյանց:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ միասին:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ. փոստ՝ inslang@sci.am

К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна заново издает журнал “Язык и языкознание”, первый номер которого был издан в 2003г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора (на дискете), объем- в пределах 8-10 машинописных страниц, интервал – 1,5, размер шрифта- 12, шрифт- Sylfaen (резюме на русском и английском- Times New Roman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

A C K N O W L E D G E M E N T

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh <<Language and linguistics>>magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

Լ Ե Ձ ՈՒՎԼ Ե Ձ ՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ЯЗЫКИ ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

1 (1 3)

2 0 1 5

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 674
Ստորագրված է տպագրության՝ 28.12. 2015թ.:
Չափսը՝ 70 x 100 ¹/₁₆, 7 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: